



ՎԱՐԱՐԴԱՐԻ

ԿՈՒԲՈ
ԴԵՊԱՄԵՆԵԼ

656.7
4-67

ՀՀ ԳԱԱ ԳՐԱԴԱՐԱՆ

24 SEP 20

656.7 ԿՎ
Կ-67

Վ. ԿՈՎԿԻՆԱԿԻ

ԽՈՇՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍ

ԿՈՒԲՍ
ԴԵՊԻ ԱՐԵՎԵԼՔ



Z U S M E S Z R A S
ՑԵՐԵՎԱՆ 1940

22.05.2013

24.474

Ա. ԽՈՒՅԵՎԱ.ԽԻ-ԽՈԽԻՇ ԴԵՊԻ ՍՐԵՎԵԼՔ

Այս գրքույկում պատմված և Խորհրդային Միության Հերոսներ՝ ողաչու Վ. Կոկկինակի և շառուրման Ա. Բրանդինսկու անվայրեջք թոփչքի մասին, վոր 1938 թ. հունիսին նրանք կատարեցին Մոսկվայից գեղի Վլադիվոստոկի շրջանը:

Այդ թոփչքով, վոր կատարվել է ողերեսութաբանական միանգամացն անբարենպատ պայմաններում, «Մոսկվա» սարգառնակի հերոսական անձնակազմը մի փայլուն եջ գրեց խորհրդադային ու համաշխարհային ավետարարական պատմության մեջ:


Գրական մշակումը կատարել ե Լ. Բրոնտմանը



2931

ԿՕ

Վ. ԿՈԿԿԻՆԱԿԻ
Կորս և Վոստօկ
Արմգիզ
Երևան—1940 թ.



ԱՎԻԱՑԻԱՆ ԱՅՍՈՐ

Առաջին սավառնակի կոնստրուկտորներն, իհարկե, չեյին ել կարող յենթագրել, թե ինչ կլինի նըրանց դավակի հետ 35—40 տարի հետո:

Մի ժամանակ, ոռուսական ավելացիայի գարդացման արշագույսին, առաջին թոփչքները կազմակերպվում եյին Մոսկվայի հիպոդրոմում։ Թուչում երսուս հայտնի ողաչու Ռուտոչինը։ Անտրեպրենյորի պահանջով նա իրավունք չուներ ցանկապատից ավելի բարձր թռչելու, վորպեսզի անտոմս հանդիսականները չկարողանան տեսնել սավառնակի թոփչքը։ Իսկապես ասած՝ անտրեպրենյորն իզուր եր անհանդստանում, այն ժամանակ սավառնակները դետնից բարձրանում եյին հազիվ մի քանի տասնյակ մետր։

1909 թ. Փրանսիացի ողաչու Լուի Բլերիոն լամանշի նեղուցի վրայով առաջին անդամ կալեյից թըռապի Դուվր, անվայրեջք թռչելով 35 կիլոմետր։ Այս

Համարձակ թուիչքի լուրը ցնցեց ամբողջ աշխարհը, նրա արդյունքներն ընդունվեցին, իրոք տեխնիկայի խոշորագույն նվաճումը: Բլերիոյի սավառնակի միջն արագությունը կազմում եր մի ժամում 88 կիլոմետր:

Հետագա տարիներին ավիացիան զարգացավ բավական բուռն կերպով: Բավական հստակ ուրվագծում եյին ավիացիայի կիրառման հնարավորությունները ժողովրդական տնտեսության մեջ և պատերազմում: Բոլորի համար պարզ եր, վոր սավառնակը լինելու յե թե՛ փոխադրական կարեւը միջոց և թե՛ մարտական ահարկու զե՞ս:

Համաշխարհային իմպերիալիստական առաջին պատերազմն ակներև ցուցադրեց ավիացիայի գերն իրոք մարտական միջոցի և սրա հետ միասին հզոր խթան հանդիսացավ ողանավաշխնության հետագա դարձացման համար:

Ավիացիայի զարդացման մեջ հենց ամենասկզբից պարզորոշ նշվում եյին յերեք հիմնական ճգույնը. ավելացնել թուիչքի արագությունը, հեռավորությունն ու բարձրությունը: Այս դրույթները մինչև որս ել խթանում են կոնստրուկտորների միարքը և կազմում բոլոր ողանավաշխական ֆիրմաների ու գործարանների գլխավոր հոգը:

Յերեսուն տարի առաջ լուի Բլերիոյի սավառնակի արագությունը բավարարում եր թե՛ ողաչուին և թե՛ հասարակությանը: Այժմ սավառնակները թուչում են մի ժամում 300—500 կիլոմետր արագությամբ, իսկ կոնստրուկտորներն եւ ավելի մեծ համառությամբ

աշխատում են թուիչքի արագության հետագա բարձրացման վրա:

1934 թվին իտալացի ողաչու Ֆրանչեսկո Սչելոն և Մակելի-Կաստոռլոցի» սավառնակով սահմանեց արագությունն համաշխարհային ռեկորդ— մի ժամում 709 կիլոմետր: Սա, իհարկե, չի նշանակում, թե ուրիշ սավառնակներ ել կարող են նույնպիսի արագություն գործացնել: Ֆրանչեսկո Սչելոն թռավ հիդրոինքնաթիռով, վորը հատկապես շինված եր ռեկորդ սահմանելու համար: Հիդրոինքնաթիռի վրա հաստատված գերհզոր մոտոռն աննշան ամբություն ուներ: Նա կարող եր աշխատել միայն մի քանի ժամ: Թուիչքից հետո հիդրոինքնաթիռն ու մոտոռը դրվեցին թանդարանում, վորտեղ նրանք կան մինչև որս: Ներկայիս մեքենաները շատ ավելի ամուր են, քան ռեկորդայինները, այս պատճառով ել ավելի ծանր են: Նրանք իրենց վրա կրում են զանազան սարքավորում ու սպառազինություն, վորոնք ավելացնում են մեքենաների կյուը: Ներկայիս մոտոռներն ամելի հուսալի յեն, ավելի ծանր ու պակաս զորությամբ: Սակայն սերիային մեջնաները շարունակ նվազում ե, և հեռու չեայն որը, յերբ սովորական, այսպես ասած՝ շարքային սավառնակները կթուչեն այժմ անհասանելի թվացող արագությամբ:

Արագությունն ամեն կերպ բարձրացնելու ձգությունը հասկանալի յե և որինաչափ: Քաղաքացիական ավիացիայի մեջ թուիչքի արագության մեծացումը կապահովի ճամբորդների ու բեռների ավելի արագ

վուխադրումը մի վայրից մյուսը։ Արդեն այժմ շատերն են նախընտրում ոգովել ողային հաղորդակցությամբ, իսկ մի քանի տարի հետո այդ կդառնա նույնական սովորական բան, ինչպես յերկաթուղային հաղորդակցությունն է։ Ել ավելի մեծ նշանակություն ունի արագությունը ուղղմական ավիացիայի համար։ Արագաթիոս մեքենան ավելի լավ ու ավելի արագ կըկատարի մարտական խնդիրը։ Մրան ավելի դժվար է հարվածել, քան ծանր դժվարաշարժ մեքենային։ Առանձնապես մեծ են արագաթիոս սավառնակի առավելություններն ողային մարտում։

Արագության մեծացումը ձեռք է բերվում զանազան միջոցներով։ Կոնսարուկտորները մեծացնում են մոտոռների կտրողությունը, ամեն կերպ բարելավում են սավառնակների թուիչքային հատկությունները, վերացնում են բոլոր ցցվածքները, խնամքով հարթում են բոլոր գետալները։ Փորձը ցույց է տվել, վար նույնիսկ առաջին հայացքից պարզ թվացող այնպիսի միջոցառում, ինչպես հարթ վերնակարի գործածությունը Տալաղարդածի փոխարեն, թույլ ետալիս սավառնակի՝ արագությունն ավելացնել մի ժամում մի քանի տասնյակ կիլոմետր։ Վերջին ժամանակներու ըստ կիրառում են ստացել այն շատախները, վորոնք թուիչքի ժամանակ հավաքվում են ներս։ Մրանով նույնական բարձրական մեծանում է արագությունը։

Ժամանակակից սավառնակները քիչ են նման իրենց հետավոր նախահայրերին։ Համարյա բոլոր Փիրմաներն այժմ արտադրում են՝ բոլորահոսուն (օբտեկամայի) ձևի մոնուպլաններ առանց վորեւ դուրս ցցված ժամի,

հարթ վերնակարով, թաղցրած դամվածքով, թուիչքի ժամանակ հավաքվող շասսիյով և փոփոխական քայլի պտուտակով (հատուկ կոնսարուկտցիայի սլրողելեր, վորը հնարավորություն և տալիս ողտագործելու մոտուի ամբողջ կարողությունը՝ նայած թռիչքի բարձրության)։

Զգենով բարձրացնել արագությունը, ավելացնին ավելի ու ավելի համառորեն և պայքարում ըստրատոսֆերայի (9—17 կիլոմետրից ավելի բարձր մթնոլորտային շերտի) նվաճման համար։ Նոր մթնոլորտում նվազում է ողի դիմադրությունը սավառնակի շարժմանը, մոտուի ուժն ողտագործվում է ավելի եֆեկտով և հետևաբար շարժման արտղությունը կարող է բավականաչափ մեծանալ։

Բարձրության համար մղած պայքարն ունի իր շափականց ուսանելի պատմությունը։ Բարձր թռիչքի պիոներն եր Փրանսիացի ողաչու Լատամը։ 1909 թվի ողոստոսի 29-ին, այսինքն համարյա 30 տարի առաջ, նա հասավ այն ժամանակվա համար ուեկորդային բարձրության... 155 մետրի։ Սա մարդկային հանրացնության վերջին սահմանն եր։

Լատամին հետևեց ողաչու Լամբերը։ Յերկու ամիս ել չեր անցել Լատամի թռիչքից, յերբ Լամբերը բարձրացավ 300 մետր։ Բայց Լատամը չծալեց իր թեգերը։ Մի տարվա մեջ նա կատարեց յերեք սեկուդային թռիչք ել, բարձրանալով նախ 453 մետր, ապա 1000 մետր և, վերջապես, 1910 թվի հունիսի 7-ին՝ 1384 մետր։

Անցավ մի քանի ամիս, և Փրանսիացի Լեգանյեն

Հասավ 3100 մետր բարձրության : Յերեք տարի հետո սահմանային բարձրությունը հասավ 6000 մետրի : Մթնոլորտի ավելի ու ավելի բարձր շերտերը թափանցելուն դրւելն թարձրության համար պայքարելի կնալով դժվարացավ :

1914—1918 թվերի խմաների ավագանութական պատերազմը դադարեցրեց բարձրության ռեկորդային թուչքների պաշտոնական ցուցակագրումը, սակայն նա վոչ միայն չդադարեցրեց, այլև նույնիսկ ուժեղացրեց, որեց պայքարը բարձրության նվաճման համար : Այս պատճառով անսպասելի չեր, վոր ամերիկացի Շրեդերը 1920 թվին հասավ 10093 մետր բարձրության՝ սահմանելով նոր ռեկորդ : Այս ռեկորդը չգերազանցվեց մեկ ու կես տարի, մինչեւ վոր ամերիկացի Մակ-Բեդին համարյա կես կիլոմետրով գերազանցեց նրան :

Անցնում են ամիսներ ու տարիներ : Պայքար ե մղվում արդեն յուրաքանչյուր հարյուր մետրի համար : Սկսած 1923 թվի հոկտեմբերից, յերբ ֆրանսիացի Սագի-Լեկառնը հասավ 11145 մետրի, մինչեւ ամերիկացի Չեմպիոնի թուչքը 1927 թվին, այսինքն չորս տարվա ընթացքում առաստաղը բարձրացավ միայն 565 մետր : Դարձյալ յերկու սամարի հետո ամերիկացի Եպոլլո Սուսեկն ավելացրեց այն 220 մետրով : 1930 թվին նա սահմանեց նոր ռեկորդ՝ 13157 մետր : Մի քանի տարի անց իտալացի ողաջու ՚Իոնանին բարձրացավ 14443 մետր : 1935 թվին ինժ . Ն . Պոլիկարպովի կոնստրուկցիայի «ԱԲ-3» սավանակով ինձ հաջողվեց փաստորեն գերազանցել իտալացի ողաջուի ռեկորդը՝ բարձրանալով 14575 մետր

բարձրության : Դարձյալ մի տարի անց անգլիացի Դետրեն հասավ 14843 մետրի : Այժմ ցամաքային սպանակով թուչքի բարձրության միջազգային ռեկորդը պատկանում է անգլիացի ողաջու Ալամսին՝ 16640 մետր : Աղամուը թուել է սկաֆանդրով (հատուկ ըգուես, վորը մարդուն մեկուսացնում է արտաքին միջավայրից) :

Այս բոլոր ռեկորդային վերելքները կատարվում ենին բեռ չունեցող սավառնակով : Յուրաքանչյուր թըստիչքից առաջ մեքենաները չափաղանց թեթևացվում ենին : Ողաջուներն իրենց հետ վերցնում ենին վառերանյութի միայն այնքան պաշար, վորպեսզի առատապին հասնելով՝ անհապաղ վերադառնան դետին :

Հանուն ինչի՞ յե պայքար մղվում բարձրության համար : Ամենից առաջ՝ վորքան բարձր է թռչում սպանակիը, այնքան ավելի յե նրա արագությունը : Բայց բանը միայն այս չե : Թուիչքի բարձրությունն ավելացնելով նվազում է նաև վառելանյութի ծախսումը : Իր ժամանակին յես առիթեմ ունեցել մանրամասն փորձարկելու 480 ձիու ուժանոց «M—22» մոտորը : Մեր քաղաքացիական ողանակատորմի նորմաներով այս մոտորի համար վառելանյութի ծախսումը վորոշվել է մի ժամում 90 կիլոգրամ : Թուիչքի առատաղը բարձրացնելով 5—6 կիլոմետրի, յես համարյակինակի չափով նվազեցրի վառելանյութի ծախսումը : Ի վերջո 500 կիլոմետր թուիչքի համար նախատեսված բակերով սավառնակը կտրեց մինչեւ 900 կիլոմետր տարածություն :

Ծաղմական ավիացիան, հաջիկ առնելով 1914—

1918 թվերի պատերազմի վորքը, նույնպես ուժնոցէն բարձրացնում է իր մեքենաների առաստաղը։ Կասկածի յենթակա չե, վոր մեծ առաստաղ ունեցող սալանակը մի շարք առավելություններ ե ստանում։ 10000 մետր բարձրության վրա նրա համար սարսակելի չե գենիթալին հրետանու կրակը։ Մեծ բարձրությունը թույլ է առլիս աննկատելի թափանցելու թշնամու խոր թիկունքը։ Վերջապես, մեծ բարձրությունը հնարավորություն և տալիս թոփչքներ կատարելու ուղած ամսին և ուղած ժամին, վորովհետև սորատուֆերայում վոչ մառախուղ կա, վոչ ամպեր, վոչ ել փոփոխական ջերմաստիճան։

Վերջին տարիներու բոլոր յերկրներում մեծ ուշադրություն է դարձվում առետրական բեռով բարձր թոփչքներին։ Դատարկ սալանակով ոեկորդային թըսութչքները գործնականապես անողութ են։ Աղաչուն հասնում է սահմանային բարձրության և անմիջապես նետվում ցած։ Իսկ յեթե ողաչուն վորեւն նշանակալի բարձրության և հասցնում ոգտակար բեռ, ասենք, հազար կիլոմետր, ապա սա վորոշակի դորձնական նշանակություն ունի։ Հետեւյալ անդամ նա կարող ե այդ բարձրության հասցնել կես տոնն ոգտակար բեռ և կես տոնն վառելանյութ։ Իսկ կես տոնն վառելանյութ։ Ասենք 12100 մետր բարձրության վրա (վոնյութով, ասենք 12100 մետր բարձրության վրա (վոնյութով), ասենք 12100 մետր բարձրության վրա (վոնյութով, ասենք 12100 մետր բարձրության վրա (վոնյութով)) կարելի յե հեռու թին յես հասա այսպիսի բեռով) կարելի յե հեռու թուչել։ Ե՛լ ավելի մեծ նշանակություն ունեն յերկու, թուչել։ Ուստի առն առն բեռով բարձր թոփչքները։ Ուստի չինդ, տաս տոնն բեռով բարձր թոփչքները։ Ուստի միանդամայն հասկանալի յե այն հետաքրքրությունը,

վոր ցույց է տրվում վիոլետրական օավանակների առավելագույն առաստաղին։

Խորհրդային ողաչուները գերազանցեցին առետրական բեռով բարձր թոփչքների բոլոր դոյցություն ունեցող ոեկորդները։ Կասկած չկա, վոր բարձրության առանց բեռի թոփչքների ոեկորդներն ել նրանք կովածեն։

Կանոնավոր հաղորդակցության համար մեծ բարձրությունների ողաւործումը պահանջում է հատուկ մոտոմեր։ Մեծ բարձրության վրա մոտոռը կորցնում է իր կարողությունը։ Վերջինս պահպանելու համար հարկավոր են հատուկ ողամնչիչներ։ Ամրակա աշխարհի տեխնիկական միտքը տքնում է առավել թեթև և միաժամանակ առավել եփեկտավոր ճնշիչներ ստեղծելու վրա։ Զանազան հարմարանքներ թույլ են տալիս արդեն այժմ մոտոռի կարողությունը պահպանել մինչև յոթ-ութ կիլոմետր բարձրության վրա։ Տարեց տարի բարձրանում է այս սահմանը։

Ավելի պակաս հաջողությամբ և պսակվել առայժմ սորատովլան ստեղծելու աշխատանքը, այսինքն այնպիսի սալանակ, վորը հատկապես հարմարեցված է սորատուֆերայում թուչելու համար։ Վորքան հայտնի յե, արտասահմանյան կոնստրուկտորների ձեռնարկած փորձերը վոչ մի արդյունք չեն տվել։ Շատ կոնստրուկցիաներ ուղղակի անհաջող են յեղել, միքանիսը նույնիսկ առջեց վեր չեն թուել։ Բայց սորատովլանների ստեղծման աշխատանքը շարունակվում է։ Այս աշխատանքը կատարում են նաև Խորհրդային Միության կոնստրուկտորները։

Բարձրության համար պայքարելն արդի ավեացիայի հիմնական խնդիրներից մեկն է : Խորհրդային ողաչումներն ու կոնստրուկտորները քիչ բան չեն արել այս խնդրի լուծման համար :

Արդի ավեացիայի զարգացումը բնորոշող պակաս կարեռ տարր չի հանդիսանում թոփչքի հեռավորությունը : Վերջին հաշվով սա յեւ վրոշում վորեե յերկրի ավեացիայի ուժն ու զորությունը : Հեռավորությունը սավառնակի ընդունակությունն ե անվայրէջը մեծ տարածություններ կտրելու : Այն մի վայրեջ՝ հապաղում ե, կասեցում, ավելորդ ծախսեր : Մեծ հեռավորությամբ ոժաված սավառնակը կարող ե հեշտությամբ թռչել թշնամու խոր թիկունքը, ջախջախել նրա կենսական ու արդյունաբերական կենտրոնները և իր գործը կատարելով հետ վերադառնալ :

Մեծ հեռավորություն ունեցող սավառնակների նշանակությունը մեծ ե նաև ժողովրդական տնտեսության մեջ : Նրանցով կարելի յեւ փոխադրել փուտը, ճամբորդներ, բեռներ մինչեւ ամենահեռավոր ըրջանները, վորոնց հետ ուրիշ միջոցներով կապ հաստատելը կամ չափազանց շատ ժամանակ ե պահանջում, կամ շատ թանգ ե նստում : Առանձնապես թոփչքի հեռավորության նշանակությունն աճում ե բաց ծովի վրայից, բևեռով թռչելիս : Այսուեղ չի կարելի միջանկյալ շատ աերոդրոմներ պատրաստել, վորտեղ սավառնակները կարողանային լրացնել վառելանյութի ու յուղի պաշարը :

Հեռավորության համար վաղուց ե պայքար մըդ-

դում : Սուաջին շուրջերկրյա թոփչքը 1931 թվին կատարեց ամերիկացի ականավոր ողաչու վելլի Պոստը 7 որ 18 ժամ 50 բոպեյում : Նա միքանի վայրեջք կառավարեց ճանապարհին : Իսկ 1938 թվին ամերիկացի ուղաչու զովարդ Յուզը աշխարհի շուրջը թուալ 91 դաշու զովարդ Յուզը աշխարհի հասալ վոչ մեժամում : Յուզն այսպիսի արդյունքի հասալ վոչ այն սավառնակի արագությունն ավելացնելով, այլի այն սավառնակի արագությունն ավելացնելով, այլի այն սավառնակի չնորհիվ իր մեքենայի թոփչքի հեռագույանավագան : Նա ճամբին կատարեց միայն 5 վայրեջք :

Հեռավորության ավելացման առեցուցիչ որի հակներ ե տալիս նաև խորհրդացին ավեացիայի պատմությունը : 1925 թվին մի խուժը խորհրդացին ողաչուներ առաջին հեռավոր թոփչքը կատարեցին այսպես չնորհիվ թոփչքը կատարեցին Մոսկվայից Պեկին : Այս յերկու քաղաքների միջի Մոսկվայից Պեկին : Այս յերկու տարի անց տարածությունը անցան 33 որում : Յերկու տարի անց տարածությունը Մոսկվայից թուակ ձագունիս և ողաչու հեռատակովը Մոսկվայից թուակ կիլոմետր : Հետ, 22 որում կարելով մոտ 22 հազար կիլոմետր : Իսկ ինը տարի հետո Խորհրդացին Միության Հերիսկ իննը տարի հետո Խորհրդացին Միության Հերիսկ ժամանակի մեջ ողաչու ընկ . Զկալովը, բոսներ՝ մեր ժամանակի մեջ ողաչու ընկ . Զկալովը, և ընկ . Բայդուկովն ու Բելյակովը Ստալինյան մարշրուտով անվայրեջք թռչելով Մոսկվայից մինչեւ Նիկոլսկ Ամուրի վրա, 56 ժամում կարեցին մոտ 9300 կիլոմետր, գերազանցելով հեռավորության համաշխարհային ուղղութը : Այսպիսով նրանք մի որում աշխարհային ուղղութը : Այսպիսով նրանք մի որում գիշերում թռան ավելի քան չորս հազար կիլոմետր : Այս արդյունքին նրանք կարողացան հասնել չնորհիվ մեքենայի հեռագույանացությունն ավելացնելու :

1937 թվին ընկ . ընկ . Զկալովը, Բայդուկովը և

Բելյակովը նույն սավառնակով Մոռկվայից Հյուսիս-
սային բեկենի վրայով անվայրեջք թուան Հյուսի-
սային Ամերիկա : Նրանց ժնքենան ըջալ Վանկուվերի
սաղմական աերոդրոմում : Սավառնակը ողի մեջ ան-
չայրեջք մնաց 63 ժամ 20 րոպե : Մի ամիս ել անց
Խորհրդային Միության Հերոսներ ընկ . ընկ . Գրոմո-
վը, Յուլիանա և Դանիլինը սահմանեցին ուղիղ գծով
թոփչքի հեռավորության համաշխարհային ռեկորդ,
անվայրեջք անցնելով 10148 կիլոմետր :

Այսպես ե աճում արդի ավելացիայի հեռազնա-
ցությունը :

Սխալ կլիներ կարծել, թե արագությունը, բարձ-
րությունն ու հեռավորությունը միմյանց բացասող
հատկություններ են : Ի հարկե, նայած թե ինչի յե
հատկացված սավառնակը, այս կամ այն հատկու-
թյունը առավել նշանակություն է ձեռք բերում : Դի-
ցուք, կործանիչի համար առանձնապես կարևոր ե ա-
րագությունը : Բայց նա պետք է ունենա նաև բարձր
առաստաղ : Ոմբակոծիչից պահանջվում է թոփչքի մեծ
հեռավորություն և բեռնատարություն : Իսկ յեթե նա
թոփչքի քիչ արագություն ունենա և ցածր առաս-
տաղ, ապա նա կդառնա թշնամու ավելացիայի ու
զենիթային հրետանու հեշտ զոհը : Այսպիսով, արդի
սավառնակների վորակը վորոշող բոլոր յերեք հատ-
կություններն ել կարգած են միմյանց հետ, ուստի և
ավելացիոն կոնստրուկտորներն աշխատում են միաժա-
մանակ լուծել յերեք խնդիր, այսինքն կառուցել մի
սավառնակ, վորը թռչեր նախկին կոնստրուկցիաների

սավառնակներից ավելի բարձր, ավելի արագ և ա-
վելի հեռու :

Ավելացիայում աշխատելուս ժամանակամիջոցում
յես լիովին ծանոթացել եմ նրա զարգացման հիմնա-
կան ուղղների հետ : Յես փորձարկութաշուրջությունը յեմ :
Սա իմ հիմնական պրոֆեսիան է : Սավառնակները
փորձարկելով, յես պետք է վորոշեմ նոր կոնստրուկ-
ցիաների արժանիքներն ու թերությունները, նրանց
բոլոր հատկությունները և առաջին հերթին առա-
վելագույն արագությունը, սահմանային առաստաղը,
մաքսիմալ հեռազնացությունը :

Սավառնակներ փորձարկողի աշխատանքը չափա-
դանց հրապուրիչ է, բայց և շատ քրտնաշան : Փոր-
ձարկում մեքենայի հետ ծանոթանում է զենքու դժա-
պրերի մեջ : Բայց ահա, հասնում է այն որը, յերբ
մեքենան անդարի դռներից դուրս են դլորում դեպի
աերոդրոմի կանաչ դաշտը : Ողաչուն նստեւմ է կաթե-
նի մեջ, գործի յե զնում մոտուր և քչում դաշտով :
Գետնին նա փորձում է կոնստրուկցիայի ճկունությու-
նը, հարմար լինելը և վորոշում, թե արդյոք սավառ-
նակը կարո՞ղ է թռչել առհասարակ : Այժմ ավելացիոն
արդյունաբերությունը գտնվում է զարգացման այն-
ովիսի բարձր աստիճանի վրա, վոր նա այլևս չի ար-
տադրում այնպիսի սավառնակներ, վորոնք թռչել
չկարողանային : Բայց կար ժամանակ, յերբ վոչ ո-
պաչուն, վոչ ել կոնստրուկտորը չելին կարող յե-
րաշխալորել, վոր նոր մեքենան կկարովի հողից :

Փորձարկում կատարում է առաջին թոփչքը, յերկ-
րորդը, յերրորդը, անսահման քանակությամբ թոփչք-

Ներ: Մենք ձղտում ենք լրիվ ուսումնասիրել սավառ-նակը, վորպեսզի մեզնից հետո վոչ վոք չկարողանա-վորեն բան ավելացնել նրա բնութագրին:

Մեր աշխատանքը չի կարելի կատարել ձևականութեն, կաղյոններ: Փորձարկուի վրա հսկայական պատասխանատվություն ե դրված: Մեքենանի լինելու վերաբերյալ ական ստորագրելով, մենք դրանով իսկ պատասխանատվություն ենք վերցնում մեզ վրա այն ողաջուների կյանքի համար, վորոնք այնու-շետե պիտի թուչեն այս սավառնակով: Իհարկե, նոր ժեքենան միշտ չի, վոր «գերազանց» և լինում: Քիչ չի պատահել, վոր ողի մեջ յես ընկել եմ շատ դժվա-րին դրության մեջ: Մի անգամ զետից թուչելիս պոկլեց սավառնակի մի անիվը, և յես ստիպված յե-ղա մեքենան իջեցնել աննորմալ դիրքով: Մի ուրիշ անդամ անտառի վրա մոտոռները կանգ առան, և յես արկադրված եյի իջնել խիս թափուտում: Մի ան-դամ ել թուչելիս մոտոռը բռնկվեց: Յեղել են ուրիշ անախորդություններ եւ: Բայց սրանք բոլորը մեր պրոֆեսիայի, այսպէս ասած, արտադրական ծախ-քերն են...

Հասկանալի յեր, վոր սավառնակի փորձարկուները չեն սահմանափակվում աերոդրոմների վրա թուչքներ կատարելով: Մեքենայի հնարավորությունների վերա-բերյալ լիակատար պատկերացում կարելի յես ստանալ միայն հեռավոր ոեյսում նյութական մասի նորմալ չահագործման պայմաններում:

Փորձարկու-ողաջուի աշխատանքը հիանալի դըպ-լոց դուրս յեկալ: Նա թույլ տվեց ինձ դիմելու ժու-

մանակակից ավիացիայի առջև կանգնած խնդիրների ուժման: Ամենից առաջ յես ձեռնարկեցի բարձրու-թյունը նվաճելու պայքարին: Իմ առաջին դերյուտոր հանդիսացավ Մոսկվայից Խարկով թոփչքը հինգ հա-շար մետր բարձրության վրա: Այդ 1932 թվին եր: Այժմ ծիծաղելի յես խոսել այսպիսի բարձրության մասին, բայց այն ժամանակ գործը նոր եր սկսվում, վորք չկար, վարժություն նույնական: Մայրաքաղա-քից թուած վոչ մի ողաջու այնպես ել մինչեւ Խարկով հաստավ:

Բայց տարիներն անցնում եյին: Մենք վարժվում եյինք, փորձ կուտակում, դիտելիքներս հարստաց-նում: Աստիճանաբար յես համոզվեցի, վոր մեր սա-վառնակներով կարելի յես վոչ միայն բարձր թուչել, այլև գերազանցել միջազգային գործություն ունեցող ռեկորդները:

1935 թվին ինձ հաջողվեց միտեղանի սավառնակով բարձրանալ 14575 մետր, առաջ անցնելով միջազգային ռեկորդից, վոր պատկանում եր այն ժամանակ խոս-լացի ողաջու Գոնատիին: Բայց վորովհետեւ Խորհր-դային Միությունն այն ժամանակ դեռևս միջազգա-յին ալիացիոն ֆեղերացիայի (ՖԱԻ) անդամ չեր, ա-պա իմ ռեկորդը չարձանադրվեց: ԽՍՀՄ-ն դարձավ ՖԱԻ-ի անդամ միայն 1936 թվի դարնանը:

293/
294

ՍՏԱԼԻՆՑԱՆ ՈՒՂԵԳՐՈՎ

Շարունակելով իմ արշավանքը համաշխարհային ավելացիոն նվաճումների աղյուսակի վրա, յես վորո-չեցի ամենից առաջ խիել թոփչքի բարձրության մե-

չաղգային պաշտոնական ռեկորդը կես տոնն առևտրական բեռով:

Իմ մտադրության մասին յես մի նիստում հայտնեցի Սերգո Ռզնիկիձելին: Նա հավանություն տըլեց իմ նախագծին և ինձ տարավ ընկեր Ստալինի մոտ: Հուզված՝ յես շարադրեցի իմ պլանը:

— Ի՞նչ եք կարծում, թույլ տա՞նք Կոկինակիին թուչելու, — հարցրեց ընկեր Ստալինը հենց այնտեղ ներկա դժուվող ընկերներ Մոլոտովին: ու Վորոշիլովին:

— Պետք է թույլատրել, — ասաց ընկեր Մոլոտովը: Ընկեր Վորոշիլովը նույնպես դրական ապատասխան ռվեց:

— Իսկ կկատարե՞ս, — հարցրեց ընկեր Ստալինը:

— Յեթե Կոկինակին հանձն ե առնում, նշանակում ե կկատարի, — ծիծաղեց ընկեր Վորոշիլովը:

Թոփչքը թույլատրվեց: Ընկեր Ստալինի վստահությունը թևավորեց ինձ: Յես եներդիայի արտասլուվոր լիցք զգացի:

Թոփչքի նախապատրաստվելու ժամանակ յես ինժեներ Ս. Վ. Իլյուշինի կոնստրուկցիայով կառուցված սալանակով միքանի փորձնական թոփչքներ կատարեցի, վորոնց ժամանակ գերազանցեցի միջազգային ռեկորդը: Սրանից հետո միայն յես չեկական հայտ ներկայացրի: 1936 թվի հուլիսի 17-ին իմ սալանակը կես տոնն բեռով բարձրացավ 11458 մետր, 1173 մետրով գերազանցելով Փրանսիացի ողաչու Սինյելինի ռեկորդը:

Մի քանի որ հետո յես սահացա հետեւյալ նամակը:

«Փորձարկու ողաչու ընկ. Վ. Կոկինակիին:

Շնորհամություն եմ բարձրության միջազգային ռեկորդի նվաճումը յերկուսուո սավառնակով 500 կիլոդրամ առևտրական բեռով:

Ամուր սեղմում եմ Զեր ձեռքը:

Ի. Ս. Ա. Լ. Ի. Ն»:

Այս վողջույնը շատ բանի յեր պարտավորեցնում ինձ: Յես սկսեցի պատրաստվել յերկրորդ բարձր թոփչքին՝ բարձրության ռեկորդ խփելու մի տոնն առեվլարական բեռով: Առաջին թոփչքից ինն որ հետո յես նորից նույն մեքենայով մի տոնն բեռով բարձրացաւ հասա 11402 մետրի, համարյա յերկուսուկես կիլոմետրով գերազանցելով բուրժուական ռեկորդը:

Բայց քանի վոր ինձ հաջողվել ե մի տոննը հացնել համարյա այն բարձրության, ինչ և կեռ տոննը, ապա, հետեւաբար, 500 կիլոդրամը կարելի յե ավելի վեր բարձրացնել, քան յես բարձրացրել եմ առաջին անգամ: Կարո՞ղ եյի յես արդյոք ընկեր Ստալինի վողջույնից հետո չքարելավել յերկու ռեկորդն ել, մեքենայից վերցնելով իրոք այն ամենը, ինչ հնարավոր ե:

Քանի վոր անում ես՝ լավ արա:

Ոգոստոսի 3-ին իմ սավառնակը կես տոնն առեվլարական բեռով բարձրացավ 12816 մետր, իսկ ոգոստոսի 21-ին՝ մի տոնն բեռով՝ 12101 մետր: Սրանից հետո յես ընկեր Ստալինից սահացա յերկրորդ վողջույնը: Նրանում սալած եր:

Մեր աղաղաստության ամենալուրջ ստուգումը հանդիսացավ Մոսկվա—Եվրոպական—Մոսկվա թոփչքը։ 2850 կիլոմետրն անցանք 8 ժամ՝ 50 րոպեյում։ Ժամում 320 կիլոմետր միջին արագությամբ։

1937 թվի ուղարկության ինձ Բրյանդինակու հետ միասին հաջողվեց կատարել հեռավոր ռեկորդային արագության թոփչք Մոսկվա—Սևլաստոպոլ—Եվրոպական—Մոսկվա մարզուսով։ Ճանապարհի ընդհանուր յերկարությունը 5018 կիլոմետր է։ Մավառնակի կարինում կար մի տոնն առեւտրական։ բեռ։ Թոփչքը հիմնականում կատարվեց 5000 մետր բարձրության վրա, բայց յերեմն առաստաղը բարձրանում եր մինչև 7000 մետր։ Թոփչքի միջին արագությունը հավասար եր մի ժամում 325 կիլոմետր 257 մետրի։ Մենք միանդամից խիեցինք միջազգային յերեք ռեկորդ՝ թոփչքի արագություն 5000 կիլոմետրի վրա առանց բեռի, կես տոնն բեռով և մի տոնն բեռով։

Այսպես, հետեւողականորեն պայքարելով թոփչքի բարձրության, արագության ու հեռավորության ռեկորդներ նվաճելու համար, մենք մոտենում ենք Մոսկվայից Հեռավոր Արևելք արագ, բարձր, անմայրեջ թոփչքի իրականացմանը, վորի մեջ պետք ել լուծում ստանային բոլոր յերեք տարրերն ել՝ արագությունը, բարձրությունն ու հեռավորությունը։

Համեմատաբար վաղ ե իմ և Բրյանդինակու մեջ հղացել Մոսկվայից Հեռավոր Արևելք արագ թոփչք կատարելու գաղափարը։ Բայց յես անհրաժեշտու-

թյուն եյի զգում նախապես ստուգել ինձ, իմ շտուրման Բրյանդինակուն և մեքենան։ Ըստ եյության Մոսկվայից Բադու և Մոսկվա—Եվրաստոպոլ—Եվրոպական—Մոսկվա փակ յեռանկունաձև թոփչքը հանդիսանում էյին յուրատեսակ մարզական փորձնական ույսեր։ «Մոսկվա» սավառնակը խնամքով հետազոտե-



Կոկկինակին և «Մոսկվա» սավառնակի կոնստրուկտոր Իլյուշինը լուց հետո յես համոզվեցի, վոր նրանով կարելի յե Խորհրդային Միության մայրաքաղաքից թուշել մեջ յերկրի աշխարհագլուխական ամեն մի վայր, մենի դա հարաբուկը, Զուկոտկան, Վլադիվոստոկը, թե մի այլ տեղ։

Ինժ. Ս. Վ. Իլյուշինի կոնստրուկցիայի «Մոսկվա» սավառնակին իր մեջ զուգորդում ե հիմնավե հատկու-

թյուններ. շատ մեծ առաստաղ, մեծ արագություն,
զերագանց հեռավորություն, լուրջ բեռնատարու-
թյուն: Նրանով կարելի յէ համեմատաբար կարճ ժա-
մանակամիջոցում կտրել շատ մեծ տարածություններ:

Յես իմ իդեայի մասին հայտնեցի կոնստրուկտո-
րին, շտուրմանին, և մենք կամաց-կամաց սկսեցինք
պատրաստվել հեռավոր ույսի: Սավառնակի կոնստ-
րուկցիայի մեջ վորեե եյական փոխիսություն չմըտ-
ցըլեց: Մենք միայն մի քիչ փոխեցինք սարքերի ներ-
քին տեղադիրքը և լրացուցիչ բակեր դրեցինք բեն-
դինի համար: Հասկանալի յէ, վոր ամբողջ մեքենան
խնամքով ստուգիւց մինչև վերջին պտուտակը: Այս
շարաբաստիկ վերջին պտուտակը մեծ դեր է խաղում
մեր գործի մեջ: Հաճախ սրա պատճառով հարկ է լի-
նում թոփչըլ հետաձգել: Փոքրիկ, աննկատելի դետալի
կոտրված լինելն ստիպում է ողաչուին վայրեջք կտ-
տարել չնախապատրաստված աերոդրոմում, իսկ
յերբեմն ել ավարիա յէ առաջնում ողում:

Թոփչքի խնդիրները բավական ընդարձակ եյին:
Մենք ուղղում եյինք ամենակարճ ժամանակամիջոցում
Մոսկվան կապել հեռավոր Արևելքի հետ, ապացուցել,
վոր ինքնորդային յերկրի խաղաղովկիանոսյան սահ-
մաններն այնքան ել հեռու չեն յերկրի սրտից, ինչպես
ընդունված է կարծել, և վոր ուզած մոմենտին կա-
րելի յէ արագորեն հասնել այնտեղ:

Մենք վորոշեցինք թուչել վոչ քաղաքացիական ո-
ղային նախատորմի գոյություն ունեցող ճանապար-
հով, վորը սարքավորված է աերոդրոմներով, փա-
րուսներով և ողերկութաբանական կայաններով, այլ

և լիդի, ամենակարճ գծով, վորն ընկած է Մոսկվայի
և Վլադիվոստոկի միջև: Մեր թոփչքի մարզուտն անց-
նում եր գոյութուն ունեցող տրաստից շատ ավելի
հյուսիս, կտրում եր քիչ ուսումնասիրված շրջաննե-
րը, ընկնում լեռների, տունդրայի և տայղայի վրա-
յով: Հյուսիսային ճանապարհը միայն դժվարությամբ
չեւ վոր տարբերում եր հարավայինից: Նա ուներ
համ վորոշ առավելություններ: Նրա միջին մասը
գտնվում եր հյուսիսային լայնության մոտավորա-
պես 62–63 աստիճանի վրա: Թոփչքի համար մեր ընտ-
րած հունիս ամսին այս լայնության վրա գիշեր
համարյա չի լինում, արեւ միայն մի ժամ է մայր
մտնում: Մենք որուցիչեր կարող եյինք թուչել լուր-
սով, վորպիսի հանդամանքը բավականաչափ թեթե-
վացքեց թոփչքը:

Մոսկվայի և Վլադիվոստոկի միջև ընկած տա-
րածությունը քաղաքացիական ողանավատորմի սա-
վառնակները սովորաբար անցնում են վեցից-ութ ո-
րում: Մենք մտադրվեցինք անվայրեջք հասնել Վլա-
դիվոստոկի շրջանը 24 ժամում: Մեր թոփչքի հաջո-
ղության գեղցում յուրաքանչյուր ուղղմականորեն
գրագետ մարդու համար պարզ պիտի լիներ, վոր ան-
համարեցության գեղցում մոտավորապես այսպիսի
ժամանակամիջոցում Մոսկվայից Հեռավոր Արևելք
կարող է շպրտվել վոչ թե մի սավառնակայլ մի ամ-
րող ողանավատորմ, վորը մահարեք հեղեղի նման
կթափի թշնամու գլխին: Մենք ապրում ենք այնպիսի
երագության մեջ, վոր պատերազմը կարող ե բռնկել
ամեն որ և աշխարհի ուղածող վայրում: Պատերազմի

ժամանակ կարեռը ե զորքն արագորեն վոխաղը ել
ամենից ավելի սպառնալիքի տակ դանշող վայրերը:
Ենք թոփչը ցույց տվեց, վոր հեռավոր-արևելյան
ողային ուժերի համարումը կարելի յէ իրականաց-
նել ամենակարծ ժամանակամիջոցում:

Մյուս՝ կողմից՝ նույնիսկ ամենաանհանդիստ հարե-
վանը հասկանում եր, վոր յեթե խորհրդային սավառ-
նակները բազմահազար կիլոմետրներ կարող են ան-
ձայրել թռչել խորհրդային տերիտորիայով, ասպա-
հարկ յեղած դեպքում նրանք ի վիճակի կլինեն խորը
թռչել նաև թշնամու տերիտորիայի վրա: Իբրև յե-
լակետ ընդունելով Մինսկը կամ Խաբարովսկը, հեշտ ե
համոզվել այն բանում, վոր չկա մի մայրաքաղաք
յեփրոպական ցամաքում կամ Խաղաղ ովկիանոսի
կղզիներում, վորին չկարողանար հասնել մեր սա-
կառնակը:

Մովկայից մինչև Վլադիվոստոկ մեր սավառ-
նակը թառալ ավելի քան 7600 կիլոմետր: Իհարկե, ա-
պագա պատերազմում միշտ չե, վոր հարկ կլինի այս-
պիսի մեծ թոփչներ կատարել: Նպատակակետները
սովորաբար բավական մոտիկ կլինեն: Բայց հեռա-
վոր տարածություններ թռչելը ցույց ե տալիս, վոր
խորհրդային սպառնակները հսկայական բեռնա-
տարություն ունեն: Սա նշանակում ե, վոր բենդինի
պաշարը նվազեցնելով, մենք կարող ենք մեծացնել
ոռոմբային բեռը և նշված կետը հասցնել բավական
զդալի քանակությամբ զանազան չափի ոռոմբեր:

Այսպիսով թոփչի խնդրի մեջ եր մոհում մեր
մեքենայի բարձրակողմանի ստուգումը հեռավոր տես-

կան թոփչի մեջ: Մենք ուզում ենք յուց տալ,
ուր խորհրդային սավառնակները կարող են թռչել
հեռու, մեծ բարձրության վրա ու մեծ արագու-
թյամբ, անկախ ողերկութաբանական հանդամանքնե-
րից:

Մեր թոփչը համոզեց նաև քաղաքացիական ա-
վեցիային, վոր արագաթոփիչ ույսերի կազմակերպ-
ման պրոբեմն ամենեին այնքան ել բարդ բան չե և
նրա լուծումը շատ տարիներ չի պահանջում, ինչպես
թվում եր առաջ: Փոխադրական սավառնակները Մոսկ-
վայից Հեռավոր Արևելք ույսեր կարող են կատարել
(հաշվի առնելով միջանկյալ վայրեջքները) յերկու-
յերեք որում: Սա նշանակում ե, վոր Իրկուտսկ, Խա-
բարովսկ, Վլադիվոստոկ ավելի արագ սիտի տեղ
հասցվեն բեռները, փոստը, մարդիկ, քան առաջ, վոր
Հեռավոր Արևելքը կարող ե զանազան զբավոր ցու-
ցումներ, զիրեկտիվներ, նյութեր, լրացրեր ստանալ
շատ ավելի արագ: Հասկանալի յե, վոր այս փորձը
կարելի յե տարածել նաև Խորհրդային Միության
մնացած բոլոր ողային գծերի վրա: Յեզ ուստահա-
կան չե, վոր քաղաքացիական ողային նավատորմի
գլխավոր վարչությունն այժմ բացել ե և բացում ե
մի շարք երսպրեսային ողային գծեր: Արագաթու-
սավառնակներն սկսում են աշխատել Մոսկվայի և
Վլադիվոստոկի, Մովկայի ու Տաշքենտի, Մովկայի
ու Կիևի միջև: Արագաթիու սավառնակների շահա-
գործման են դիմում նաև ուրիշ գծերի վրա:

Մեր ընտրած ձանապարհն աչքի յեր ընկնում
իր շատ բարձրությամբ: Մենք վերցրինք ԽՍՀՄ քար-

տեղը, մի կարմիր գիծ քաշեցինք Մոսկվայից Խաբա-
րովսկ և վորոշեցինք թուչել այդ ուղիղ գծով: Բնա-
կելի վայրեր քիչ կային մեր մարզուտի վրա: Ճանա-
ւարհի մեծ մասն ընկնում եր քիչ ուսումնասիրված
վայրերով, վորոնք աննշան քանակությամբ ուղենի-
ւեր ունեցին:

Մոսկվայից մեր ճանապարհն ընկնում եր Շարի-
այի և Կիրովի վրայով դեպի Ուրալ: Ուրալյան լեռ-
նաշղթայից այն կողմ ձգվում եր անմարդաբնակ
տունդրան՝ ճահճուտ ու անանցանելի ամառվա և աշ-
նան ամիսներին: Միայն ձմեռն են տեղական բնակիչ-
ները կտրում-անցնում տունդրան չնասահնակներով,
յերբ նա պատում է ձյունով: Ուրալից մինչև Յենի-
սեյի ափերը մենք պիտի թուչեցինք առանց վորեւե ու-
ղենիչի: Յենիսեյից այն կողմ ձգվում եր սիրիոյան
տայրան: Այստեղ նույնպես շատ քիչ են հանդի-
ւում բնակելի վայրեր և ուղենիչեր:

Տայգայի վրայով թուչելով, մենք հասանք Բո-
դայրո: Կիրովից հետո սա առաջին խոշոր բնակելի
վայրն եր մեր ճանապարհին: Այսպիսով մենք պետք
ե թուչեցինք հազարավոր կիլոմետրներ, համարյա բա-
ցառապես կողմնորոշվելով ըստ սարքերի, չվստահե-
լով նույնիսկ քարտեզներին, վորովհետև տայգայի և
տունդրայի գետերի ու լճերի մեծ մասը կամ անձիշտ
են ցույց տրված այդ քարտեզներում, կամ ամենեն
չեն նշված: Բոդայրոյից այն կողմ մենք պետք ե
անցնելինք Յարլոնովյան ամենալարձր լեռնաշղթայի
վրայով, կարելինք Խինդանի լեռները, Սիխոտե-Ալի-
նի լեռնաշղթայի բարձր դադարիները: Խաբարովսկից



Բրյանդինսկին չափում և յերկրագունդը

Հետո միայն թոփչքի պայմանները մի քիչ բարելավվեցին։ Այստեղ մարդուսոն ընկնում եր Ռւսութիւնի պետի հովտի վրայով, բնակավայրերը շատ ելին, յերևում ելին աերողրոմներ, վորտեղ վորոնե անախորժության դեպքում կարելի յեր վայրեջք կատարել։

Այսպիսի հեռավոր թոփչքի ժամանակ իհարկե զժվար եր հույս ունենալ միապաղաղ լավ յեղանակի վրա։ Մենք առաջուց գիտելինք, վոր մենք առիթ կունենանք թուչելու վոչ միայն պայծառ արևով, այլև հաղթահարել համատարած ամպամածություն, ամպը ըսպի հզոր Փրոնտներ, կտրել ցիկլոններ, թուչել աձակերի միջով։

Եքանչանակին ինժեներ, ԽՍՀՄ Գերադույն Խորհրդի գեղուտատ Սերգեյ Վլադիմիրովիչ Իլյուշինի կոնստրուկցիայի սավառնակը ինձ քաջ ծանոթ եր։ Երբեք փորձարկու ոդաչու յես այս մեքենան ուսումնասիրել եյի գեռես մինչև նրա աերոդրոմ դուրս բերելը, հետեւ եյի նրա կառուցմանը, հավաքելուն, առաջին փորձերին։ Այնուհետև յես սավառնակն ստուգել եցի ողում, նրանով թուել եյի ստրատոսֆերա, արագության ոեկորդներ սահմանել։ Բնդհանուրի կարծիքով՝ մեքենան միանդամայն բավարարում եր հեռավոր թոփչքի բոլոր պահանջներին և ասլահովում մեր դրած խնդիրների հաջող կատարումը։

Իսկ ի՞նչ եր ներկայացնում իրենից «Մոսկվա» սավառնակը։ Սա մոնոպլան ե՝ խորհրդային կոնստրուկցիայի յերկու հզոր մոտոռներով։ Արտաքուստ նու վոչչնով չի տարբերվում ներկայիս սավառնակնե-

րից, վորոնց ձեւը վերջին տարիներս բավական միատեսակ ե դարձել։ Բայց սա ոժոված ե ավելի շատ թագուն հնարավորություններով, քան վորոն այլ կոնստրուկցիա։

Չնայած «Մոսկվան» բացառիկ մեծ բեռնվածություն ունի, սակայն նա վորքը ե թվում։ Նրա ձևերը շատ գեղեցիկ են և հիացմունք են առաջացնում վոչ միայն հմուտ մարդկանց, այլև անիրազեկ հանդիսատեսների մեջ։ Մեքենան հիանալի սարքավորված է, ունի թոփչքի ժամանակ հավաքվող շասսի, փականներ, վորոնք նվազեցնում են շարժման արագությունը վայրեջքի ժամանակ, անիլների վրա արգելակներ։

Ներքին շենքերը հարմար են։ Շտուրմանն իր տրամադրության տակ ունի հիանալի կարին, վոր սարքավորված ե նորմալ և կույր թոփչքի համար անհրաժեշտ բոլոր սարքերով։ Մենախցիկի մեծուանհաժեշտ շտուրմանը կարող ե նստել, ամբիյան պատճառով շտուրմանը կարող ե նստել, ամբողջ հասակով կանգնել և նույնիսկ մի քանի քայլ անել, յեթե նա ուզում ե մարմինը մարզել, վորը շատ կարևոր ե յերկարատև թոփչքի ժամանակ։ Ողացուն ավելի կաշկանդված ե ապրում, քան շտուրմանը, բայց և այնպես նա բավականաչափ տեղ ունի, բլոկնոտները, ուստեղիքը, հագուստը։ Սակայն, ոգաչուին չի կարելի կանդնել։ Ամբողջ թոփչքի ժամանակ նա պետք ե նստած մնա, իհարկե, կարելի յեր կարինն ընդարձակել, վորպեսզի նավի հրամանատարին հնարավորություն տրվի հանդստանալու, բայց, առաջինը, այս թոփչքի

ժամանակ այդպիսի հնարավորություն չկար, վորով-
հետև ողաջուն մենակ եր, իսկ յերկրորդ՝ այն ժա-
մանակ հարկ կլիներ չվերցնել միքանի բենդինի բա-
կեր, վորին մենք ամենեին համաձայն չելինք:

Սավանակը կրկնակի կառավարում ունի, և
հարկ յեղած դեպքում շառըրմանը կարող և կառա-
վարել սավառնակը: Մի մոտոոի կանդնելու դեպքում
սավառնակն ի վիճակի յե թոփքը շարունակել մյու-
սով, բենդինի վորոշ մասը թափելով ոդի մեջ:

Թռիչքից առաջ մեքենան ներկվեց կարմիր գույ-
նով: Մենք այս գույնն ընտրեցինք այն պատճառով,
վոր նա շատ և նկատելի ողից: Յեթե մենք հարկա-
դրական վայրենք կատարելինք վորեւ տեղ տունդրա-
յում, ապա վորոնող խմբերը կարող ելին վայրենքին
տեղի վրայով թռչելիս, հեշտությամբ հայտնաբերել
մեզ: Իսկ չներկած սավառնակը շատ դժվար և նկատել
ողից:

Ներքեից հարթ տեղերում հսկայական տառերով
դրված եր «Մոսկվա» բառը:

ԹՌԻԶՔԸ

Դժվար և ասել, թե յերբ սկսվեց Հեռավոր Արե-
վելքի մեր թռիչքի նախապատրաստությունը: Բայ-
ցության այսպիսի նախապատրաստություն եր իլ-
յուշինի մեքենայի փորձարկման իմ նախընթաց ամ-
բողջ աշխատանքը: Ամենորյա աշխատանքում, փոր-
ձարկումների ընթացքում ինձ հաջողվեց լուծել առա-
ջեկա գործի համար երական մի շարք հարցեր: Յես

շատ լավ պատկերացնում եյի մեքենայի հատկու-
թյուններն ու հնարավորությունները, մոտոռների
աշխատանքը, վառելանյութի ծախսումը թռիչքի
սարբեր ռեժիմների ժամանակ: Այսուամենայնիվ թը-
ռիչքին նախորդող ամիսներին մենք չելինք թուլաց-
նում նախապատրաստությունը, այլ ընդհակառակը,
կատարում եյինք ուժգնորեն ու մեծ ուշադրությամբ:

Առաջ յես առիթ չեյի ունեցել այս սավառնա-
կով, այսպիսի հսկայական բեռով վեր բարձրանալ,
վորով մենք պետք և ստարտենք դեպի Արևելք:
Հասկանալի յե, վոր մեքենայի թռիչքային կշիռն ա-
վելացնելիս վառելանյութի ծախսումն այլ պիտի լի-
նի, քան նորմալ բեռով թռչելիս: Իսկ վառելանյութի
ծախսի ճիշտ վորոշումը միանդամայն անհրաժեշտ եր
թռիչքի հեռավորության ու տեղության հաշվիներն
անելիս: Իմանալով վառելանյութի ծախսումը վորո-
շակի արագության ու բարձրության դեպքում, մենք
կարողացանք ճշգրիտ հաշվել, վորքան առհասարակ
բնույթին և պետք մինչև վորոշակի կայան հասնելու
համար: Ուստի յես ստիպված եյի կատարել մի շարք
փորձնական նոր թռիչքներ: Ի վերջո յես հստակ
պատկերացնում եյի բենդինի ծախսումը ուղյուի յու-
րաքանչյուր ժամին ճանապարհի ոկզրին, կեսին և
վերջում, զրոյից մինչև ութ հազար մետր բարձրու-
թյան վրա, թռիչքի զանազան արագությունների
ուղղում:

Փորձերի ժամանակ հայտաբերվեց, վոր մոտոռ-
ներից մեկը չափական մեծ ախորժակ ունի և շատ
ավելի վառելանյութ և խժում, քան մյուսը: Բացի

անչափ ախորժակից, ուրիշ բացասական հատկություններ չեր ցուցաբերում այս շարժիչը։ Ավելի հանդիսա պայմաններում սրան պետք եր փոխել։ Հաշվի առնելով ժամանակի սղությունն ու Թոտոռի աշխատանքի ընդհանուր դրական դնահատությունը, մենք վորոշեցինք չփոխել նրան, այլ ուղղակի վորոշքանակությամբ բենզինի պաշար վերցնել։

Բուն սաղառնակի սարքավորումը գործնականապես մնաց նույնը, ինչ և առաջ։ Ոգաչուի ու շտուրմանի ուղաղնացական սպառազինումը հիմնականում բաղկացած եր զանազան սխաեմների կողմնացույցներից և այնպիսի սարքերից, վարուսով հսկում են սալառնակի դրությանն ու շարժմանը, մոտոռների ու սարքավորման աշխատանքն։ Մեծ արժեք եր ներկայացնում ուղղիկոմպասը— մի սարք, վոր հնարավորությունն և տալիս ծագրիտ բունելու ուղածդ ուղիուազորդ կայանը։ Այս սարքի հատկությունները մենք բազմից սառուղել ենք չեռավոր Արևելքից՝ վերահասնալով։ Դեպի Խաղաղ ովկիանոս տանող ճանապարհին մենք առիթ չունեցանք նրան ողտագործելու, վորովհետեւ թուիչի ճանապարհը չափազանց հետու յեր սաղինաղորդելուների գոնված շրջանից, իսկ մարզուտի միակ կետում, այն ե՝ Խարարովսկում, վորտեղ մենք կարող եյինք ոգտվել այդ սարքից, մենք կատարյալ անհաջողությունն իրեցինք (վորի մասին կիսուննք ներքե)։

Անձնակազմի հանդերձանքը գլխավորապես կաղմարձած եր այնպիսի սոսարկաններից, վորոնք անհրաժեշտ են հարկադրական վայրեջիքի ժամանակ տայ-

դայում կամ տունդրայում ապրելու համար։ Մենք մեր տրամադրության տակ ունելինք մթերքների ավարիային պաշար, ուստինե փոփովի նավակ (կիպար-պար-բոտ), վորի վրա կարելի յեր վորեկ գետի մոտ վայրեջք կատարել՝ իսկ դետի ընթացքով հասնել մինչեւ բնակավայր, գենք, փամփուշտներ, մեխակի յուղ և ցանցեր մոծակների դեմ։

Բժիշկները պնդում եյին, վոր թոփչքից առաջ մենք հանգստանանք, պահպանենք վարչակի ուժիմ։ Հանդամանքներն այսպէս զասավորվեցին, վոր մենք չկարողացանք ողտվել բժիշկների խորհուրդներից։ Զիսկուսելով կյանքի սովորական ձեւ, մենք զբաղվում եյինք մեր առորյա գործերով։ Որինակ, յես մինչեւ վերջին որը շարունակում եյի նոր սալառնակի փորձարկումը, Բրյանդինսկին աշխատում եր եր զինվորական մասում։

Մենք շատ ուշադրություն նվիրեցինք թոփչքի ապահովումը կազմակերպելուն։ Սրա մեջ եր մըտնում անձնակազմի ապահովումը ողերեւութաբանական տեղեկագրերով ու սաղիուկապով, ճանապարհի ու միջանկյալ աերոլրումների ուսումնասիրումը, ստարտի ու Փինիչի նախապատրաստումը։

Ամենից շատ մեզ անհանդատացնում եր յեղանակը։ Մենք պետք ե կտրեյինք անցնեյինք Յեվրոպայի կեսը և ամբողջ Ասիան։ Այսպիսի վիթխարի տարածության վրա դժվար եր միատեսակ նպաստավոր յեղանակ գտնել։ Կարևոր եր թեկուզ ստարտել լավ պայմաններում, վորովհետեւ ծանրարեռնված մեքենայով կուրորեն թռչելը թե՛ դժվար ե, թե՛ ոխկոտ։

Ամպերի միջով թուչելը կապված է խիստ տատանման
հետ, յերբ սակառնակի ամբությունը լուրջ փորձու-
թյան է յենթարկվում:

Հունիսի սկզբին Լենինգրադի յեղանակի յերկա-
րատեւ պրոդնողների քրուրոն տեղեկություն ուղար-
կեց, վոր իր կարծիքով թուիչքի համար ամենանը-
պաստավոր սայմաններ սպասվում են հունիսի յերկ-
րորդ կեսին: Այս ժամանակի համար ել հենց մենք
կողմնորոշվում ենինք: Ստարտից յերկու շաբաթ ա-
ռաջ սինոպտիկներն սկսեցին կազմել որասսի յեղա-
նակի ամենորյա քարտեզներ: Սկսած ստարտի մո-
մենտից, ճանապարհի մոտ դաշվող ողերեւութարա-
նական կայանների ամբողջ ցանցն արդեն աշխատում
եր բացառապես մեզ համար: Ամեն ժամ ուղիով
մենք ամփոփագրեր եյինք ստանում յեղանակի մասին,
հաղորդումներ, թե ինչ և մեզ սպասում ճանապար-
հին: Մեր թուիչքի ողերեւութարաննական սպասար-
կումը փայլուն կերպով եր կազմակերպված, միակ
թերությունն այն եր, վոր սինոպտիկներն ի վեճակի
չեյին յեղանակը փոխելու ըստ մեր ցանկության:
Իսկ յեղանակը նույնիսկ ավելի վատ դուրս յեկավ,
քան նրանք նախատեսում եյին: Դժբախտաբար,
ողերեւութարաննական դիտությունը դեռևս բավա-
կանաչափ զիսված չէ, վորպեսզի հստակորեն, պար-
զորոշ և, գլխավորը, անսխալ դուշակի այն բոլոր
յերեւությները, վոր տեղի յեն ունենում յերկրային
մթնոլորտում:

Յերբ նախապատրաստությունը վերջացավ, սա-
կառնակն ստուգվեց, փորձվեց և ամբողջ սարքավո-

րումը փորձարկվեց, յես հայտնեցի պաշտպանական
արդյունարերության ժողովրդական կոմիսարիատին,
վոր պատրաստ եմ:

Անցավ մի շաբաթ: Յես պատասխանի եյի սպա-
սում: Ամեն մի յերեկոյան ժամի 6-ին ինձ բերում
եյին յեղանակի քարտեզը: Ճանապարհը լիքն եր
ցիլոններով. նրանք ձգվում եյին մեկը մուտի հե-
տեվից: Սինոպտիկները թղթի վրա դժաղրում եյին
ամպերի անլերջանակի շղթաներ:

Հունիսի 15-ին նոր սակառնակի հերթական փոր-
ձարկումից հետո յես վերադարձա տուն: Գիշերվա-
ժամի 1-ին անսպասելի զնդաց հեռախոսը: Յես վերց-
րի փողակը և սասցի:

— Լսում եմ:

— Խոսում ե Ստալինը: Բարեկ ձեզ— պատաս-
խանեց մի հանգիստ ձայն:

Ինձ լավ ծանոթ եր այդ ձայնը: Շատ անգամ
յես բախտ եմ ունեցել տեսնելու ընկեր Ստալինին,
ներկա գտնվելու խորհրդակցությունների, վորոնք
աեղի եյին ունենում նրա մասնակցությամբ: Հա-
վիտյան անմոռաց այդ ձայնը ինձ խրախուսել և ա-
վեցիոն կյանքիս ամենածանր ըրպեններին: Յեվ զի-
շերային այդ ժամին, յերբ ընկեր Ստալինը դանդա-
հարեց ինձ տուն, յես խկույն հասկացա, վոր մեր
թուիչքի հարցն, ըստ յերեւութին, լուծված ե:

— Ինչպես ե Զեր առողջությունն, ընկեր Կոկ-
կինակի— հարցրեց իսուիք վիսարիոնովիչը:

Յես սասցի, վոր ինձ ամուր եմ դգում, կայ-

տառ և պատրաստ ամեն մի ույսի, ամեն մի թռիչքի:

— Դուք այս տարի հանդստացե՞լ եք, — նորից Հարցրեց ընկեր Ստալինը:

Յես գարձյալ պատասխանեցի, վոր լիովին պատրաստ եմ թուշելու, միայն սպասում եմ թույլավության:

— Ինչպե՞ս ե ընթանում սավառնակի պատրաստումը թոփչքի, — հարցրեց ընկեր Ստալինը:

Հակիրճ կերպով, աշխատելով չսպասեցնել ընկեր Ստալինին, յես զեկուցեցի սավառնակի պատրաստության, բոլոր սարքերն ստուգելու, մեքենայի հարավորությունների, առաջիկա թոփչքի բոլոր մանրամասնությունների մասին:

Իսուիֆ Վիսսարիոնովիչն սկսեց հարցուփորձ անել հանդապարհի մասին. դժվար չի նա, արդյոք, ամեն ինչ ե մտածված մինչև ամենամանը՝ դետալները:

— Իհարկե, — պատասխանեցի յես, — մենք ամեն ինչ մտածել ենք և ստուգել: Մի՛ անհանդստացեք, իսուիֆ Վիսսարիոնովիչ, հաջողությունը մերն ե:

— Յես հաջողության համար չե, վոր անհանդստանում եմ, — պատասխանեց ընկեր Ստալինը, — այլ Զեղ համար:

Յես չնորհակալություն հայտնեցի ընկեր Ստալինին նրա ուշադրության, անդադրում հոգատարության, այն ամենի դիմաց, վոր նա արել ե ինձ համար: Իսուիֆ Վիսսարիոնովիչը ցանկություն հայտնեց ինձ հաջողությամբ ավարտել թոփչքի նախադատրաստությունը և ասաց, վոր, քանի վոր նա չի տա-

րակուսում նախապատրաստության լրջության ու հոգատար լինելու վերաբերմամբ, ապա թսիչքի վարուում պետք ե ընդունենք մենք ինքներս:

— Բայց և այնպես, — վերջում ասաց ընկեր Ստալինը, — թոշելուց առաջ անցեք ինձ մոտ: Մենք չեզ բարի ճանապարհ կմաղթենք:

Այս խոսակցությունից հետո ամբողջ դիշերը աչք չփակեցի: Ու թեև ամեն ինչ պատրաստ եր ստուգին, բայց ընկեր Ստալինի հետ խոսիլուց հետո ամբողջ նախապատրաստական աշխատանքը մենք նորից կատարեցինք: Մենքինսկաւ անվան ավիացիոն գործարանի ինժեներներն ու տեխնիկները մեր զեկավարությամբ նորից ու նորից ստուգեցին մեքենան, մոտոռները, ամբողջ սարքավորումը: Ավիացիայում յերկարատև աշխատելու իմ մէջ սովորություն ե մշակել խոսքին չհավատալ, թոփչքից առաջ ստուգել իր ձեռքով: Յես յերեք շտուրմալի մոտ չեմ նստի, մինչև վոր ինք չստուգեմ մոտով, զեկավարման լծակները, առաջին հայացքից սակալարժեք, բայց թոփչքի մէջ չատ կարենը բոլոր դետալները: Սա յերկաթյա որենք ե: Ավիացիայում մշտապես հարկավոր ե յեռակի ստուգում:

Ուսումնասիրելով յեղանակի քարտեղը, մենք համոզվեցինք, վոր նազատավոր յեղանակի չենք հանդիսելու: Պետք եր հաշտվել յեղանակի հետ այնպես, ինչպես վոր նա կա: Յեղանակի վորոց բարելավում եր սպասվում միայն ողոստոսի կեսերին, բայց որանում ել վոչ վոք հաստատավես համոզված չեր: Թոփչքը մենք չեյինք կարող հետաձգել: Աւտի

յես և Սլեքսանովը Մատվեյեվիչ Բրյանդինսկին վունչեցինք թուչել ամենաչնչին իսկ հնարավորության դեմքում։

Հունիսի 26-ի առավոտյան, քվեարկելով հոգուտ միջֆաշ Գեղագույն Խորհրդի գեղաւատատի մեր թեկնածու պրոֆ. Մ. Պ. Կիբեյեվի, յես և Բրյանդինը կեն ընտրական տեղամասից ուղիղ գնացինք ԲԳԿՅ սաղմա-ողային ուժերի դիմավոր աերո-մետեորոլոգիական կայանը։ Հավաքեցինք բոլոր սինուատիկներին և նստեցինք քարտեզների շուրջը։ Կայանի պետ Վ. Ի. Ալուվակին խոստացավ մոտ որերս տալ ճառապնական ծաղում ունեցող շատ անախորժ տայֆունների մի ամբողջ սերիա։ Հարկավոր եր անհապաղ թուչել։

Խորհրդակցելով, մենք վորոշեցինք հետեւյալ որը հշանակել ստարտը։ Այս դեպքում մեղ սպասում եր վաստ, բայց վոչ վատթար յեղանակ։ Մենք պետք ե կարելինք Մոսկվայի և Կիրովի միջև ձգված ամպրոպային Փրոնտը, վոր սկսվում ե 200 մետր բարձրության վրա և վերջանում մոտավորապես 7 կիլոմետր դեմնից բարձր։ Ուրալից այս կողմ մեղ սպասում եր լավ յեղանակ, այնուհետեւ՝ հեղեղային Փրոնտ, սունդդրայի վրա՝ լուրջ ամպամածություն յոթից մինչև ինը բալ ուժգնությամբ, Յենիսեյից այն կողմ՝ յերկու ցիկլոն, Խարարովսկի շրջանում՝ համատարած ամպամածություն։ Խարարովսկի ու Վլադիվոստոկի միջև տնկված եր մի ցիկլոն ել։

Ինչ ասել կուղի, վեր տեղեկադիրն անուրախ եր։ Սակայն անբարենպաստ յեղանակը վորոշ չա-

փով համապատասխանում եր մեր թուչքի խնդիրներին։ Դժվար բան չե ամբողջ ճանապարհն անցնել սպայծառ արեով, հիանալի տեսանելիության պայմաններում։ Բայց մենք՝ սաղմական ողաչուներս, հարկ կզգանք թուչելու վոչ միայն լավ, այլև վատ յեղանակին, յերբ թուլացած կլինի թշնամու զգունությունը, նվազած պաշտպանական միջոցների ուժը։ Բացի սրանից, յեթե ողաչուները լավ յեղանակի սպասեն, ապա նրանք յերբեմն ամիսներով նըստած կմնան գետնին։

Վերջապես, ինչպես հայտնի յե, թուչքը պետք ե ցուցադրեր մեր սաղմա-ողային ուժերի լիակատար պատրաստությունը՝ ուզած մոմենտին համախմբվելու հեռավոր Արեելքում։ Հասկանալի յե, վոր հեռավոր-արեելյան թշնամին, հարձակվելով Խորհրդուային Միության վրա, չպիտի սովասի լավ յեղանակի։ Յեվ յեթե հանդամանքները պահանջեն, մենք պետք ե ամեն տեսակ ողերեւութարանական պայմաններում արագորեն այնուեղ շղրտենք մեր ուղամա-ողային ուժերը։ Ուստի վատ յեղանակը վորոշ չափով նույնիսկ հրապուրում ե մեղ։

Անհրաժեշտ ցուցումներ տալով սավառնակը ստարտի պատրաստելու մասին, յես զանգահարեցի Կրեմլ, խնդրեցի հայտնել ընկեր Ստալինին, վոր մենք թուչքը նշանակել ենք վաղը և, հիշատակելով իսուիք վիստարիոնովիչի խոսքերը, խնդրեցի թուլ տալ յերեկոյան դալու նրա մոտ։

Եկեղեցյան Կրեմլում ինձ ընդունեցին ընկերներ Ստալինն ու Մոլոտովը։

— Ինչպէս են դործերը, — Հարցրեց ինձ ընկեր
Ստալինը:

Յես բացեցի քարտեզը, վորի վրա նշանակված
էր թոփչքի մարշրուտը, ցույց տվի յեղանակի քար-
տեզը:

Ընկերներ Ստալինն ու Մոլոտովն ուշադիր կեղ-
ալով ծանոթացան այս բոլոր նյութերի հետ: Առանձ-
նագես ընկեր Ստալինը հետաքրքրվեց մեր թոփչքի
մարշրուտով: Նա հարցրեց, թէ հեռու յե արդյոք,
հանապարհը Յակուտսկից, ապա մոտեցավ կարինե-
ալի պատից կախած քարտեզին, ցույց տվեց իր աք-
սորված տեղերը, ընդգծեց, վոր մեր մարշրուտն
անցնում ե անմարդաբնակ վայրերով: Զբույցի այս
մասի վերջում նաև առաջարկեց վոչ մի դեպքում
ոխոկ չանել և ամենաչնչին խոկ վտանգի ու թոփչքը
չարունակելու չափության վերաբերմամբ նվազա-
դույն կասկած լինելու դեպքում, անհատաղ դադա-
րեցնել այն:

Ընկեր Ստալինը ինդրեց ինձ պատմել մեքենայի
սրատրաստ լինելու, իմ ինքնազդացման, Ալեքսանդր
Մատվեյեվիչի առողջության, թոփչքի դժվարին փու-
լերի մասին: Յես պատասխանեցի, վոր մեր թոփչքի
ժանապարհը չառ դժվարին ե, բայց միանդամայն
հաղթահարելի, և նմանապես ուստժեցի թոփչքի
դործնական նշանակության մասին յերկրի պաշտպա-
նության համար:

Ընկեր Ստալինը հետաքրքրվեց, թէ ինչ միջոց-
ներ ենք նախատեսել մենք այն դեպքում, յերբ նյու-
թական մասը դադարի դործելուց, յեթե վորուե թե-



Ամառային տուֆլիները փոխարինվում են մորթե ունտերով:

բություն հայտաբերենք, յեթե յեղանակը խիստ նեղի: Ընկեր Մոլոտովը հարցրեց, թե ինչպես ե կադակերպված կապը, ում հետ մենք ողետք ե հարաբերություն մրահպանենք թոփչիքի ժամանակ: Յես պատասխանեցի բոլոր հարցերին: Զըռուցի վերջում ընկեր Ստալինը նորից տվեց այն նույն հարցը, վորով նա դիմեց ինձ հեռախոսով՝ արդյոք յես հանգըստացե՞լ եմ այս տարի: Յես պատասխանեցի, վորչեմ հանդստացել:

— Ինչո՞ւ, — հարցրեց ընկեր Ստալինը, — թոփչիք առաջ պետք եր հանգստանալ:

Յես բացարեցի, վոր զբաղված եյի սակառնակի փորձարկումներով ու մեքենայի պատրաստությունն ստուգելով: Իսուիֆ Վիսսարիոնովիչը հայտնեց, վոր յես միանդամայն ճիշտ եմ վարվել, վոր ամիսացիայի մեջ անհրաժեշտ ե անձնապես անընդհատ հատ հսկել ամբողջ տնտեսությանը և առանձնապես այն սակառնակին, վորով ողաչուն բարձրանում ե ողը:

Այնուհետև ընկերներ Ստալինն ու Մոլոտովը բարի ճանապարհ ցանկացան ինձ, թոփչիքի հաջող ավարտում:

Կրեմլից յես ուղիղ դադացի աերոգրոմ: Բավական ուշ եր, բայց վոչ վոք չեր հեռացել: Բոլորն սպասում եյին կուսակցության և կառավարության ղեկավարների հետ ունեցած իմ զբույցի արդյունքներին: Մեծ ուրախությամբ ընդունվեց այն լույը, վոր վաղվա թոփչիքի համար թույլափություն ե վերցված: Ինժեներներն ու տեխնիկներն անհապաղ

մեկնեցին Շչելկովյոյի աերոգրոմ՝ սակառնակը թըսովչքի պատրաստելու համար, սինոպտիկները կայծակ հեռագրերով յեղանակի մասին նոր տվյալներ ելին պահանջում իրենց ցանցից:

Մենք բրուկեցինք տները: Բրյանդինակին սլացավ Շչելկովո ավանը — նրա կինը աղջիկ եր բերել նախորդ որը: Յես գնացի տուն, մոտեցա լուսամռւտին: Մոսկվան պատաճ եղ ամպիչ հոծ շղարչով, անձրես շոռում եր կարծես թե գույլերից: Դժվար եր պատկերացնել, թե այս հեղեղը յերեկիցե կվերջանա: Սակայն սինոպտիկները հավատացնում եյին, վոր առավոտյան յեղանակը կավանա: Յես մի քանի ժամ հպասեցի, բայց անձրես չդադարեց: Այն ժամանակ յես, հույս կտրած, պառկեցի քնելու: Յերկար ժամանակ չեյի կարողանում քնել, մտածում եյի ստարտի տեխնիկայի մասին:

Առավոտյան ժամի վեցին մեկնեցի Շչելկովո: Մինչեւ ստարտը մնում եր յերկու ժամ: Այս ժամանակամիջոցում պետք եր նախաճաշել, նայել վերջին ողերեսութարանական ամփոփագիրը, ստուգել սակառնակի ու սարքերի աշխատանքը, խոսէլ ժուռնալիստների հետ, հրաժեշտ տալ բարեկամներին:

Շչելկովյոյի աերոգրոմը քաջ հայտնի յե մեր Միության մեջ: Հենց այդ աերոգրոմից ստարտեց Խորհրդային Միության Հերոսներ Զկալովի, Բայդուկովի ու Բելյակովի սակառնակը, վոր Ստալինյան մարզուտով թռավ Մոսկվայից Ամուրի Նիկոլայեվսկի: Այստեղից թռավ իր առասպերական համարձակության ույսով՝ Զկալովի անձնա-

կազմը Հյուսիսային բևեռի վրայով դեպի Ամերիկա, Այս աերողբոմից ստարաեցին Խորհրդային Միության Հիության Հերոսներ Գրտմովը, Յումաշեր և Դանիլինը հեռավորության համաշխարհային ռեկորդը խիելու համար: Այստեղից թուակ նաև Սիրիզմունդ Լսանեսկու լայնաթև գիտակտը... Աերոդրոմի մոտիկ յեղրի յերկարությամբ ձգվում ե մի լայն բետոնած թը-սիչքուղի: Նա սկսվում ե բարձր բլրակից, վորքեթեացնում ե ծանրաբեռնված մեքենաների վեր թռչելը: Սովորաբար հեռավոր ռեյսերի մեկնող բոլոր սալաւանակներն իրենց վաղքն սկսում ելին բլրակից: Վորովչեաւ «Մուկվա» սավառնակը գետնից կալրվելու սքանչելի տվյալներ ուներ, մենք վորոշեցինք ստարտել վոչ թե բլրակից, այլ սննմիջականորեն թոփչքուղուց:

Մինուտիկների նախատեսումն արդարացավ, առավոտյան անձրեղ գաղարեց: Արեր վայլում եր, ուեղտեղ սպիտակին ելին տալիս ամպերը, ավելի ճիշտ նրանց մնացորդները, մանրունքը, ծվենները: Մենք մնաս բարով ասացինք բարեկամներին և զրավեցինք մեր տեղերը: Ամենավերջին բոպելին տեղ հասալ ավտոն. «Պրալդայի» թղթակիցը բերեց շինդ հարյուր հատ հենց նոր լույս տեսած լրագիր: Յես սիրով ընդունեցի լրացուցիչ բևոը: Յես առաջ ել բախտ ելի ունեցել «Պրավդայի» նամակատարը լինելու: Մի տարի առաջ յես լրագիրը Սվերդլովսկ հասցրի լույս տեսնելուց ութ ժամ հետո: Սովորաբար նա այստեղ և հասնում յերրորդ որը միայն:

Մենք լրադրերը խոթեցինք սավառնակի բոլոր աղատ մնացած անկյունները:

Յես հրամայեցի հավաքել կոճղերը և լրիվ գաղտիքի: Սավառնակը սահեց ուղիով: Նա ծանրաբեռնըլած եր նորմայից շատ ավելի: Մերենայի թոփչքային կըլուը հաշնում եր 12,5 տոննի: Ինժեներները վաղքի յերկարությունը վորոշել ելին 1200 մետր: Փաստըն վաղքը տեսեց միայն 820 մետր: Մեքենան ընթանում եր կարծես թե տողած գծով, մի մազաչափ անդամ չթեքվելով: 40 վայրկյան հետո մենք ողումն ելինք:

Սկսեց Մուկվա-Վլադիվոստոկի շրջան թոփչքը:

ԿՈՒՐՍ ԴԵՊԻ ԱՐԵՎԵԼՔ

Մի լայն շրջան գործելով, մենք նորից անցանց աերողբոմի վրայով: 150 մետր բարձրությունից յես վերջին անգամ նայեցի ծանոթ դաշտին: Ներքելանդնած ելին ուղեկցողները: Նրանք թափահարում ելին ձեռքերն ու զլիարկները: Արագորեն լողացին անդարները, շտարի շենքերը, լավ ծանոթ անտառակը: Հունիսի 27-ի ժամի 8 և 36 րոպեյին եր:

Հաղիվ եր մեր տակից անհայտացել ուղեկցողների բազմությունը, յերբ մենք անհապաղ դիմեցինք մոտոռների, նրանց աշխատանքի ստուդման: Յես ականջ ելի դնում մոտոռների աշխատանքին, հետեղում ելի սարքերի ցուցումներին, հսկում բենզինի ու յուղի ճնշմանը, ջրի ջերմաստիճանին, իմ տեսադրամում պահում սարքատախտակի վրայի բազմա-

թիվ թվացույցերը։ Բրյանդինսկին անհապաղ ռաս-
դիոյով կապվեց յերկրի հետ։ Կապը կանոնավոր աշ-
խատում եր։

Ամեն ինչ կարծես թե նորմալ եր ընթանում։
Բայց առաջին խակ բոպեյից յես զդացի, վոր մեքե-
նան հսկայական չափով դերաբեռնված է։ Ֆիզիկա-
պես զգացվում եր ողանավի կշիռը։ Դեկավարումը
բույլ եր։ Բավական եր մեքենայի քիթը մի քիչ ի-
ջեցնել, և սավառնակը միանգամբից կորցնում եր 50-
70 մետր բարձրություն, մինչդեռ սովորաբար նա
ընկնում եր միայն 5-10 մետր։ Շատ մեծ ջանքերով
եր հաջողվում հաղթահարել թեքումը։ Գերաբեռ-
նըված մեքենան վարելը խիստ տարբերվում ե նոր-
մալ սավառնակ վարելուց։ «Մուկվան», պետք եր
վարել վերին աստիճանի խնամքով, զգույշ։ Զդաց-
վում, շոշափվում եր, վոր բացառապես մոտոռների
վրա յես նստած։ Բավական ե, վոր նրանք նահան-
ջեն, քարշը թուլացնեն, և սավառնակը քարի նման
կընկնի ցած։

Դեռևս յերկրի վրա Բրյանդինսկին ինձ յովեց
ճշգրիտ կուլս։ Ստարտից անմիջապես հետո նա
որված կուրսը համեմատեց սարքերի ցուցումների
հետ։ Կողմնացույցների աշխատանքն ստուգելով,
նա ուղղում մացրեց մոտավորապետ յերկու աստի-
ճան։ Մենք ուղղություն վերցրինք ճիշտ դեպի
Արևելք, ուղիղ դեպի Խարարովսկ։

Աերոդրոմից հետո ճպվեց անտառը։ Մենք գը-
նում եինք քիչ բարձրության վրա, չատ լավ ջոկե-
լով ճանապարհները, դետակները, բնակավայրերը։



Կոկկինսկին թուչքից առաջ:

Արեւ տաքացնում եր վերսից: Մենք ժպտում եյինք:
Բայց կես ժամ հետո յեղանակը փոխվեց: Իվանո-
վոյի մոտ մենք լնկանք ամպերի մեջ, Գնալով յեղա-
նակը վատթարանում եր, կամաց-կամաց սկսեց մեղ
ողմել գետնին: Ամպերը ցած եյին իջնում, տեսա-
նելությունը վատթարանում եր, սկսվեց անձրիքը:
Մինոպտիկները, նախատեսելով մեղ վատ յեղանակ,
հավատացնում եյին, սակայն, վոր ամպերի ստորին
յեղբերը կտոնվեն մոտ 300 մետր բարձրության
վրա: Սավառնակի տակ 300 մետրն այնուամենայնիվ
բարձրություն ե: Իրականում ամպամածության
բարձրությունը հավասար եր վոչ թե 300, այլ 50
մետրի: Մինոպտիկների տեսակետից սա անհշան ու-
խալ ե: Սա զեահատել կարող ե միայն այն ոգա-
չուն, վոր վարում ե գերաբեռնված սավառնակը:

Պարզ եր, վոր մենք դտնվում եյինք ամպրո-
պային ֆրոնտի զոնայում: Կամ կարելի յեր դրա
վրայից ցատկել մոտավորապես վեց-յոթ կի-
լոմետր բարձրության վրա, կամ անցնել ամպերի
տակով: Ռեյսի սկզբին մեր գերաբեռնված սավառնա-
կը մեծ բարձրություն չեր կարող վերցնել: Կուրո-
բեն թուչել կնշանակեր ոփոկ անել: Ստիպված յե-
ղանք զնալ ամպերի տակով:

Շուտով թոփչքի բարձրությունն իջալ մինչև 30
մետրի: Անձրեւ չեր դադարում, առջևում վոչինչ
չեր յերեռում: Յեթե մեր բախտից ճանապարհին պա-
տահեյին բարձր զանգակատուն, բլրակ կամ զործա-
րանային շենքեր, «Մուկվայի» անձնակաղմը չեր ա-
վարտի իր թոփչքը:

Այս բաձրության վրա թոփչքի շարունակումը
շմտածված ոփոկ կլիներ: Կամա-տկամա մտանք ամ-
պերի մեջ և շարունակեցինք թոչել կուրորեն: Մոտ
300 կիլոմետր թոչելով, մենք վերջապես զուրս յե-
կանք ամպային քողից: Ճիշտ ե, ամպերն առաջվա-
նման խիտ ծածկույթով փակում եյին յերկինքը,
բայց նրանց ստորին ծայրը մի քիչ բարձրացավ:
Մենք կարողացանք թոչել մոտ 100 մետր բարձրու-
թյան վրա: Այսպիսի պայմաններում թոփչքը տե-
ղից համարյա մինչև կիրով:

Սավառնակի արագությունը կազմում եր մի
ժամում մոտ 300 կիլոմետր: Մեր տակից անվերջա-
նալի շարքերով անցնում եյին պուրակներ, գաշտեր,
գյուղեր: Մենք ուշադրություն չեյինք գաղտնում
նրանց վրա: Մեծ տարածության վրա թոչելիս հարկ
չկա մանրամասն կողմնորոշվելու: Կարեոր ե մարշ-
րուտի առանձին փուլերում վորոշվել ըստ խոչոր
ուղենիշերի: Հիմնականում կուրսը պահպանվում է
ըստ ժամանակի, և միայն այն ժամանակ, յերբ ներ-
քեռում յերեռում ե խոչոր քաղաք, մեծ գետ, բարձր
լեռներ — ծառվում ե մարշրուտը:

Ժամը 11 և 08 ըոպեյին մենք անցանք կիրովը:
Ալեքսանդր Մատվեյեվիչը կանոնավոր յերկողմանի
կազ եր պահպանում յերկրի հետ: Բոլորի համար
ուարզ ե ուղղուկապի նշանակությունը հետափոր թը-
ոփչքի ժամանակ: Յերբ մեծ ողաչու Զկալովի սա-
վառնակն անցնում եր բեկույին անձայրածիր անտ-
պատի վրայով, համայն աշխարհն ամեն ժամ ճըշ-
դրիտ գիտեր փառապահն անձնակաղմի տեղը և գի-

տեղ այն բոլորը, ինչ տեղի յեր ունենում սավառնակի մեջ։ Հյուսիսային բևեռ արշավելու ժամանակ Մոլոկի, Ավեքսեյինի ու Մազուրուկի սավառնակները կարողացան միանալ բևեռում գտնվող Վոլոպյանովի սավառնակին այն պատճառով միայն, վոր դրոշակիր մեքենայի տրամադրության տակ եր գտնվում լավ ուղիղացան, վորի ողնությամբ Վոլոպյանովի անձնակաղմբ վայրեջքից հետո հաղորդեց իր տեղի մասին։

Մենք պիտի թուչելինք Խորհրդային յերկրի քիչ ուսումնասիրված շրջանների վրայով։ Հարկադրական վայրեջքի դեպքում մենք մեր վիճակի ու տեղի մասին կարող եյինք լմաց տալ միայն ուղիոյի միջոցով։ Ուստի յեռ դեռ գետնին հրամայեցի շառումանին յուրաքանչյուր ուղիովըսմ սկսել կորողինատները հաղորդելուց։ Գետնին, լսելով սավառնակի աշխատանքը, ամենից առաջ գիտեյին, թե վորտեղ է գտնվում նա։

Ընդհանրապես ուղիոսարքավորմանը մենք մեծ ուշադրություն եյինք դարձնում։ Իմ խնդրանոք մի զործարան պատրաստեց մի փոքրիկ ու թեթև ուղիոկայան, վորն ուներ յերկու ընդունիչ և յերկու հաղորդիչ։ Նրա հատկությունները մենք ստուգեցինք դեպի Ֆիննական ծոցը կատարած փորձնական թըռիչքի ժամանակ, յերբ Բրյանդինակին Բալթիկոց ուղղակի կապ եր պահպանում Բադվի հետ։ Բավական ե ասել, վոր Արեելք թուչելու ժամանակ Մոսկվան անընդհատ յերկողմանի կապ եր պահպանում սավառնակի հետ և նույնիսկ ընդունեց Սպասը-

կում վայրեջք կատարելու վերաբերյալ մեր ռապիտգրամը։ Մենք մեզ հետ եյինք վերցրել նմանապես ավարիային ուղղուկայան, նման այն կայանին, վոր ունենալ պապանինականներն իրենց ճամբարում։ Եյս կայանի դինամոմեքենան ձեռքով ե աշխատում։ Ֆի մարդ պետք ե պտտի կոթը, փոխարինելով եւ լեկտրոկայանի շարժիչը, մյուսն այդ ժամանակ ըդքաղվի հաղորդումով։ «Սարդաթմուռուք» գնչպիսական անվանում են ողաչուները, տեղավորված եր ֆյուզելաժի պոչում։ Եյս նախազդուչությունը ձեռք եր առնված հարկադիր վայրեջքի դեպքի համար, յերբ առջեկի մասում տեղակորված ուղիոկայանները կարող եյին վնասվել։

Կիրովից այն կողմ յեղանակը արագորեն լավացավ։ Խիտ ամպամածությունն աստիճանաբար պատառ-պատառ յեղավ, իսկ այնուհետև համարյա անհայտացավ։ Ողտվելով դրանից՝ մենք սկսեցինք վերըրաձրանալ։ Սավառնակը բավական արագ բարձրացավ 4500 մետր։ Մենք դիմակներ հաղանք, միացրինք թթվածնի սարքերը և շարունակեցինք մեր ուղին այդ բարձրության վրա։

Կիրովից մինչև Ուրալ ճանապարհը քավական միապաղադ եր։ Նեքեռում ձգվում եր սովորական սկզբած։ մանր անտառներ, դաշտեր։ Հաճախ պատահում եյին ճանապարհներ։ Ստարտից մոտավորապես յերեք ժամ հետո Բրյանդինակին յերկոտղ ուղարկեց լին։ Մի կտոր թղթի վրա գրված եր «1000» թվանշանը։ Սա նշանակում եր, վոր մենք անցել ենք 1000 կիլոմետր։ Դեռևս մնում եր թռչե-

լու 6500 կիլոմետր։ Սաշան հաշվեց միջին արագությունը, վոր հասնում եր մի ժամում 314 կիլոմետրի։ Առանձին ուղիմասերում արագությունը կազմում եր 336 կիլոմետր։

Սավառնակը մատենում եր Ուրալին։ Յելնելով յեղանակի քարտեզից, Ուրալից այն կողմ մենք այսուի հանդիպելիքինք անցած ամպրոպային Փրոնտի մնացորդներին։ Ուղղում մացնելով սինոպտիկների նախատեսումների մեջ, յես վորոշեցի համենայն դեպս վեր բարձրանալ դեռևս Ուրալի լեռնաշղթայի նախալեռներում։ Նախագուշությունն ավելորդ գուրս չեկավ։ Մեզ հաջողվեց տեսնել Ուրալի լեռնաշղթայի միայն նախալեռները։ Լեռնաշղթայի մեջ-տեղում մենք անցնում ելինք ամպերի միջով և գրանցից հեռացանք միայն 5500 մետր բարձրության վրա։ Մեզ այնպես ել չհաջողվեց Ուրալը տեսնել վերևից։

— Մի՛ վշտացիր, լեռնային տեսարաններով կը հիմանք վերադարձին, — յերկտողով ինձ միխթարում եր Բրյանդինսկին։

Վորոշ ժամանակ անց շտուրմանը հաղորդեց, վոր Ուրալը մնաց մեր հետեւ։ Մենք գնում ելինք ամպերի վերեկից։ Նրանք խիտ քողի նման ծածկում էլինք գետինը։ Վոչ մի տեղ ամենանվազագույն իսկ լուսանցք չեր յերեւում։ Իսկ մեր վերեւը փայլում եր արեւ, կուրացուցիչ լույսով վողողելով ամպերի ովհիանուը։

Ամպերի վրայից թուչելիս որաչուի ոիրար լրցվում ե մի ինչ-վոր վճիռ անդորրությամբ։ Նրանց

տեսքը վերևից արտասովոր է։ Նրանք ամեննեին էլ նման չեն այն ամպերին, վոր մենք տեսնում ենք կետնից։ Նրանք բաղմազան ձեւեր են ունենում։ Յերբեմն նրանք թվում են ահեղ, հզոր, վտանգավոր, յերբեմն ել, ընդհակառակը, քողարկում են ուղաշուին սպասող վտանգը։

Հաճախ հանդիպում են այնպիսի ամպեր, վորոնց վրայից թուչելիս հիշեցնում ե ովկիանոսի վրա կատարած ճամբորդություն։ Այս զբացումն ուժեղանում ե շարժում շղթաների յուրատեսակ լուսավորումով, վորոնք նման են ծովի ալիքներին։ Հաճախ ովկիանոսից մերթ այստեղ, մերթ այնտեղ դուրս են ցցլում ամպի լիններ։ Ըստ այս բարձունքների հեշտ ե կողմնորոշվել, կուրս պահպանել մի բարձունքից մինչև մյուսը։ Մեկ-մեկ հանդիպում են շատ յուրահատուկ գոյացություններ բարձր զընդանների նման։ Սրանք կայծակնարեր ամպեր են, վորոնք կրում են ելեկտրական հզոր լիցքեր։ Ողաչուին խորհուրդ չի տրվում մտնելու «զնդանների» մեջ, սավառնակն այնտեղ կարող ե փշրվել, ինչպես խաղալիք։ Վերջապես, լինում ե նաև շատ ջրիկ ամպամածություն, վոր հիշեցնում ե ծուխը։ Սպիտակավուն քողի միջից աղոտ կերպով յերեւում ե զետինը, ուղենիշերը ձուլվում են, դժագություններն աղոտանում։

Վերևից նայելիս ամպերի մակերեսը կուրացուցիչ կերպով սպիտակ ե թվում։ Սավառնակի տակ պոված ե լինում կաթնազույն անափ ովկիանոս։ Եեթե թափքը կատարվում ե ամպերի յերկարու-

Եյամբ, կամ ողաչուն զնում ե ընդդեմ ամպերի,
սպա նա առջել կամ կողքից տեսնում ե համատա-
րած մութ պատ առանց վորեե լուսավոր գույնի:
Առ' էլ, մութ պատ:

Ամպերի միջով թռչելիս վոչինչ չի յերեւում:
Չորս կողմը կաթ ե: Զգացածդ կարելի յե համեմա-
տել այն բանի հետ, յերբ գետնին քայլում ես շատ
խիտ մառախուղի մեջ և չես ջոկում նույնիսկ կող-
քովդ քայլող մարդուն: Ամպերի միջով կույր թռ-
ռիչը ժամանակ ողաչուն տեսնում ե իր սավառնա-
կը մինչև թերերի ծայրը: Կույր թռիչքի պայմաննե-
րը շատ միապաղաղ են, բայց և շատ լարված: Բայց
ահա առջեղ կաթը պարզում ե, կործես թե առա-
սորեն ջուր են խառնել նրան: Սիրտդ ել և պար-
զում, գիտես, վոր ամպամածությունը վերջանում ե
և մոտենում ե պարզ յեղանակը: Նա դեռևս հեռու
յե: Պետք ե թռչել դարձյալ մի քանի կիլոմետր:
Բայց ողաչուն ուրախ ե: Իսկ յերբ կույր թռիչքը
վերջանում ե և առջեղ յերեւում ե փայլուն արել,
ողաչուի վրայից կարծես թե մի ծանրություն ե
ցած ընկնում: Ասես յերկար ժամանակ նստած եյիր
ըրի տակ և, վերջապես, ջրի յերես դուրս յեկար:
Առա՞տ լույս, կապո՞ւյտ յերկինք, փաղաքչու
արե...

Ամպերի վրայով թռչելիս կարելի յե դիտել ոսկ-
տիկական մի հետաքրքիր յերեւույթ: Սավառնակը
շատ որիդինալ ստվեր ե զցում ամպերի վրա: Ամ-
պաքողի վրայով առաջանում ե մի մեծ, խիստ դժա-
ռված շրջան, իսկ նրա կենարոնում յերեւում ե

թռչող մեքենա, վորը հիշեցնում ե իսկական սա-
շատոնակ:

Մի անգամ յես առիթ ունեցա թռչելու ամպերի
վրայով, կատարելով սավառնակի ստուգման հա-
սուկ առաջալրանք: Առջեկ կարինում դժոնվում ելին
ինժեներներ, վորոնց առաջ յերբեք չեր պատահել
թռչել ամպերի վրայից: Ույսը նորմալ եր ընթա-
նում: Անսպասելիորեն յես նկատեցի, վոր առջեկ
կարինում նստածներն անհանգստանում են, բացել
են պատուհանները և վախեցած՝ ձեռքով ցույց են
տալիս ներքե: Յես անհանգստացած նայեցի կողքո-
ւ քրքջացի ամպերի վրայով զնում եր իմ սավառ-
նակի ստվերը: Ճամբորդները նրան ընդունել են ու-
ժի մեքենայի տեղ և վախենում են ընդհարումից:

Ուրալի վրա մենք հանդիպեցինք համակցված
ամպերի, վորոնք իրենց մեջ զուզորդում են ամենա-
բաղմազան ձևեր: Տեղ-տեղ ամպերը կուտակվել
կազմել են հզոր անկարգ դադաթներ, տեղ-տեղ
սկառկած են շերտավոր գաթթայի պես, մեկ մեկ ել
սառաջացնում են լուսամուտներ, վորոնցով կարելի
յե տեսնել ներքե զտնվող ամպաչերուը:

Ողաչուի ու շտուրմանի միջև սկսվեց աշխույժ-
դրագրություն: Յես Սաշայից ստացա մի ամբողջ
նամարկ: Նա դրում ե.

«Առաջինը՝ արագությունը՝ 307, յերկրորդը՝
քամի աջից, հետեւից՝ թռւյլ, յերրորդը՝ ի՞նչ տաճ-
րւուելու»

Ողաչուի կարինից շտուրմանի խցիկը դնաց
նույնովիսի լակոնիկ պատասխան.

«Արագությունը խիստ չէ: Զի՞ կարելի քայլին
ուժեղացնել: Մի ումալ սուբճ»:

Հինգուկես կիլոմետր բարձրությունից բացվում
եր բավական ընդարձակ տեսարան: Զախից ձգվում
ելին անվերջանալի ամպաշղթաներ: Ուղիղ մեր ա-
ռաջ միանում ելին այնքան ահարկու զակաթներ,
զոր թվում եր, թե վաչ մի ասվանակ նրանից դուրս
չի դա: Աջից նույնպես կուտակվում ելին ամպաժայ-
ուեր, բայց մի քիչ այլ տեսակի: Կարծես թե փոքր
ինչ այն կողմ ավելի մաքուր է, անդորր: Մեծ զբժ-
ևամությամբ մենք մի անկյունից թեքվում ելինք
քյուսը, յուրաքանչյուր շրջագարձին հանդիպելով
նոր լեռների, նոր ամպակույտերի: Այսպես աստի-
քանարար մենք 80 կիլոմետր թեքվեցինք մեր ճանա-
պարհից դեպի հարավ:

— Այսպես մենք մինչև հասարակած ել կհաս-
նենք— յերկտողով ասում ե ինձ Բրյանդինսկին:—
Ինչ ես հրամայում անել:

— Հարկավոր ե անպայման ճանապարհ դուրս
դալ, — պատասխանեցի նրան: — Ո՞ւր ե Ո՞ք:

— Մի՛ վախիր, ճանապարհը մեզնից չի վախի-
չի, մենք ել նրանից նույնպես: Մենակ թե դու-
այլես աջ մի հույզ տուք: Ոքը կանցնենք Սամարո-
վոյի ու Կոնդինսկի միջև:

Յերենով յեղանակի պրոդոդներից, ամպըո-
պային ֆրոնտը շուտով պիտի վերջանար: Շատ մո-
տիկ մի ինչ-վոր տեղ մեզ լավ յեղանակ եր սպա-
սում: Բրյանդինսկին դիմի ընկալ, վոր իմ մեջ դեռ
չի սպասել հավատը սինոպտիկների գուշակու-

թյունների վերաբերմամբ, և հեզնորեն ուսերը թոթ-
վեց: Նա իրավացի յեր: Սինոպտիկները հաշվի չե-
ցին առել, վոր տարվա այս յեղանակին արեմ խիստ
աաքացնում ե տունդրան: Հզոր վերընթաց հոսանք-
ները բավական ամպամածություն ելին առաջաց-
նում:

Մեր ճանապարհին ընկած տունդրայի ամբողջ
տերիտորիան ծածկված եր ծանր ամպերով: Կայ-
ծակների պատճառով վատանում եր յերկրից տրվող
ուսղիուաղղորդման լսելիությունը, բարդանում եր
ւալվառնումը: Ամպի կուտակումները փակել ելին
ճանապարհը: Հարկ եր լինում խուսանավել սպիտակ
լեռների միջև, վորոնք մոտենում ելին միմյանց:
Յերբեմն նրանք միանում ելին, և կամա— ա-
կամա պետք եր անցնել կույր թուիչքի: Ամպերի մի-
ջև հաճախ փայլում ելին հոկա կայծակներ: Մեր
թուիչքը հիշեցնում եր վաղք յերկար վոլորապտույտ
միջանցքով:

Այս փուլում թուիչքը պահանջեց Ֆիզիկական
հակայտական լարում: Ստիպված ելի լինում շարու-
թակ պատել շտուրմալը, վորպեսզի սպառնակի
թեքվածքն ուղղվի: Ներքեւ ամեն ինչ մութն եր. նշա-
նակում ե անձրե և գալիս: Առջեռում անմերջ վայ-
լում ելին կայծակները՝ լայն, միմյանց հետ խաչա-
ձևող գծերով: Յերբեմն լոկում ելին ամպըռպի վո-
լորապտույտ, չնայած մեր հզոր մոտոռների վունոցին:

Յերբ մենք անցանք Ուրսալի լեռնաշղթայի վրա-
յից և դուրս յեկանք տունդրա, Բջանդինսկին
արտօնությամբ համոզվեց, վոր անթափանց ամպերի
միջով նրան չի հաջողվի նույնիսկ աչքի ծայրով
ուեսնել Կոնդինսկոյն գյուղը՝ վերջին բնակավայրը
հարշըուտի այս փուլում։ Նրանից այն կողմ մի քա-
նի հաղար կիլոմետր տարածության վրա վոչ մի դյուզ
չեր նախատեսվում։ Յես ինքս ել եյի ուղում նայել
Կրնդինսկոյն գյուղի վրա։ Զեր խանդարի իմանալ,
թե ինչ տեսք ունի այս գյուղը վերեից։ Թերես
հարկ լինի մի անդամ ել թուչել այս տեղերով։

Ինչպես և բոլոր ողաչուները, յես մտարերում
եմ քաղաքները, ծովախորշերը, ամեն մի վայր այն-
պէս, ինչպես նրանք յերեռում են ողից։ Հիշողու-
թյան մեջ մնում են քաղաքի ընդհանուր գծագրու-
թյունը, հատակագիծը, խոշոր շենքները, գետի ու
ծոցի գծերը, յերկաթուղիների ու խճուղիների ոճա-
պտույտները։ Այս բոլորը պահպամ ե ողաչուի հի-
շողության մեջ, իսկ հետո դառնում ճշգրիտ ուղե-
նից։ Այս պատճառով Միության յելքովական մասի
վրայով թուչելիս կողմնորոշվելը հեշտ է։ Այստեղ
հաճախ են պատահում յերկաթուղիները և, յեթե ո-
ղաչուն քարտեզը լավ չի ճանաչում, նա կարող է
ուզզակի կուրս վերցնել յերկաթուղով և նրանով
թուչել մինչև վերջին կայանը։ Թուչելիս ողափում են
ուրիշ տեսակի ուղենիշերով ել, մինչև իսկ ցածրա-
նում են այնքան, վոր կարդան յերկաթուղային կայա-

րանի անունը կամ խոչոր ցուցանակը։ Կարելի յե հիշա-
տակել իր տեղը վորոշելու մի յեղանակ ել, վորը
կոչվում ե կողմնորոշում ըստ տեղական բնակիչնե-
րի։ Այս «յեղանակը» հետեւյալն ե. ողաչուն իջնում
և գետին, դուրս և գալիս սավառնակից, առաջին
հանդիպածից հարցնում ե, վորտեղ և դոնվում,
այդ վայրը նշում ե քարտեղի վրա և շարունակում
թոփչքը։ Արեւելք թուչելիս կողմնորոշման այս բոլոր
յեղանակներն ել բացառված եյին վոչ միայն այն
ուատճառով, վոր թոփչքն անվայրեցք եր, այլև
ուղունդը կատարյալ անմարդաբնակ լինելու հե-
տևանքով։

Մեր տրամադրության տակ մնում եյին անցած
ուղին հաշվելու, աստղաբաշխական և ուղիոկողմ-
նորոշման մեթոդները։ Շտուրման Ալեքսանդր Բըր-
յանդինսկին հիանալի տիրապետում եր արդի ողա-
նավագնացության բոլոր մեթոդները և ուղածդ մո-
մենտին ճշգրիտ գետեր, թե վորտեղ ենք գտնվում
մինչ։

Յերբեմն սակավագեղ հանդիպող լուսանցքներից
մեզ հաջողվում եր տեսնել յերկիրը։ Նրան տեսնե-
լով, մենք մեծ բավականություն եյինք ստանում,
բայց այդ անողուտ եր տեղորոշումը ճշելու համար։
Ցածում փոված եյին համատարած ճահիճներ։ Բըրյան-
դինսկին վորձեց քարտեղը համեմատել գետնի հետ,
բայց անհուսալի համարելով, հրաժարվեց դրանից։
վոչ գետնին, վոչ ել քարտեղի վրա հիշատակելու
արժանի բան չկար։ Անվերջանալի ճահիճների մեջ
սակավագեղ գծագրվում եյին մանր գետերի հու-

ները; Նրանք բոլորը յերկվորյակների պես նման են յին միմյանց, բայց Բրյանդինսկին ինչ-վոր մի հատուկ հոտառությամբ իրարից տարբերում եր այս միատիպ գետակները: Ահա նա յերկառող ե ուղարկել.

— Ներքեւում նազիմ փոքրիկ գետակն ե: Հետո լավ նայեց, ծիծաղեց և ուղարկեց նոր յերկոտղ:

— Ել ի՞նչ ես ուզում: Ես գետը նույնիսկ պըլյաժ ունի:

Տունդրայի վրայով թուչելը բավական միապաղադ եր: Մեքենան առաջ եր դնում մի ժամում 285-300 կիլոմետր արագությամբ, բայց այս մասին կարելի յեր իմանալ միայն շտուրմանի գրածներից: Յուրաքանչյուր հարյուր կիլոմետրը նման եր առաջ անցած հարյուրավոր ու հազարավոր կիլոմետրներին: Ամեն անդամ վորոշակի ժամանակ անց Բրյանդինսկին լուր եր ուղարկում ճիշտ հիշատակելով անցած տարածությունը: Նրա յերկտողները զարժանաւի եյին իրենց ծայրահեղ պրոֆեսիոնալ խոտությամբ:

— Յե՞րբ կլինի Յենիսեյը, — հարցրի յես նրան:

— 3 ժամ 07 րոպեյից՝ Մոսկվայի ժամանակով ժմամբ 19 և 12 րոպեյին, — պատասխանեց Բրյանդինսկին:

Առաջ անցնելով, նկատեմ, վոր Յենիսեյն անցանք իրոք ճիշտ նշված ժամանակին, առանց վորեն բոպե ուշանալու (իսկ մենք հո ամեն բոպե թոշում եյինք հինդ-վեց կիլոմետր):

Յերեկոն մոտենում եր: Նրա մոտեցման մասին մենք կարող եյինք իմանալ ժամացույցի ցիֆեր-

բառառով միայն: Բնությունը վոչ մի նշան չեր տալիս որվա վերջանալու մասին: Արևո առաջվա պես պայծառ փայլում եր յերկնքում, կաբինում տաք եր, մթնչաղի ստվերներ չկային: Յեվ ահա հեռու-հեռու առաջներս յես տեսա յերկու միանդամայն ուղեղ, կարծես թե քանոնով գծված, բացարձակ զուգահեռ դետակներ: Նրանք ձգվում եյին հյուսիսից հարավ, սկսվելով մի լայնության վրա զտնվող յերկու կետից: Յես չկարողաց հասկանալ, թե բանն ինչումն ե: Սյապիսի ուղիղ գետեր չեն լինում բնության մեջ: Չուցե սրանք ջրանցքնե՞ր են: Բայց վո՞րտեղից են սակավաբնակ տունդրայում յերկրաչափորեն ուղիղ ջրանցքները: Գաղտնիքը բացվեց այն ժամանակ, յերբ մենք մոտեցանք նրանց: Պարզվում ե, վոր փոքրիկ գետի ափին վառվում են յերկու հսկայական խարույկ: Ծուխը հավասար ժապավենի նման քառուց ձգվում եր դեպի հարավ:

Կրակը տեսնելով, յես քաղց զդացի և ինդրեցի Բրյանդինսկուն վորեն բան ուղարկել ինձ ուտելու: Բոլոր մթերքները գտնվում եյին նրա մոտ: Սաշան ոլոկեց մեր թուիչքից մի քանի ժամ առաջ տապակած հավի ախորժելի վոտքը: Բայց հազիվ յես սկսել եյի ուտել, յերբ ախորժակո վակվեց: Միայն խմել եյի ուզում: Թոփչքն ամբողջ ժամանակ կատարվում եր մեծ բարձրության վրա, մենք շարունակ ողտը զում եյինք թթվածնային սարքերից, ուստի և կոկորդներս չորացել եր:

— Խմելու բան առուր, — խմորեցի յես Բրյանդինսկուն:

Նա բացեց տերմոսի խուժը, տաք թէյ լցընց ու
մեկնեց ինձ: Յես խմեցի, բայց կարճ ժամանակ հե-
տո նորից սաստիկ ծարավ զգացի: Թթվածնի ան-
ընդհատ գործածությունն արտահայտվում էր որդա-
նիքմի մեջ: Ծարավից խուսափել կարելի յեր մի
կերպ միայն՝ փակելով թթվածնի խողովակը: Բայց
սա հավասարացր եր ինքնասպանության:

Մեծ բարձրության մեջ ողը շատ նոսր է, և
նորմալ չնչոռության համար ողը չի բավարարում
մարդուն: Հինգուկես կիլոմետր բարձրության վրա
ճնշումը մոտ յերկու անգամ ավելի պակաս է, քան
յերկրի յերեսին: Ներծծելով նույն ծավալով ող,
ինչ վոր գետնի վրա, մարդ ստանում է թթվածնի
միայն կես բաժինը: Ավելի վեր բարձրանալիս չըն-
չոռությունն ավելի յե դժվարանուի: Թթվածնի
պակասությունն անմիջապես արտահայտվում
է մարդու որդանիքմի մեջ: Շարժումները ծուլորեն են
կատարվում, սկսվում է ապատիա, քնկոտություն:
Թթվածնային տևական քաղցը հանդում է մահվան:

Բարձր թուչքների ժամանակ միշտ ողտվում են
թթվածնից: Նկատի ունենալով մնալ մոտ մի որ ու
դիշեր մեծ բարձրության մեջ, մենք մեղ հետ վերց-
րինք կենսատու դադի՞ ջրիկ թթվածնի բավականա-
չափ պաշար—10 լիտր, վորը գաղի վերածած կաղ-
սում եր մոտ 8000 լիտր: Փորձը մշակել է թթվածնի
դործածության վրոշակի նորմա՝ նայած թուչքի
բարձրության: Բարձրության մեծացումով աճում է
նաև թթվածնի սպառման նորման: Թթվածնային
սպառատուրան ինքնին բավական պարզ է: Կարինում

դրվում է մի բալոն հեղուկ կամ գազանման (150
մինուլորտի մնչումով) թթվածնին: Բալոնից զնում և
մի մետաղե խողովակ, վորը փոխվում է կաշեփողի,
իսկ սա միացած է այն գիմակին, վոր ողաչուն
հաղնում է յերեսին: Յանցին միացված է մի սարք,
վորն ինքնաբերաբար դողավորում՝ և թթվածնի
հանձնումը՝ նայած բարձրության:

Սոլորաբար յես ողտվում էյի գաղանման թթվ-
ածնին պարունակող սարքերից: Այս թուչքին յես
առաջին անդամն եյի հեղուկ թթվածնի վերցնում
դիմավորապես այն պատճառով, վոր նա թույլ եր
տալիս տարայի (բալոնների) մեջ տնտեսել մոտ 80
100 կիլոգրամ, իսկ գերաբեռնված մեքնայի համար
յուրաքանչյուր զրամը նշանակություն ունի: Թուչ-
քը ցույց տվեց, վոր հեղուկ թթվածնը միանդա-
մայն պիտանի յե հեռավոր ույսերի ժամանակ և
շատ հարմար է ողտվելու տեսակետից:

Շատերը կարծում են, թե թթվածնն ներշնչելն
անախորժ է: Սա սխալ է: Առաջին ումակերն են մի-
այն, վոր հատուկ սպեցիֆիկ տարահամ ունեն:
Բայց մեկ-յերկու բողե հետո մարդ չնչում է մի-
անդամայն նորմալ կերպով, մոռանալով, վոր նա
ողտվում է վոչ թե սովորական ողից, այլ սնվում է
խտացրած թթվածնով: Յեթե մարդ բարձրության
մեջ յերկար ժամանակ մնա առանց թթվածնային
սարքի, քաղցածանա, իսկ հետո բերանն առնի կա-
շեփողը, առա անմիջապես կզլա լիարյուն չնչոռու-
թյան կենսատու ուժը: Կարծես թե լրիվ ումակերով

լամում ես կայտառության դավաթից, վայելում կենսառու եքստրակտ:

Բարձրության մեջ թռչելը պահանջում է շատ մարզվածություն: Յես առիթ եմ ունեցել մի սերիա վորձեր կատարել ուսումնասիրելու նոր մթնոլորտի ազգեցությունը՝ մարդկային որդանիզմի վրա: Մի մեքենայի մեջ նստում եյի յես, մյուսում՝ դիտող սղաչուն: Մենք բարձրանում եյինք մինչև 6000 մետր և այնտեղ կատարում մի շարք եկոլոցիզմաներ: Յես իմ սավառնակով մոտենում եյի ճախից—դիտողը դընդացիրն ուղղում եր ինձ վրա: Յես մոտենում եյի աջից՝ նա զնդացիրն ուղղում եր մյուս կողմը: Բայց միքանի այսպիսի շարժումներից հետո չմարզված ողաչուն չնչառպառվում եր և լաթի նման մնում նստած, առանց զնդացրին մոտենալու: Յեթե սա ոդային իսկական կավում լիներ, յես նրա հետ կը վարվեյի այնպես, ինչպես ցանկանայի:

Մեծ բարձրության մեջ հարկավոր ե ուշադիր կերպով հետեւել իրեն, վորքան կարելի յե քիչ շարժումներ անել, վորոնք լինեն ամենից խնայողական շարժումները: Յերկարամյա պրակտիկայի հետևանքով յես ինձ վարժեցրել եմ նվազադույն շարժումների: Խուսափում եմ կտրուկ շրջադարձերից, հետ չեմ դառնում, դլխավորապես աշխատում եմ աչքելով: Հատուկ ուշադրություն եմ դարձնում թթվածնային սարքին: Սրանումն ե յուրաքանչյուր բարձրագույն թռիչքի հաջողությունը: Յեթե թթվածնային սարքը վշանա՝ պետք ե անմիջապես իջնել, դըրանով իսկ հաճախ դադարեցնելով թռիչքը:

Բարձր թռիչքների պատմությունը քիչ դեպքեր չկիսե, յերբ թթվածնային ապարատը հանկարծ հրաժարվում ե աշխատելուց: Շատ հաճախ սա ուղացուին հասցնում ե ուշադրացության: Զղեկավարվող սավառնակը քարի նման ընկնում է գետին, և ավարիան համարյա անխուսափելի յե: Այս իմաստով շատ ցուցական եր ողաչու Մ. Ալեքսեյվի թռիչքներից մեկը, վորի նպատակն եր առևտրական բեռով հանդերձ բարձրության ուկորդ խփել: Յերբ Ալեքսեյին սավառնակը դժոնվում եր մոտ 10000 մետր բարձրության վրա, նրա թթվածինը հանկարծ դադարեց հոսելուց: Ալեքսեյվը դիտակցությունը կորցրեց: Զղեկավարվող մեքենան հոկայական արագությամբ նետվեց դեպի գետին: Մոտ 2000 մետր բարձրության վրա ողի ճնշումից պատովեց առջևի կարինի վերնակարը: Ողի կորուկ հարվածից Ալեքսեյվը մասսամբ դիտակցության յեկավ, բայց վերջինս այնքան դեռ մթագնված եր, վոր նա մոռացավ շաստին իջեցնել և մեքենան նստեցրեց Փյուզելաժի վորի վրա: Միայն թռիչքային մեծ փորձը, շարժումների մշակված ավտոմատիզմը նրան վըրկեցին անխուսափելի աղետից:

Նման մի դեպք տեղի ունեցավ ինձ հետ 1936 թվին մի մարզական թռիչքի ժամանակ: Ընկերների պատմածից յես զիտեյի, վոր թթվածին չլինելու դեպքում ուշադրացությունը տեղի յե ունենում անակնկալ կերպով: Ուստի մշտակես շատ ուշադիր յես հետևում եյի թթվածնային սարքի աշխատանքին, վորովհետեւ ուշադրացությունն սկսելուց հետո

ուշ կմնի վորեւե բան ձեռնարկելու համար։ Սովորականի մատուցումը դադարում է այն ժամանակը, յերբ սարքը սառչում է։ Յեվ ահա 9000 մետր բարձրության վրա յես նկատեցի, թե ինչպես մետր բարձրության վրա յես նկատեցի, թե ինչպես լուսագործի սլաքը տարուրելովում է։ Վայրկենանդիկատորի սլաքը տարուրելովում է։ Վայրկենանդիկատորի սարքն սկսում է կատակել, յես կուահելով, վոր սարքն սկսում է կատակել, յես անմիջապես մեքենան տարա դեպի ցած։ Քանի ու թթվածնի մատուցումը վերջնականապես չերդադարել, յես կարողացա իջնել 6000 մետրի վրա։ Այս բարձրության մեջ յես կարող եյի ապրել նաև առանց թթվածնային սարքի։

Ինչ-վոր միջոցով այս անցքի մասին տեղեկացրել եյին ընկեր Ստալինին։ Մի քանի որ հետո յես կրեմումն եյի և խնդրեցի թույլ տալ հերթական ուելորդային թոփչք կատարելու։ Ընկեր Ստալինը հարցրեց։

— Իսկ ինչպես է ձեր թթվածնային սարքի վեճակը։ Հարկալոր և հատուկ հանձնաժողով նշանակել, վորն ամեն ինչ ստուգի թոփչքից առաջ։

Ապարդյուն կերպով ջանում եմ դիմի ընկնել, թե վորտեղից և ընկեր Ստալինն իմացել այս անցքի մասին։ Մի քիչ լուելով, պատասխանում եմ, վոր ամենից ավելի լավ ու հուսալի կլինի, յեթե ամեն ինչ յես ինքս ստուգեմ։

— Լավ, — ասաց ընկեր Ստալինը, — միայն թե ամեն ինչ ստուգեք ինչպես հարկն է։

Ու պատրաստվելով թուչելու դեպի Արևելք, մենք մեծ ուժադրություն դարձրինք թթվածնային մեծ սարքավորմանը։ Բոլոր սարքերը ինամքով ստուգ-

վեցին ամենաբավարար պայմաններում։ Իմանալով իոր թոփչքի հաջողությունը կախված է անձնակազմի աշխատունակությունից, մենք ձգտեցինք անել առավելագույն հնարավոր բանը, վորպեսզի պահպանենք մեր ուժերը մեզ հանձնարարված դործը կատարելու համար։ Ամբողջ թոփչքի ժամանակ յես անընդհատ հետևում եյի այն սարքերին, վորոնք հսկում են թթվածնային ապարատուրայի աշխատանքին։ Մոտենալով Յենիսեյին, մենք դոհունակությամբ համոզվեցինք, վոր ապարատուրան լավ է աշխատում և վոր թթվածնի պաշարը լիովին ապահովում է ճանապարհի շարունակումը մեծ բարձրության վրա։

Սիրիսի Յենիսեյ մեծ գետը մի յուրատեսակ աշխարհագրական սահմանադիմ հանդիսացավ մեր ճանապարհի համար։ Մինչև Յենիսեյ ձգվում եր միալիր ճահճուտ տաղառուկ տունդրան։ Այս գետից հետո վայրի բնույթը խիստ փոխվեց, յերեացին կանաչ, անտառներ։ Սկսվում եր սիրիսիան մեծ սայդան։

— Իսկ լավ է հիմա անտառում, վոլոդյա, — հարցնում է ինձ Բրյանդինսկին։ — Ինչքան ավելի հաճելի պատկեր է, քան տունդրայում։ Սակայն այստեղ ել սարսափելի տեղեր չեն. մի ժամանակ մարդիկ պիտի ապրեն։ Այս, նույնիսկ բևեռումն եյին ապրում, իսկ տունդրայում համենայն դեպս ավելի տաք է։

Պողկամեննայս Տունդրակայի ու Յենիսեյի միացման տեղում Բրյանդինսկու սուր տչքը նկատեց քարտեզի վրա չնշանակված ինչ-վոր բնակավայր՝

կազմված մի զույգ տնակներից։ Այս մասին նա անմիջապես ուրախալի յերկառղ ուղարկեց ինձ։ Մետաղամից ուրախացանք։ Մեղ համար հաճելի յերւեսնել, վոր ահա այստեղ, վոչ հետու մարդիկ են ասլրում։

Յենիսեյի ավագանը բաց եր։ Մենք շատ լավ տեսնում ենքնք յերկինքն ու յերկիրը։ Քիչ ժամանակ անց առջեից ել կրկին յերեաց ամպերի պատը։ Սկզբում դրանք քիչ եյին, հետո ավելի ու ավելի շատ, յերկիրը նորից ծածկվեց խիտ սանանցանելի վերակով։ Միայն սակավադեպ լուսամուտներից յերեսում եյին լեռնաշղթաները։

Հետագաւ ամբողջ ճանապարհն ընկած եր լեռնային յերկրի վրայով։ Լեռնաշղթաները փոխարինվում եյին լեռնածյուղերով ու նոր լեռնաշղթաներով՝ միատեսակ, մեկը մյուսին հար և նման։ Դեռ քիչ առաջ սփոռոցի նման հարթ գետինը կնճռռառում եր, հոկա ծալքեր ստանում։ Մինչ այդ սալառնակը ծախսեց բենզինի նշանակելի մասը, շատ ավելի թեթևացալ և մենք հեշտությամբ հասանք. 6500 մետր բարձրության։ Թուիչքը շարունակեցինք այս բարձրության վրա, բայց այստեղ ել յերբեմն հարկ եր լինում թռչելու ամպերի միջով կամ խուսանավելու նրանց միջև։ Արեւ մերթ յերեսում եր մեր գլխավերել, մերթ ծածկում կաթնաքողի հետեւ։

Բրյանդինսկին, թերը թափահարելով, ցույց տվեց գեղի հյուսիս։ Յես նայեցի ձախ. ամեն ինչ նորմալ ե, ամենուրեք ծղվում են ամպերը։ Այն ժամանակ Սաշան յերկող ուղարկեց ինձ։

Զալս կողմի յեղանակը ողաչուի յերազն է։ Յեվ իսկապես, թվում եր, թի բավական ե մի քանի կիլոմետր թռչել ձախ, և ամպային գերությունը կվերջանա, կոկովի տանելի միջավայր, վորտեղ կարելի կլինի հանդստանալով թռչել։ Բայց այս տպավորությունը խարուսիկ եր։ Լալ յեղանակ վորոնելով, մենք յերևի պիտի հանեյինք համարյամինչ Սառուցյալ ովկիանոս։

ԳԻՇԵՐԸ ԱՄՊԵՐԻ ՎՐԱՅՈՒՅՆ

Սավառնակը թռչում եր առաջ, ամեն մեկս չբաղված եր իր գործով։ Ժամանակն աննկատելի տնյունում եր։ Մեծ եր գարմանքս, յերբ շատուրմանը հայտնեց, վոր մոտենում և կես գիշերը։ Նայեցի արեին—նա գեռես բավական բարձր ե։ Հստ յերեւկույթին, յես այնքան եմ հրապուրվել նավավարությամբ, վոր կորցրել եմ ժամանակի զգացումս, թեև սմբն ժամ յերկառղ ել ստանում շտուրմանից, թե «այսքան ժամում անցել ենք այսքան կիլոմետր»։

Ավիացիոն լեզվով արտահայտված, կարելի յետել, վոր մենք ընդունեցինք թռիչքի սահմանված ուժիմք։ Սոտուներն աշխատում եյին ձշքրիտ և հստակ։ Նրանց աշխատանքի ձայնը համաչափ եր ու թիալար։ Բոլոր սարքերի սլաքները նույն անդերումն եյին, վորտեղ վոր պետք ե լինելին։ Կուրսը պահպանվում եր անփոփոխ, պատույտների քանակը՝ նույնպես։ Վորոշակի ուժիմք սահմանվեց նաև մեր աշխատանքի համար։ Համաչափ ինքնազգացում, ան-

դորր վստահություն, ներվային լաքման բացակայություն: Մենք յերկուսս ել մի ամբողջություն ենք կազմում ասպառնակի հետ միասին, աշխատում ենք բոլոր սարքերի հետ լիակատար համերաշխությամբ:

Դատելով ըստ Բրյոնդինսկու հաշիվների, 12 ժամում մենք թուել ենք մոտ 4000 կիլոմետր: Սկսած Առուկվայից ճանապարհի միջին արագությունը կազմում եր մի ժամում 322 կիլոմետր, իսկ վերջին փուլում նա հասավ 350 կիլոմետրի:

Սապառնակի մեջ կյանքն ընթանում եր չափված ու անշտապ: Ամենքով զբաղված եյինք մեր գործով: Իսկ աշխատանք կար թե՛ ողաչուի և թե՛ շուրջանի համար: Ողաչուն պետք ե վարեր սավառնակը, ովտեր դեկանիվը, գործեր պեղալներով, անընդհատ հետեւը անսահման թվով սարքերին: Իսկ դրանք քիչ չեյին՝ պտույտների հաշվիչներ, յուղի և բնույթի ջերմաչափեր, մանոմետրեր, բենզինաչափեր, ալտիմետրեր, արհեստական հորիզոն, թեքաչափ, թթվածնասարքի ինդիկատոր, նորմալ և քարտադնիսային կողմնացույցներ ևայն ևայն. իհարկե, յես էիտակցաբար ուշագրությունն չեյի ուեռում յուրաքանչյուր սարքի սլաքիւմ: Այս բոլորն արվում եր մեխանիկորեն, վարժությամբ: Սարքերին հետեւելու մասին մի տեսակ անհարմար ել ե զբեկ: Աղաչուն կը կարդա այս խոռքերը և կասի. համար բան գտավ առելու, չե՞ վոր այս բոլորը կատարվում ե ի միջի այլոց: Միանդամայն ճիշտ ե:

Անտեղյակ մարդուն կարող է անհասկանալի լի-

նել, թե ինչպես ե ողաչուն կարողանում միանդամից հետեւ յերկու տասնյակ սարքերին ու դրա հետ միասին մեքենան վարել: Թուիչքի ժամանակ պետք ե կարողանալ վոչ միայն կենտրոնացնել, այլև ապահենացնել ուշադրությունը: Սա միանդամից չի հաջողվում և պահանջում ե մեծ պրակտիկա: Յես հիշում եմ, թե ինչպիսի տանջանքներով եյի յես սովորում թուչելու արվեստը: Ավելացնոն դպրոցներում աշակերտին աստիճանաբար են վարժեցնում սարքերի ողտագործմանը. նախ մեկը, հետո յերկուսը, հետո յերեքը: Ակզրում սովորող ողաչուին սովորեցնում են սավառնակը հորիզոնի ուղղությամբ վարել այնպես, վոր քիթը վեր ու վար չին: Հետո մացնում են հետեւյալ տարրը՝ վերացնել թեքումները: Յեշ յերիտասարդ ողաչուն միանդամից հակայական բեռնավորում ե զգում: Բայց ամենաղժվարին պահն սկսվում ե այն ժամանակ, յերբ նրան ստիպում են հետեւ յերրորդ սարքին: Սովորող ողաչուին ասում են, թե պետք ե հետեւել, զոր մոտոռը տա 1500 պտույտ, վոր սավառնակն ուղիղ գնա, զեսուղեն չհակիի, չթեքիի, չճոճիի: Յերիտասարդ ողաչուն անսպառ աշխատանք ունի: Հենց վոր կարգի յես դնում պտույտները—սավառնակն սկսում է իջնել, ուղղում ես—պտույտակը թուլացնել, պտույտները քչացնում ես—մեքենայի քիթն իջնում ե: Ողաչու աշակերտը հորիզոնն է բռնում, հաստատում ե մոտոռի աշխատանքի ուժիմը—սավառնակն այդ ժամանակ ընկնում ե թեքի

վրա : Թեքումը վերացնում էս — մեքենան չեղվում
ե մի կողմ :

Աստիճանաբար ողաչուն վարժվում ե համակցել
շարժումները , ասպակենաբոնացնել ուշադրությունը ,
հետևել բոլոր սարքերին ; Բայց հարցրեք ողաչուին ,
թե դժվա՞ր ե , արդյոք , լավ յեղանակին թռչելը :
Նա կղարմանա , կասի , վոր լավ յեղանակին կարելի
յե նույնիսկ ննջել ; Նա չի զգում իր աշխատանքի
ծավալը , թեև սա մեծ ե ու բազմազան ; Ամեն ինչ
կատարվում ե մեխանիկորեն , սովորությամբ : Յերբ
ուզում ես ամպի կողքովն անցնել , աղա այդ ժամա-
նակ չես մտածում , թե պետք ե աջ վոտքը տալ : Սա
կատարվում ե ինքնարերաբար : Զանք ե պահանջ-
մում միայն այն ժամանակ , յերբ թռիչքը կատար-
վում ե աննորմալ պայմաններում կամ յեւք պետք
ի անկանոն շարժում անել :

Բայց դատարկ պարձենկոտություն կլիներ ա-
սել , թե սովորական հոկողությունն ու սովորական
նախավարությունն աշխատանք չե , մանավանդ այն-
պիսի թռիչքի ժամանակ , ինչպիսին մերն ե : Բացի
սականակը վարելուց , յես անընդհատ ստուգում ե-
մի շտուրմանի գործունեյությունը , ամբողջ ժամա-
նակ հետեւում եյի քարտեզով սալառնակի ընթաց-
քին , հաշվում եյի արագությունը , ճանապարհի
տարրական հաշվումներ կատարում : Իմ բարձա-
մյա ավիացիոն կյանքի ընթացքում յես շատ քիչ եմ
առիթ ունեցել շտուրմանի հետ թռչելու : Բոլոր թռ-
ուիչքների ժամանակ նախադասությամբ զբաղվել
եմ յես ինքս ; Յեկ այժմ , բարձր գնահատելով Բը-

ըյանդինսկու վարպետությունն ու լիովին վատահերով
նրան , յես այնուամենայնիվ , ըստ սովորության կա-
պարում եյի շտուրմանի հաշվարկումները :

Պակաս աշխատանք չուներ նաև Բրյանդինսկին ,
Նա հոկայական ուշագրություն եր գարձնում կողմ-
նորոշմանը : Ամբողջ ճանապարհի ընթացքում նա
համարյա ամեն մի բոլե պետք ե պահեր կուրսի
հաշիվը , վորոշեր սավառնակի տեղը : Շատ ժամա-
նակ եր խլում յերկրի հետ ուղիոկապ պահպանելը ,
զանազան ուղիովգրամների ստացումն ու հանձնու-
մը , ողերկութարանական ամփոփագրերի ստացու-
մը :

Բացի մնացած բոլորից , Սաշան բուֆետապանի
պարտականություններ եր կատարում , վորոշետե-
րուոր մթերքները դտնվում եյին շտուրմանի
խցիկում : Մենք մեզ հետ վերցրել եյինք տերմուներ
տաք սուրճով ու թեյով , տապակած հավ , խոճկոր
(Բրյանդինսկու հատուկ պատվերով) , բուտերբուղ-
ներ խավյարով , յերշիկով ու կարաղով , խնձոր :
Ավարիային պաշարի մեջ կային զանազան կոնցեն-
տրատներ ու կալորիխառատ մթերքներ , վորոնք կրա-
չարաբեյին յերկու շաբաթ : Սկզբով յես չեյի ու-
ղում շատ մթերք վերցնել , բայց վորքան շատ եյի
նայում թռիչքի քարտեզին , այնքան ավելի եյի ու-
ղում պաշար վերցնել : Մենք մեզ հետ վերցրել եյինք
նաև կաթսաներ , թեյաման , գանակներ , պրիմուս :
Այս բոլորը կարող եր պետք դալ հարկադրական
վայրեջքի ժամանակ :

Սակայն վոչ յես , վոչ եւ Բրյանդինսկին թըու-

չելիս չեյինք ուզում ուտել: Թոփչքի ամբողջ ժամանակամիջոցում յես կերա կես խնձոր և հավից մի կտոր: Բրյանդինսկին նույնական վոչինչ չկերավ: Հեռավոր թոփչքների ժամանակ ախորժակի փակ լինելը այսպես ասած՝ բայն տարածված յերեսոյթ և ինչպես հայտնի յե, Ստալինյան մարշրուտով և բներոի վրայով թուչելիս Զկալովը, Բայդուկովը և Բելյակովը նույնպես իրենց ուտելու պաշարեղենը թողել ելին անձեռնմխելի: Գրոմովը, Յունաշևը, Դանիլինը նույնպես չեյին ուզում ուտել:

Բայց մենք շատ եյինք խմում: Ողում անցկացրած 24 ժամում յես խմել եմ վոչ պակաս, քան մի լիտր սուրճ: Յես անընդհատ յերկոտղներ ե, վոր ուղարկում եյի Բրյանդինսկուն, պահանջելով տալ մի ումագ սուրճ կամ թեյ: Մեղ տանջող ծարակն եր անուղղակի պատճառն այն փոքրիկ անախորժության, վոր ունեցավ Սաշան նոր տերմոսը բացելիս: Յերբ նա խուփը հետ պտտեց ու խցանը հանեց, տեղմոսից դուրս թռավ հեղուկի շատրվանը: Տերմոսները լցրել եյին գետնին, նորմալ ճնշման պայտաններում, իսկ այժմ մենք թռչում եյինք 5 և կես կիլոմետր բարձրության վրա, վորտեղ մթնոլորտային ճնշումը շատ քիչ է: Սրա հետեանքով հեղուկն ուժով վեր թռավ, իսկ Բրյանդինսկին, չնայած 20 աստիճան սառնամանիքին, թեթեակի խաշեց ճեռքը:

Այսպես զանորդան գործերի վրա եյինք մենք, յերբ դիշերն անցավ:

Շատ դիշերներ եմ յես անցկացրել ողում, բայց

այսպիսի դիշեր դեռ յերբեք չեմ տեսել: Սավառնաման գնում եր հինգ և կես կիլոմետր բարձրության վրա: Յերկիրը պատած եր ամպերով: Սրանք լեռնապրա: Եյին մեր շուրջը՝ ձախից, աջից, առջևից, թոփչքի գծից վերև ու ներքեւ: Վոլորապտույտ մինչավոր մենք սուրում եյինք դեպի Արևելք՝ ցերեկան լոնդառաջ:

Մեր գտնված լայնության վրա ամառը դիշեր լինում ե բառիս վոչ լրիվ իմաստով: Արևը կարձանականում ե հորիզոնից և ապա կրկին ծառակում: Գիշերվա ժամերին համարյա նույնպես լույս է, ինչպես և ցերեկը:

Բայցեայնպես գիշերն զգացվում եր: Ամպերի գույնը մթնում եր, նրանք թվում եյին մուլգորչ: Աջ կողմը հարավում հորիզոնը մութն եր, ձախում՝ լուսավոր ու պայծառ: Արևը կամաց-կամաց իջաված, յերկրի յեղրից այն կողմ: Լուսավոր հետքով շած, յերկրի յեղրից այն կողմ: Լուսավոր հետքով յերեսում եր, թե ինչպես նա շարժվում ե հորիզոնի յերեսում: Թվում ե, թե բավական ե ձեռքը գծի հետեւում: Թվում ե, թե բավական ե ձեռքը գծի հետեւում: Մոտավորապես 50 բոպե հետո արևը նոշել հետ: Մոտավորապես 50 բոպե հետո արևը նոշել հետ:

Գիշերն սկսվելուց հետո յեղանակն ավելի ցըրտեց: Թոփչքի մեկնելիս մենք շատ տաք հալնվեցինք: Վորովհետեւ սավառնակի կարինը հատուկ ջեռուցում է: Յենք հաղել եյինք բրդե սպիտակեղենն, Փուչուներ: Յենք հաղել եյինք բրդե սպիտակեղենն, Փուչուներ, գամշե կոստյումներ սկյուռի մորթե կոշիկներ: Բացի սրանից, յես վոտքերիս՝ մորթե կոշիկներ: Բացի սրանից, յես վոտքերի մորթե բոտեր, վորոնք հաղնում են

Աւնտերի վրայից։ Այս բոտերը հին վաստակավոր վոտնամաններ ելին։ Նրանց մեջ յես սովորաբար թռչում եյի վերև, ստրատոսֆերա։ Փորձնական թըռիչքների ժամանակ յես առիթ եմ ունեցել ծանոթանալու բարձրաթիւ ողաչուներին հարմարեցրած և հապկապես նրանց համար պատրաստած բազմատեսակ վոտնամանների հետ։ Յես համոզվեցի, վոր համարյա գրանք ըոլորն ել անպետք են։ Դրանք կարում են այնպիսի մարդիկ, վորոնք վոչ մի գաղափար չունեն գերցածք ջերմաստիճանների ու մեծ սառնամանիքների մասին։ Այս վոտնամանների մի մասը շատ գեղատես եր. նրանցով ամոթ չեր նույնիսկ թատրոնում յերեալ։ Իսկ մեծ բարձրության վրա վոտքերն այսպիսի ելեղանո մորթե կիսակոշիկներում սառչում են։ Այն ժամանակ յես վերցրի վոչխարի խիտ մորթուց կարած իմ բոտերը։ Սրանց մեջ ե անցել թմ ամբողջ բարձրաթոիչ դործունեյությունը։ Նույնիսկ 60 աստիճան սառնամանիքում տյապիսի բոտերի մեջ վոտքերն այնքան տաք են մենում, ինչպես վառարանում։ Այս բոտերը յես հետո վերցրել եյի նաև դեպի Արևելք թռչելիս։

Յերեկվա ժամերին թռչելիս մենք ցուրտ չեյինք զգում։ Ճիշտ ե, շտուրմանի կարենի դրսից կախված ուերմոմետրը ցույց եր տալիս 20 աստիճան զրոյից ցածր, բայց սալառնակի ներսում համեմատաբար տաք եր։ Արևը բարձրության վրա սաստիկ տաքացնում եր։ Յես հանեցի կաչվե մուշտակավոր կուրտկաս և մնացի մի ֆուֆայկայով, տաք սաղավարտս իփոխարինեցի հասարակով, մուշտակավոր ձեռնոցնե-

ըրս մի կողմ դըրեցի։ Իմ հոչակավոր բոտերն ընկած ելին հատակին։ Բայց հենց վոր արևն անցավ հորիզոնի հետեւ, կարենը ցրտեց։ Ստիպված յեղա հաղողուու մուշտակե կուրտկան, մուշտակե ձեռնոցներն ու մուշտակե սաղավարտը։ Նույն բանն արեց նաև Բրյանդինսկին։

Արևածաղկը արտասովոր չափով գեղեցիկ եր։ Եսո մի բոպէ նույնիսկ ափսոսեցի, վոր անձնակազմի մեջ նկարիչ չկա, վորը կարողանար կտավի վրա տպավորել այս սքանչելի տեսարանը։ Հավատացած եմ, վոր յերկը վրա վոչ վոք այսպիսի հրաշագեղ դույներ չեւ տեսել։

Մեր առաջ կուրսի ուղղությամբ մենք նկատեցինք պայծառ կրակ։ Յես սրա վրա դարձրի Բրյանդինսկու ուշաղրությունը։

— Սա ի՞նչ բան ե։

— Սա կրակի տեղ չեւ ։ Սա սավառնակ և ճանաչողական նշաններով, — ինքամտորեն պատասխանեց Բրյանդինսկին։

Իրականում, այդ Վեներա մոլորակն եր։

Առավոտն սկսվում եր։ Ամպերը շառադունեցին վառ յերանգներով, վերեկի չերտը թափանցիկ եր թվում։ Նրանք լուսանցում եյին ինչպես ճենապակին։ Յերկինքը վառ կաղտաղույն եր։ Արևը դանդաղորեն բռնում եր իր ցերեկվա ճանապարհը։ Յեվ արևի բարձրացման հետ միասին բարձրանում եր մեր տրամադրությունը։ Մեր սիրտն ուրախանում, հըրձվում եր։

— Ուշադրություն դարձրու, արեն իր տեղից
չի ծագում, — նախազգուշացրեց ինձ շտուրմանը:

Ավելի հարավային լայնություններում՝ Մոսկ-
վայում, Լենինգրադում, Կիևում, Ռուսսայում,
Սվերդլովսկում արեւ ծագում և արևելքում և իր
ուղին ավարտում արևմուտքում: Մեղ մոտ նա ծա-
ռեց հյուսիսում՝ թռիչքի գծին խիստ ուղղահայաց,
ձախ թեր կողմից: Մենք կարծես թե հասնում եյինք
արեին: Այս բոլոր կախարդական բաները տեղի ե-
րին ունենում ասիական մայր ցամաքի հեռավոր
հյուսիսարեւլյան մասում Մոսկվայից բաղմահազար
կիլոմետր հեռու:

ԴԵՊԻ ԽԱՂԱՂ ՈՎԿԻՍՆՈՍԻ ԱՓԵՐԸ

Սավառնակը մոտենում է Վիտիմի շրջանին, Սերե-
րի կենա մեծ գետի ավաղանին: Յես խնդրեցի Բը-
րյանդինսկուն Խաբարովսկից հարցնել յեղանակի
դրության մասին: Մի քանի րոպեյից Սաշան քիչ
միթարական պատաժիան ստացավ, թե Խաբարով-
սկը պատած է հոծ բաղմաշերտ ամպերով, վո-
րոնց ստորին յեղը միայն 300 մետր է յերկրից բար-
ձրը: Այս պայմաններում սավառնակը անբասիր
ճշտությամբ Խաբարովսկ կարող եր հասնել միայն
ռադիոլումնացույցի ողնությամբ: Սխալվելու իրա-
վունք չունեյինք մենք, բավական եր մի փոքր շեղ-
վել Խաբարովսկից, և սավառնակը կընկներ ոտար
աերիտորիա: Միանդամայն հասկանալի նկատառում-
ներով մենք չեյինք ուղում այդ:

«Մոսկվան» սուբում եր լեռնոտ վայրի վրայով:
Ներքեւ ամենինչ վակված եր ամպերով ու մասախու-
ղով: Թվում եր, թե մենք թուչում ենք կաթնածովի
վրայով: Առանձին տեղերում միայն մթին եյին տա-
լա գորշ բծեր: Այստեղ, ըստ յերեսութին, թաղնը-
մած եյին բլրակների գագաթները: Մենք չեյինք
կարող ճշգրիտ վորոշել նրանց բարձրությունը, բայց
կարծում եմ, վոր զա կազմում եր 3—4 կիլոմետր:

Սրեւ գարձյալ սկսեց տաքացնել: Յես հանեցի
մուշտակի կուրտկան ու սաղավարտը. Բըյանդինսկին
զանգատլում եր, վոր ինքը չողում և նույնիսկ Փու-
գայկայի մեջ: Խսկապես ասած՝ նա չողում եր վոչ
այնքան արեից, վորքան շատ աշխատանքից: Յես
խնդրեցի նրան փորձել ուղիովկողմնացույցով բոնել
հալրարովսկի կայանը: Յեղիու ըովե անց Բըյան-
դինսկին հայտնեց, վոր կայանը դեռևս գտնվում և
սարքի ուժից այն կողմ:

Մենք շարունակում եյինք թուչել գեղի Արևելք:
Մյեն ժամ յես խմում եյի մի ումալ սուրճ և նույնպի-
սի կանոնավորությամբ ընդունում «կոլա» հարերը:
«կոլա» հատուկ պրեպարատ և, պատրաստված հա-
րավ-աֆրիկան կոլա ծառի սերմերից: Սա դործ և
ածվում իբրև առնավորող միջոց յերկարատե թռիչքնե-
րի ժամանակ հողնածությունը կանխելու և նրա դեմ
ուայքարելու համար: Առաջ յես յերբեք «կոլա» չեյի
զործածում, թեև թռիչքներ եմ կատարել 10—14
ժամ տևողությամբ: Իմ որդանիզմը վսառահորեն
հաղթահարում եր հոգնությունը: Բայց մի որուղի-
չեր շարունակ յես դեռևս չեյի թուել: Մեղ հեռավոր

ունիսի պատրաստող բժիշկները ջերմորեն հանձնաւ-
լարում եյին «կոլա», խոստանում եյին ուղղակի
հրաշագործ արդյունքներ; Վորոշ ողաչուներ թերա-
հավատ վերաբերմունք ունեյին դեպի այս հաբերը:
Որինակ, վալերիյ Զկալովն ասում եր, վոր տուփերով
կերել ե այդ հարերն՝ առանց որդանիզմին վորեն
կնաս կամ ողուտ պատճառելու: Բրյանդինսկին
նույնակես առիթ եր ունեցել ողուվելու «կոլա»-յից,
իայց նա ել առանձին հարդանքով չեր արտահայտ-
մում նրա մասին: Յես այնուամենայնիվ վորոշեցի
փորձել նրա ներդործությունն ինձ վրա: Բժիշկ
Սուբբոտիկը խորհուրդ տվեց ութ ժամ թոփչից
հետո ընդունել առաջին հարը և այնուհետև ընդունել
ամեն ժամ: Այդպես ել արեցի:

Այժմ յես «կոլա»-յի ամենաջերմ կողմնակիցն եմ:
Նրա չնորհիվ յես միանդամայն համաչափ ինքնա-
զգացում ունեյի: Հոգնություն չեյի զգում, քնել՝
ամենեին: Թոփչի վերջին յերկու ժամում դրությու-
նըն այնքան լարված եր, վոր յես մոռացա «կոլա»-յի
մասին: Վայրեջից առաջ հոգնություն զգացի:
Բայցեայնպես ինձ բավարարեց մի որուգիշեր: Իսկ
սովորաբար հեռավոր թոփչիների ժամանակ հոգնա-
ծությունն սկսվում եր 10—12 ժամ ողում մնալուց
հետո:

Բրյանդինսկին թոփչի ժամանակ «կոլա» չըն-
դունեց և մոտավորապես 20 ժամ հետո կորցրեց աշխա-
տունակությունը: Այն ժամանակ Սաշան անձնատուր
յեղակ: Նա ինդըրեց ինձնից մի հար, հետո յերկ-

բնրդը, հետո յերրորդը: Կես ժամ հետո Սաշան այլ-
ևս հոգնածություն չեր զգում:

Թոփչիցից հետո յես առիթ ունեցա մի ավիացիոն
դորամասում մեծ աշխատանք կատարելու յերիտա-
սարդ ողաչուներին բարձր ու հեռավոր թոփչիների
վարժեցնելու համար: Մի խումբ ողաչուներ պիտի
թուչեյին 12 ժամ: Յես հանձնաբարեցի նրանց ողտա-
կործել «կոլա»: Հարերի որբածությունն սքանչելի
արդյունքներ տվեց: Այժմ Մոսկայի ողաչուների
շրջանում «կոլա» հարերը ժողովրդականություն են
ստանում: Վորքան ինձ հայտնի յէ, դրանից սկսել
են գործածել նաև ուղմածովային նախատորմում:
գիշերային աշխատանքների ժամանակ հիվանդա-
նոցներում, ծննդատներում: «կոլա»-յից սիրով ող-
տըլում են նաև ժունալիստները, վորոնք հաճախ
ստիպված են լինում գիշերները լուսացնել խմբա-
գրատներում:

Ժամերն անցնում եյին, կիլոմետրները՝ թուչում:
Մենք արդեն անցանք լենայի ավագանը: Այդ ժամ
մանակ յես Բրյանդինսկուց յերկառղ ստացա:

— Վոլոդյա, արդեն 17 ժամ ե, ինչ մեքենան
վարում ես: Մի կես ժամով ել տուր ինձ: Իսկ դու
դուրս յեկ ողանալից, զրոսնիր, բացվիր...

Շտուրմանի խցիկում գտնվում եր յերկրորդ զե-
կալվարումը: Բրյանդինսկին կարողանում եր սավառ-
նակը վարել: Յես շատ եյի ուղում միքանի բոպեյով
գեկանիվը տալ նրան, իսկ ինքս յեթե դուրս ել չգա-
յի սավառնակից, ապա իսկապես գեթ մի քիչ կը-
բացվեյի, կծգվեյի, փոքր ինչ կհանգստանայի: Բայց

այդ ժամանակ սավառնակը թուշում եր ամպերի մի-
ջով, վարումը կապված եր մեծ գժվարությունների
հետ: Վորոչեցի ղիմանալ, մեքենան դուրս բերել
մաքուր յերկնք և այն ժամանակ միայն հարդել
շուրջմանի խնդիրքը: Յերբ ամպերը վերջացան, յես
թույլ տվեցի Բրյանդինսկուն ընդունելու ղեկանիվը:

Սաշան 12 րոպե վարեց մեքենան: Այս միքանի
րոպեյում յես կարողացա հանդստանալ, բացի ել,
ծիսել, միքանի յերկառղ դրել Բրյանդինսկուն, նա-
յել շուրջա, հիանալ բնությամբ: Ամենից ավելի ինձ
ուրախացրեց այն, վոր ձեռքերս արատ են: Թոփչքի
ժամանակ նրանք շարունակ զբաղված են. անընդհատ
պտտում ես ղեկանիվը, շարժում ես դադի սեկտոր-
ները, քարտեզով ես զբաղվում: Իսկ հիմա ձեռքով
ինչ կուղեն՝ արա: Յես մի բոսե նույնիսկ նախան-
ձեցի շանուրժանին. ինչքան լավ աշխատանք ունի
նա— ձեռքերն ազատ են: Այդ րոպեյին յես ինձ ըդ-
ուցի ճամբորդ: Նստած անդործություն եմ անում:
Շատ լավ ե:

Բայց ճշմարիտ, անդործությունը հարաբերական
եր: Յես ամբողջ ժամանակ հետեւում եյի, թե ար-
դյոք Բրյանդինսկին ճիշտ է վարում մեքենան, նա-
յում եյի սարքերին, բայց ևայնպես հիանալի հան-
դստացա: 12 րոպե հետո յես նորից ստանձնեցի ղե-
կավարումը և այս անդամ այլես ձեռքից չովի մին-
չել թոփչքի վերջը:

Այնուհետև ամեն ինչ ընթանում եր, ինչպես
առաջ: Թուչում եյինք ամպերի մեջ, ամպերի վրա-
յով: Շուրջմանը ստողաբաշխական կողմնորոշում եր

կատարում, ուաղիոյով կապվում եր յերկը հետ,
ընդունում և հաղորդում եր ուաղիսղբամներ:

Կույր թոփչքը շատ գժվար ե և հոգնեցուցիչ:

Ամպերի մեջ թուչելիս ողաչուն կարող ե վստահել
միայն սարքերի ցուցումներին: Նա պարտավոր ե
չավատալ իրեն, իր զգացումներին, իր տալավորու-
թյուններին: Պիլոտը պիտի լինի մեքենա, տվո-
մատ: Այս կանոնը խախտելն անթույլատրելի յէ:


Սավառնակը կուրորեն վարելու այս յերկաթյա-
որենքն առաջին անգամ ինչպես հարկն ե յես յուրա-
ցրի 1934 թվին: Ինձ առաջադրանք եր տրված տեսա-
կան անվայրեջք թոփչք կատարել հետեւյալ մար-
շրուտով՝ Մոսկվա— Յեվպատորիա— Մարիուպոլ—
Բերդյանսկ— Մոսկվա: Մենք 17 ժամ մնացինք ո-
գում, վորից 10 ժամը՝ ամպերում: Դեպի հարավ ճա-
նապարհն ընթանում եր համեմատարար տանելի յե-
ղանակին: Բայց վերադարձն համատարած ամպեր
եյին: Միայն յերբեմն վերին շերտի միջով թափան-
ցում եր արեւը: Մթնշաղն իջնում եր:

Յեվ ահա հետ դանակիս ճանապարհի կեսին
մի ինչ-վոր տեղ ինձ թվաց, թե աջ կողմից սաստիկ
փուռմ ե: Կնշանակի սավառնակը զնում ե աննորմալ
դրությամբ: Նայում եմ սարքերին—ամեն ինչ կար-
գին ե: Յես դիտեյի, վոր նման ղեղքերում պետք ե
հավատալ միայն սարքերին: Բայց վորքան շատ եյի
մտածում սրա մասին, այնքան թվում եր, թե աջից
ավելի ու ավելի սաստիկ ե սկսում վիշել: (Այժմ
համոզված եմ, վոր սա դերհոգնածության արդյունք
եր, ինքնախարեյություն): Վորոչեցի շատ քիչ ուշ

շել սավառնակը (զիտակցությունս թելաղըում եր;
վոր ուղղել չի կարելի, այլ պետք է հավատալ սար-
քերին, բայց զգացմունքս ավելի ուժեղ դուրս յե-
կալ): Ուղղեցի— արագությունն սկսեց աճել:
Շառուրվալը քաշեցի գեղի ինձ— արագությունը շա-
րունակում եր աճել: Ալախմետրի սլաքը լիքիեց
ծախ: Բարձրությունն ընկալ: Ի՞նչ անել: Սավառ-
նակի մեջ չորս մարդ կա, բոլորն ել առանց պարա-
շյուտի, իսկ մեքենան ամպերի միջից չեշտակի ընկ-
նում և ցած: Հանկարծ սկսվեց պոչի տատանում:
Բանը բոլորովին վատ ե:

Միքանի վայրկյանում մենք ցած կողովեյինք
սմպերից: Այստեղ յես իսկույն ամեն ինչ հասկացա:
Սալառնակը միանդամայն ճիշտ եր գնում: Յեր
ինձ թվաց, թե պոչը բարձրանում ե, յես ուղղեցի
մեքենան և դրանով իսկ նրան սիսալ դիրք տվեցի:
Մեքենան սկսեց անկանոն կերպով կորցնել բարձ-
րությունը: Հետզհետե իջման արագությունն այն-
քան մեծացավ, վոր սկսեց պոչի տատանումը: Յեթե
սմպերը շատ ցածր լինեցին, ապա մենք կոսրվեյինք
գետին, այնպես ել չկարողանալով պարզել, թե բա-
նըն ինչումն ե: Ահա, թե կույր թռիչքի մեջ ինչի
յեն հանդում ողաչուի անձնական զգացումները:

Հետո ուսումասիրելով թռիչքի բարողբաման,
յես տեսա ամբողջ իրադարձությունը, վոր ապա-
վորված եր սարքի ժապավենի վրա: Բարողբամի
հարթ գիծը հանկարծ կտրվել եր: Հետո դալիս եր
մի մեծ անկում և ապա նորից հարթ գիծ: Այն ժա-



Բարոտերմողբաֆ: հաստատված սավառնակի վրա թռիչքի բարձ-
րությունը գրանցելու համար:

մանակ մի քանի վայրկանում մենք կորցրել ենք
մոտ 1500 մետր բարձրություն:

Դրանից հետո յես շատ եմ կուրորեն թռել, բայց
արդեն այլևս յերեք հավասար չեմ կորցրել սարքերի
նկատմամբ: Հետզհետեւ անհայտանում եյին նաև բո-
լոր պատահական տպավորությունները: Յեվ այժմ
Արեւելք թուչելիս ինձ այլևս չեր թվում, թե փչում
եւ աջից կամ ձախից, վոր սավանակի քիթը կու-
նում եւ կամ, ընդհակառակը, վեր ցցվում: Յես մե-
քենան վարում եյի ըստ սարքերի, նմանվելով ավ-
տոմատի: Յես այլևս հարկ չեյի զդում վորեւ ջանք
դործալրել ինձ վրա, վորպեսզի ստիպեմ ինձ հավա-
տալ սարքերին:

Մոսկվայի ժամանակով ժամի 23-ին սավանա-
կըն անցավ Բողայբոյից: Ինչպես և մեր մարզրուտի
մնացած բոլոր կետերը, այս քաղաքը գտնվում եր
ինչվոր տեղ ամպերի տակ, մենք նրան չտեսանք,
և ողային այդ կիսակայանի մասին յես իմացա
Բրյանդինսկու յեթկառով միայն: Ըստ սովորու-
թյան յես նայեցի քարտեղին, Բրյանդինսկու ցու-
ցումները համեմատեցի իմ դիտողությունների հետ:
Նրանք զուգադիպում եյին միմյանց: Շառւրմանի
արամագրության տակ կար մանրամասն նավիպացիոն
քարտեղ: Յես ինձ հետ վերցրել եյի Խորհրդային
Միության դպրոցական մեծ Փիզիկական քարտեղը
և նրանով կողմնորոշվում եյի բավական ճիշտ կեր-
պով:

Մոսկվան ուշագիր կերպով հետեւում եր թոփքի
ընթացքին: Մենք յերկու անդամ առաջարկ ստա-

ցանք կրկնելու մեր մի քանի ուղիովը ամները, վո-
րոնք, ըստ յերեվույթին, աղավաղվել եյին ըն-
դունելիս կամ հանձնելիս: Տեքստը կրկնելու առաջար-
կըն ստորագրել եր ընկեր Վորոշիլովը: Նրա ուշադ-
րությունն աշխուժացրեց մեզ, վոգեկորեց:

Յերբ մենք ժամանակի հաշվով թուշում եյինք
Մեծ Նեվերը Յակուտսկի հետ միացնող խճուղու
վրայից, յես նորից ինողեցի Բրյանդինսկուն Խարա-
րովսկը բռնել սաղիովզմնացույցով: Մինչև այսուղ
մնում եր մոտ 1000 կիլոմետր: Փորձը դարձյալ չհա-
ջողվեց: Սաշան տարակուսաբար ուսերը թոթվեց,
բայց մտածեց, վոր մեծ տարածության պատճառով
բարքն, ըստ յերեսույթին, գեռես չի բռնում սաղիո-
կայանի ալիքները: Անցավ մի ժամ: «Մոսկվան» շա-
րունակում եր ուղին գեղի Արեւելք, ուղիղ գեղի
Խարարովսկ: Հունիսի 28-ի 2 ժամ 07 րոպեյին սա-
վառնակն անցավ Զեյյայի վրայով: ԽՍՀՄ մայրա-
քաղաքից մենք բաժանված եյինք ուղիղ գծով 5492
կիլոմետր տարածությամբ, իսկ վիաստորեն անցած
մարզրուտով՝ 5920 կիլոմետր: Իմ պնդումով շառու-
թյանը նորից սկսեց վորոնել Խարարովսկի սաղիովիա-
րուը: Վարոշ ժամանակ անց նա ստիպված եր հայտ-
նելու, վոր Խարարովսկի վարոսը չի աշխատում:
Յես անասելի զարմացած եյի:

Մեր թոփքն ավարտելու պլանը վատահորեն կա-
ռուցվում եր Խարարովսկի փարոսի ողնության վրա:
Մենք գիտելինք, վոր յեղանակը կարող ե մեղ խա-
րել, թագյնել Խարարովսկը, և այն գեղգում ու-
ղիովզմնացույցը պետք ե ճիշտ կերպով սավանակը

հասցներ դեպի Հեռավոր-արևելյան մայլաքաղաքը։
Մենք յենթադրում ենք ուստիոկողմնացույցով հաս-
նել Խաբարովսկ, ճեղքել նրա վրայի ամպերը և հե-
տո Ուսուրի գետի հովտով զնալ դեպի Վլադիվոս-
տոկ։ Սոսկվայից ստարտելուց առաջ յես յերեք ան-
դամ հարցրեցի թոխչքի կազմակերպիչներին, թե
պատրաստ ե արդյոք Խաբարովսկի ուստիովարութ։
Բոլորը յերդվելով հայտացնում ենին, վոր փարոսն
ստուդված ե, փորձված և ուղած բողեյին պատ-
րաստ ե սպասարկելու մեջ։ Իրականում ուրիշ բան
չուրս յեկավ։ Ռադիոկողմնացույցն այնպես ե շին-
ված, վոր բոնում և վորոշակի յերկարության ալիք-
ներ, ասենք՝ 50-ից մինչև 100 մետր, հետո զալիս ե
մեռյալ սեկտոր, վորի ալիքները կողմնացույցը չի
ընդունում, ապա զալիս ե դարձյալ ընդունման դիա-
պաղոնը։ Խաբարովսկի ուստիոտեխնիկներն իմաստու-
թյուն են ունեցել ուստիովարուի աղղանշաները տալ
ժեռած ալիքով։

Այսպիսի պայմաններում մինչև Խաբարովսկ թը-
րիչը շարունակելը շատ մեծ սխալ կլիներ։ 6000 կի-
լոմետր տարածության վրա ամբողջ ժամանակ թը-
րիչը առանց յերկիրը տեսնելու, մենք կարող ենք 100—150 կիլոմետր կուրսից չեղկած լինել մի
կողմ։ Ուրիշ պայմաններում այս սխալը կարելի յեր
անենել, իսկ սահմանի կողքին ուս կործանարար
կարող եր լինել։

Այն ժամանակ յես վորոշում ընդունեցի՝ զնալ
նախկին կուրսով դեպի Արևելք, հասնել մինչև Թա-
թարական նեղուցի մասակաղերծ ափերը, այնուհե-

կողմնորոշվել ըստ առավելագույն ուղենիշերի և հետ զառ-
նալ ամպերի տակով։ Արդեն 20 ժամ մենք գտնվում
ենք թոփչքի մեջ, և այսպիսի վորոշում ընդունե-
լը հեշտ չէր։ Մենք պետք ե մեծ ողակ գործելինք։
Եվելի հեշտ կլիներ ճեղքել ամպերը, բայց այս
գեպքում մենք կհասնելինք շատ անորոշ հետեանքնե-
րի։ Մեր ձեռնարկության հաջողությունը, առաջա-
րանքի անբասիր կատարումը մեզ համար այնքան
թանգ ենին, վոր մենք ոխոկի յենթարկել չելինք
կարող։ Սավառնակը շարունակում եր իր ճամբան
դեպի Արևելք, դեպի Խաղաղ ովկիանոսը։

Այս ժամանակամիջոցում կույր նավավարությու-
թյունը հիմնովին ճանձրացրեց ինձ։ Մենք ծախսել ե-
նինք բանդինի պաշարի համարյա յերեք քառորդը,
մեքենան թեթևացել եր, և յես վորուեցի բարձրանալ
մինչև 6000—6500 մետր, դուրս դաշտ, վերջապես,
ամպերի միջից և նորմալ կերպով թռչել արեկ տակ։
Բարձրացանք 6000 մետր։ Շուտով մեր առջեն ամ-
պերն սկսեցին բարձրանալ։

— Ցիկլոն ե՞ — հակիրճ հարց տվեց Բրյանուի-
նըսկին։

— Այս, — պատասխանեցի յես։

— Զմուռանայինք նշանակել սրա հերթական
համարը, թե, չե սրանց ուղղակի վարժվել կարելի
յե, — մելանխոլիկ նկատեց շտուրմանը։

Ամորամածությունը շատ յուրատեսակ քնույթ
ուներ։ Թվում եր, թե մենք պետք ե թեք լանջով
բարձրանայինք բարձր բլրի վրա։ Ի՞նչ արած — մենք
բարձրացանք։ Լանջի թեքությունը սաստկանում եր։

Սավառնակը վեր եր բարձրանում այնպես, կարծես
թե թռչում եր լեռնաշղթայի վրա: Ալտիմետրի սլա-
քը ցույց եր տալիս, վոր սավառնակը գտնվում է
6500 մետր բարձրության վրա: Այնուհետև բարձրա-
չափը ցույց տվեց 7000 մետր, 7200:

Իսկ ամպամածությունն ավելի ու ավելի յե
բարձրանում: Ավելի վեր ենք բարձրանում՝ 7500...
7700...

Ո՞չ, վերջապես գաղաթին ենք:

Ու հանկարծ անսպասելի կտրվում է այն լեռ-
նաշղթան, վորի վրա մենք բարձրացել ենք: Կարծես
թե լեռնաշղթան կտրել են դանակով: Կյանքումս
յերբեք չեմ տեսել այսպիսի յերկույթ: Ամպերը կր-
սորված եյին միանդամայն ուղղահայտ, խիտ պա-
տով: Միայն ներքեւում, 2000 մետր բարձրության
վրա յերկում է մի նոր շերտ: Մենք անմիջապես ի-
ջանք մինչև 5000 մետր բարձրությունը: Մեր գըլ-
իավերելը վառ փայլում եր արեւ, ամպերը գտնվում
եյին հեռու-հեռու, մեքենայից ցածր, և թվում եր,
թե ամոլ չկա առհասարակ:

Սկսվում եր թռիչքի մի նոր փուլ: Այս բանն
եր արտահայտությունը գտավ ամենից առաջ մեր
մտքերում: Մինչ այդ մենք թռչում եյինք առանց
վորեե հոգսի: Մենք միայն մի ցանկություն ունե-
չինք՝ առաջ թռչել: Իսկ հիմա խոհեր առաջացան՝
ինչպես թռչել այսուհետեւ, ո՞ւր զուրս կդանք, յե՞րբ
հետ դառնանք, արդյոք վառելանյութը կբավարա-
րի՞ մինչև վրապիլուսող, քանի վոր ժամանակ ենք
կորցնելու մինչև ովկիանոս թռչելու վրա: Հաշվով

մենք գտնվում եյինք Ամուրին մոտիկ ինչ-վար տեղ:
Վորոշեցինք մի քիչ իջնել, վորպեսզի վարեե լու-
սանցք, պատուհան զտնենք ամպերի մեջ:

Առջեր տեսանք մի ու բիծ: Սա լուսամուտ չեր.
այստեղ ամպաշերտն ուղղակի ավելի բարակ եր,
քան ուրիշ տեղերում: Նշան բռնելով բիծը, սկսեցի
վոլորապտույտ իջնել: Բիծը փոքր եր, հաղով նկա-
տելի, և յես շատ եյի վախենում նրան կորցնելուց:
Հետո յեկ ուրիշ բիծ վորոնիր ամպերի ովկիանո-
սում:

— Ամպերի տակով և մարշըուառ՝ կուահեց
Բրյանդինսկին:

Ցես գլխով արեցի: Վերջապես սավառնակն ի-
ջավ մինչեւ նշանավոր բիծը: Սուզվում ենք, ինչ-
պես ջրի մեջ: Ամպի շերտը բարակ եր: Արագ ճեղ-
պես ջրի մեջ նրան: Ներքեր ամպերի նոր շերտ: Գնացինք
նրա վրայով և չուտով տեսանք յերկիրը: Յերկուսս
ել ուրախացանք: Ախր շատ յերկար ժամանակ եյինք
թռչում, առանց յերկիրը տեսնելու:

— Նու, արդեն տանն ենք— յերկուող ուղարկեց
ինձ Բրյանդինսկին:

Ավելքանդր Մատվեյեվիչը շատ լավատեսորեն
եր տրամադրված: Մեր տան ժամանակն սկսվել եր:
Կարծես թե գտնվում ենք արգեն նպատակի մոտ,
բայցևայնպես առաջներս զեռ քիչ դժվարություններ
չկան: Հարկավոր ե ցածրանալ, ճշտել տեղը, հաս-
նել վերջնական կայսին: Թռչում ենք զետնի վե-
րեւը: Վո՞չ մի բնակավայր, կյանքի վո՞չ մի նշույլ:
Հավանաբար մենք գտնվում ենք Ամուրի հովտում

ինչ-վոր տեղ, բայց Խաբարովսկից հյուսիս, թէ
հարավ՝ զժվար և ասել: Յեթե հյուսիս՝ լավ և,
իսկ յեթե հարավ՝ շատ վատ և, շատ:

Գուշակության ժամանակ չեր, և մենք նորոգե-
ցինք թռիչքը դեպի Արեւը: Գնում եյինք հենց բրւ-
րակների վրայով: Սկսվում եյին Սիխոտե-Ալին լեռ-
նաշղթայի հյուղերը:

— Պատրաստվե՞լ մարտի՛, — հրամայեց անձնա-
կազմի հրամանատարը:

Շառւրմանն ուշադիր նայում և առաջ: Անձրևն
սկսվեց: Տեսանելիությունը իսխոտ վատացավ: Ամ-
պերը մեղ սղմում են բլրակներին: Գագաթները
թափնված են ամպերի մեջ: Սկսում ենք խուսանա-
վել, զբոննել բլրակների միջն: Կուբսներս նախկինն
ե՝ Արեւը: Բավական ոխակոտ ճամբորդություն եր: Այդ
ժամանակ թռիչքի արագությունը հասնում եր
մի ժամում 400 կիլոմետրի, և սավաննակը կարող
եր բաղավել վորեւ անտառապատ լեռան:

Բայց ինչ վոր լիներ՝ մենք շարունակում եյինք
մեր ճամբան զեպի Խաղաղ ովկիանոսը: Վերջապես
հասանք: Հաղիլ առաջներս յերկացին ափերը, յերբ
Բրյանդիսակին անմիջապես ճշտեց սավառնակի տե-
ղը: Մենք դժունում եյինք Թաթարական նեղուցում
Համբերության հրվանդանի մոտ, 50-րդ զուգահե-
ռականի շուրջը: Այս հրվանդանը շատ բնորոշ գծա-
պրածք ունի, և նրան շատ դժվար է շփոթել մի
ուրիշի հետ:

— Սույնը ովկիանոսն ե, — հարդարիր զեկու-
ցեց Բրյանդիսակին:

Հենց վոր պարզվեց, թե մենք վորանել ենք
դժունվում, յես անմիջապես մեքենան հետ դարձրի: Ծովը
այնպես ել մենք չտեսանք— վոչ մի բոպէ
կորցնել չեր կարելի: Սա տեղի ունեցավ ժամի 5 և
40 ըովելին Մոսկվայի ժամանակով:

Վերադարձին հանդիպեց չափազանց հետաքըրք-
րական մի յերկույթ: Սավաննակը գնում եր ամ-
պերի տակով փոքր բարձրության վրա Սիխոտե-
Ալին լեռնաշղթայի ձորերի ուղղությամբ: Հանկարծ-
կարինի ապակիների վրա կարմիր բծեր յերկացին:
Յերկար ժամանակ մենք գլուխս եյինք կոտրում նը-
րանց ծագման վրա: Նույնիսկ վորոշեցինք, վոր
կարմիր անձրև և գալիս: Վերջապես, Բրյանդիսակին
բացեց լուսամուտներից մեկը, և լաթի վրա բռնեց
կարմիր հեղուկը և ուշադրությամբ ոկսեց դիտել:
Պարզվեց, վոր մժգուկներ են: Սրանք այնքան շատ
եյին, վոր կատարյալ անձրևի տակալորություն եյին
դորձում:

Հունիսի 28-ի 7 ժամ 21 ըովելին մենք թուանք
հարաբովսկի վրայով: Վողջույն ուղարկեցինք քաղա-
քի աշխատավորությանը և դարձանք հարավ-արե-
վելք: Բավական լավ յեղանակ եր: Մի քիչ թափա-
հարում եր: Հոգնածություն եր զդացվում: Կուրս
վերցրինք դեպի թռիչքի վերջնական կայանը—Վլա-
գիվոստոկի շղթանը:

— Վորքա՞ն և ճիշտ հաշվով մինչև Սպասոկ—
հարցը յես Բրյանդիսակուն:

— Այստեղից 440:

Յեղանակը շուտով նորից վատացավ: Սկսվեց

շատ խիստ /թամբահարություն : Մեքենան չըլրտվում էր վերև, հետո նա ընկնում էր ցած : Մենք գնում ենք խորհրդային սահմանի յերկարությամբ : Աջից ձգվում էր ընդարձակ Ռւսութին : Յերեսում ենք ձկնորսական նավակները :

Մոսկվայից թռչելով, յեռ խոստացա հասնել Վլադիվոստոկի շրջանը, ողում մնալով մի որոշից էր : Բուն Վլադիվոստոկում համապատասխան աերոդրոմ չկա մեր սավառնակի համար : Մենք յենթադրում ենք իջնել քաղաքին մոտ մի տեղ, ուստի մական հրատարակներից մեկում : Թոփչքի վերջում Քրյանդինսկին հալից ընկալ : Նա ավելի ու ավելի հաճախ եր առաջարկում ինձ՝ յեկ իջնենք : Բայց որ ու դիշերը դեռ չեր վերջացել : Մնում էր 30-40 րոպե մինչև 24 ժամը լրանար, և յեռ վորոշեցի ավելի թոշել :

Սաշան հերթական ակնարկ ուղարկեց վայրեջի մասին :

— Մնում ե ընդամենը 27 րոպե :

— Ուզո՞ւմ ես իմանում իջնենք— հարցրի նրան :

— Շատ լավ : Թե չե յես պատրաստվում եյի իջնելու առաջին հանդիպած չոր յեղենու վրա, — պատասխանեց շոռումանը, առանց աչքը թարթելու :

Ժամի 8 և 32 րոպեյին անցանք իմանի վրայով : Շրջան/ դորձեցինք քաղաքի վրա : 24 ժամն անցնում էր : Բայց աերոդրոմը միանդամայն անպետք էր, մի ինչվոր փոքրիկ բակ : 24 ժամը լրանալուն ել դեռ մնում էր չորս րոպե :

— Տու'լու ինձ Խաբարովէկ—Վլադիվոստոկ քարտեզը— պահանջեցի յես :

Շտուրմանը տվեց մանրամասն քարտեզը : Մարշրուտը համեմատելով յեղանակի ամփոփալրի հետ, վորոշեցի իջնել Սպասուկում : Բըրյանդինսկուց խնդրեցի աերոդրոմի պլանը : Մի բոլե հետո նա ինձ մեկնեց մի թղթի կտոր, վորի վրա ձեռքով հիշողությամբ նկարել եր աերոդրոմի դիրքը և զրել .

— Յես պլանը տեսել եմ Մոսկվայում : Այս եռուես ե :

Գծադիրը բավական ճիշտ էր : Նրանով կողմնորոշվելով, յես արադ դուա աերոդրոմը : Շրջան գործելով դաշտի վրա, մենք տեսանք, վոր ներքեւ խաչ էր կազմված՝ վայրեջքի արգելում : Յերկրորդ շրջանը գործեցինք—խաչը չեն վերացնում, վայրեջքի նշան չեն դնում : Ցածրացանք, փոքր բարձրության վրա անցանք աերոդրոմի վրայով, զննեցինք ամեն ինչ, վորպեսզի վորոշենք, թե ինչու չեն թույլատրում վայրեջքը : Վոչ մի կասկածելի բան չնկատեցինք :

Հետո մենք իմացանք, թե ինչու յեր վայրեջքին արգելված : Պարզվեց, վոր մեզ սպասում եին մյուս աերոդրոմում : Յեկ յերբ մենք մոտեցանք Սպասուկին, մեզ խաչ ցույց տվին, ցանկանալով ասել, վոր մենք պետք ե իջնենք հարեան աերոդրոմում :

Շասսիներն իջեցրի : Սովորաբար սա կատարվում ե սղմված ողի միջոցով, բայց թոփչքի ժամանակ ամբողջ սղմված ողը վերջացել էր : Հարկ դրացվեց մեխանիզմը ոլտաել ձեռքով : Միորյա թը-ոփչքից հետո աշխատանքը հոգնեցնուցիչ էր :

Մոսկվայից սամանակը թռավ գերաբեռնված։
Բեռին համապատասխան շաստիների ամուրակացիան
շատ կոչտ եր արված, վարդեսզի հաջողությամբ
գիմանա սալանակի ծանրությանը գետնից թռչե-
լիս։ Սպասելի աերոդրոմում մենք ինում ենինք
արդեն դատարկ մեքենայով։ Ամորտիվացիան մնացել
եր նույնը, վորովհետև ուղում նա չի թուլացվի։
Ռատի վայրեջքը պետք եր կատարել շատ նուրու։
Այդ մեղ հաջողվեց։ Հողին շփմելուց հետո սաման-
նակը վոչ մի անգամ վեր չցասոկեց, վոչ մի վայր-
կյան հողից չկորվեց։ Մի քամի հարյուր մետր վա-
զելով, մեքենան կանգ առավ։ Հունիսի 28-ի առավո-
ւյան ժամի 9 և 12 րոպեն եր։

Մոսկվա—Վլադիվոստոկի շրջան անվայրեջք թռ-
ուիչքն ավարտված ե։ Մենք ողում անցկացրինք 24
ժամ 36 րոպե, այս ժամանակամիջոցում կտրելով
7600 կիլոմետր (չհաշված դեպի ովկիանոս թռչելը)
Մի ժամում 307 կիլոմետր միջին արագությամբ։

Իր հաղորդման մեջ մեր թռիչքը կազմակերպող
Լառավարական հանձնաժողովը դըռում եր։

«Հունիսի 27-ի ժամի 8 և 36 րոպեյին Շչելկո-
վոյի աերոդրոմից (Մոսկվա քաղաքի մոտ) կոնս-
տրուկտոր Ս. Վ. Խլուչինի յերկմուռու «Մոսկվա»
սալանակով Մոսկվա—Խարարովսկ—Վլադիվոստոկի
շրջան մարզուսով անվայրեջք թռիչքի դուրս յեկած
անձնակաղմը՝ բաղկացած ողաչու Վ. Կ. Կոկինա-
կիից ու շտուրման Ս. Մ. Բրյանդինսկուց, վայլուն
կերպով կատարեց առաջադրանքը և հունիսի 28-ի
ժամի 9 և 12 րոպեյին Մոսկվայի ժամանակով բա-

րեհաջող կերպով վայրեջք կատարեց Սպասուկում՝
Վլադիվոստոկից 155 կիլոմետրի վրա։

Մոսկվա—Խարարովսկ և ապա մինչև վայրեջքի
տեղը Սպասուկում ողային ճանապարհը ուղիղ գծով
հավասար և 6850 կիլոմետրի։ Փաստորեն 24 ժամ 36
լոպեյում նրանք անցել են ավելի քան 7600 կիլո-
մետր՝ մի ժամում 307 կիլոմետր միջին արագու-
թյամբ։

Թռիչքը կատարված ե Մոսկվա—Կիրով—Զերդին—
Վանավարա—Բողայբս—Զեյա—Խարարովսկ և ապա
Վլադիվոստոկի շրջան ուղիղ գծով։

Թռիչքի ճանապարհն անցնում եր չուսումնասիր-
ված վայրերով, տունդրայի և տայգայի վրայով։
Թռիչքն իրականացված ե ողերեւութաբանական չա-
փազանց ծանր պայմաններում։ Ամբողջ ճանապար-
հին անձնակաղմը յերկիրը տեսել ե միայն 1000 կի-
լոմետր տարածության վրա, մնացած ճանապարհը
նրանք անցել են ամպերից վերև և ամպերի մեջ։
Թռիչքի բարձրությունը տատանվում եր 30-ից մին-
չե 7000 մետրի միջին։ Սավառնակի նյութական մա-
սը վայրեջքից հետո կատարելապես սարքին ե։ Սա-
վառնակի բակերում զեռևս մնում եր 500 կիլոդրամ
վառելանյութ։ Խիղախ ողաչուների ինքնազգացումը
լավ ե։

«Մոսկվա» սալանակի հերոսական անձնակաղ-
մը մի փայլուն էջ դրեց խորհրդային և համաշխար-
հային ավելացիայի պատմության մեջ։

«Լառավարական հանձնաժողով»։

Յերբ մենք դուրս յեկանք սավառնակից, այն ժամանակ միայն յես զգացի, թե ինչ սաստիկ հողնել եմ: Պառկեցի խոտի վրա ու ձգվեցի ամբողջ հասակով: Մտածում եմ. յերջանիկ են այն մարդիկ, վորոնք կարողանում են այսպես հանդստանալ: Ինձ թվում եր, թե յես կարող եմ սուանց շարժվելու մի քանի որ պառկել:

Եմեն կողմից մարդիկ վագեցին դեպի սավառնութեալը: Զավագանց շոգ եր: Փոշին խավարեցրել եր արել: Մենք ուղղում եյինք շունչ քաշել, բայց ողարդում ե, վոր չե կարելի: Խնդրեցինք ընկերներին.

— Թողեք թարմ ող ծծենք:

Բոլորը քաղաքակարի հետ քաշվեցին: Յես՝ մըտա թեր տակ և պառկեցի խոտի վրա: Շուտով ինձ միացալ նաև Բրյանդինսկին: Պառկած ենք, հըրճվում ենք: Իսկ շրջապատողները համբերատար կերպով կանդնած՝ լուսում են, սպասում են:

Միքանի բողե անց Բրյանդինսկին կատաղի աշխատունակություն ցույց տվեց: Նա վեր կացավ, դրսեց բոլոր իրերը սավառնակի փակվող մասի մեջ, կարինից հանեց «Պրալդա»-յի թարմ համարները և բաժանեց ներկա դտնվողներին: Մարդիկ նայում եյին և չեյին հավատում: Այս աերողբոմում լրադիրը սովորաբար ստացվում եր լույս տեսնելուց 10-12 որ հետո: Յերբ մեր բերած «Պրալդա»-յի համարներից մեկն ընկառ Պրիմորյեյի մարդկոմի պա-

տասխանառու աշխատողի ձեռքը, նա տարակուսեց ուստարակության ստուգության վերաբերմամբ.

— Սա, — ասում ե, — վրիպակ ե: Յերկի անցած ուստի լրադիրն ե:

Նամակատարներն ու կամավոր մարդիկ նույնորը «Պրալդա»-յի համարները տարածեցին ամբողջ Պրիմորյեյի մարդում: Ու շատերը, թերեւ, այնքան չեյին զարմանում մեր թոփչքի վրա, վորքան այն հանգամանքի, վոր նախորդ որը Մոսկվայում տըլդած «Պրալդան» այսոր հասել և չեռավոր Արևելք: Լրադիր առանձին համարները այնքան եյին կարգացվում, վոր պատուվում եյին, ձեռքից ձեռք եյին անցնում իրեւ ամենաթանկարժեք բան:

Զորամասի հրամանատարությունը աերողբոմում տեղն ու տեղը հանգատրասից դուշ սարքեց, այս նպատակով սրամիս կերպով հարմարեցնելով բեռնատար ավտոմեքենան: Մենք աննկարագրելի հաճույք ստացանք: Մեր հոգնածությունը բոլորովին չքաշավ: Կանգնած ենք ջրի տաք չիթի տակ ու դատողություններ ենք անում, թե ա՞յ հիմա կարելի յետեղերը բոնել «Մոսկվայի» Փյուղելաժում և հետ թռչել: Պատահարար յես նայեցի ձեռքերիս ու դարմացա. պարզիում ե, վոր թոփչքի ժամանակ յես դեկանիվով հակայական կոշտուկներ եմ առաջացրել ձեռներիս: Այս քեզ ազնիվ պրոֆեսիա: Յերբ յես շեռնակիր եյի Նովորոսսիյակի նավահանդստում, այն ժամանակ կոշտուկներ պետք ե լինեյին որենքով, իսկ հիմա...

Մեզ հրամիրեցին սեղանատուն: Յես թուղթ ու

մատիս ինդրեցի ու անմիջապես գրեցի մի քանի
հեռագիր; Առաջին՝ ընկերներ Ստալինին ու Մոլոտո-
վին, կուսակցության և կառավարության ղեկավար-
ներին: Մենք հաղորդեցինք առաջադրանքը կատա-
րելու մասին, այն մասին, վոր արդարացրել ենք
մեղ ցույց տրված վատահությունը:

Վոչինչ չեյինք ուզում ուտել: Բայց առաջվա-
սես մեղ տանջում եր սարսափելի ծարավը: Յես խը-
մեցի վոչ պակաս, քան 15 բաժակ թեյ ու մրգա-
ջուր: Ալեքսանդր Մատվեյեվիչը նույնակես վոչինչ
չկերալ, այլ միայն խմեց: Ծարավիներս հաղեցնելով
մենք ինդրեցինք ինայել մեղ.

— Թողեք քննենք:

Մեզ համար սպատրաստեցին մի հիանալի սե-
նյակ, դարդարեցին դաշտային ծաղիկներով, այնտեղ
ուրեցին պետ կաղմի բոլոր բնակարանների ամբողջ
լավագույն կահավորությունը: Այս հոգատարու-
թյունը յետ կարողացա ըստ արժանույն գնահատել
յերկրորդ որը միայն: Սկզբում վոչինչ չնկատեցի:
Մտա սենյակ, տեսա մահճակալը, մեկնվեցի նրա
վրա, ու ել չկայի: Մի ակնթարթում քնեցի:

Այլ կերպ եր զգույժ իրեն բրյանտինսկին: Նա ինչ
վոր անհասկանալի ներվային վերելք եր ատրում և
չեր կարող քնել: Ալեքսանդր Մատվեյեվիչը կամացուկ
դուրս յեկավ սենյակից, սկսեց խոսել Խաբարովսկից
ու Վլադիմոսովկից յեկած ժուռնալիստների հետ,
կարգադրեց նայել սավանակին, հրամանատարներին
ու մարտիկներին պատմեց թոփչքի ընթացքի մասին
և չետո միայն պառկեց: Իսկ յետ մեռածի պէս քնե-

լիք: Ինձ լուսանկարում եյին կողքեց կողք շուռ տառ
լով: Յես վոչինչ չեյի զգում:

Ցոթ ժամ հետո մենք արթնացանք: Մեզ բերեցին
մի կույտ հեռազրեր: Առաջինը վողջույն յեկավ ըն-
կեր Ստալինից և կուսակցության ու կառավարու-
թյան ղեկավարներից: Նրա մեջ ասված եր.

«Զերմորեն վողջունում ենք ձեզ կառավարական
առաջադրանքը փայլուն կերպով կատարելու հա-
մար:

Մուկվա—Խաբարովսկ—Վլադիվոստոկի շրջան հե-
րոսական թուչքը, վորի ընթացքում 24 ժամ 36 րո-
պեյում անցված և ավելի քան 7600 կիլոմետր գըժ-
վարագույն ճանապարհ, մի նոր սքանչելի եջ և բա-
ցում խորհրդային և համաշխարհային ավելացիայի
պատճության մեջ:

Խորհրդային Միության աշխատավորները հպատ-
ամնում են ձեր հաղթանակով:

Գրկում ենք և ողմում ձեր ձեռքը»:

Մենք հպատակ եյինք և հուրլված՝ ստանալով այս
վողջույնը, վոր թանգ և յուրաքանչյուր ողաչուի,
խորհրդային յուրաքանչյուր մարդու սրտին: Սկզբ-
բում յետ կարգացի հեռագիրը հետո Սաշան խլեց
իմ ձեռքից և նորից բարձրաձայն կարգաց: Այնու-
հետև մենք կարգացինք միասին:

Մի քանի ըոպե հետո մեղ հեռախոսով զանդա-
հարեցին:

Ավելացիոն արդյունաբերական ժողովրդական կո-
միսար Միխայիլ Մոխսեյևիչ Կազանովիչը մեղ վող-
ջունեց խորհրդային կառավարության անունից, հար-

ցրւիործ արեց թոփչքի ընթացքի, մեր ինքնազգացան, նյութական մասի վիճակի մասին։ Նա մեզ առաջարկեց վերադառնալու համար ըշտապել, ինչպես հարկն է հանդստանալ, դիտել Հեռավոր Արևելքը։

Այնուհետև խուժեց հեռազբերի հեղեղը։ Կապի
աշխատողները բառացի հրաշքներ եյին դործում։
Սպասսկում մենք մնացինք յերկու որ, և այդ ժաման
նակամիջոցում տեղական հեռագրատունը կատարեց
իր տարեկան պլանը։ Յես հիշում եմ, թե ինչպիսի
վայրենի աչքերով մեզ նայեց ընդունողը, յերբ մենք
նրան տվինք հեռաղիք «Պրավդա»-յին, փորով համար-
ուու պատմում եյինք մեր թուչքի արդյունքների մա-
սին։ Ժուռնալինական տեսակետից թղթակցությունը
մեծ չէր։ Նա կազմված եր ընդամենը 1500 բարից։
Բայց Սպասսկի հեռագրատունն իր ծննդյան որից
այսպիսի յերկար դերկուցում չէր ուղարկել։

ՄԵՐ ԹՂՄԱԿցական պարտականությունները կատարելով, մենք նորից մտանք սեղանատուն։ Կուաջվապես՝ ուստեղ չեյինք ուղղում։ Յես խմեցի մոտ յերկու լիմր գանազան հեղուկներ և գնացի քնելու։ Քնեցի վեց ժամ։ Արթնանալով, յես ինձ զզացի բացարձակապես հանդստացած, թարմ։ Հոգնածությունը կարծես թե չեր յեղել։

Աերողը մի պետք գիլուցեց ինձ, վոր սկզբնական
դնության համաձայն սավառնակը գտնվում է կա-
տարելապես սարքին վիճակում։ Նա գտնվում է ան-
էարում, վառելանյութի մնացորդը թափել են և չս-
կել։ Բակերում մնացել եր մոտ կես տասն թեսպին։

Այս պաշտպը մեղ կրավարեր դեռ 700-800 կիլո-
մետր ճանապարհի համար:

Մասկվայից թուշելու նախորյակին ընկեր Սամա-
լինը Կրեմլում զբուղելու ժամանակ ինձ հարցրեց.

— Իսկ վերադարձը զնացքով

Յես պատասխանեցի.

— զե, ինչու, սավառնակով ավելի շուտ կլինի:

Յես ասացի, վոր սավառնակի քանդումն ու մեծ
տարածության վրա փոխադրելն անխուսավելիորեն
կանդրադառնա նրա վորակի վրա, չատ ժամանակ
կլուեն, և խնդրեցի թույլ տալ հետ գառնալու դար-
ձյակ ողային ճանապարհով։ Ընկեր Ստալինը ավեց իր
համաձայնությունը։ Աւտոի յերբ մենք հասանք Սպա-
ռըսկ, յես անմիջապես Մոսկվայից կանչեցի չքանչշա-
նակիր ինժեներներ Պետրովին ու Սեմյոնովին և մո-
տորիստ Գրուզինցիկին, վորոնք «Մոսկվան» նախա-
պատրաստել եյին Արևելք թուչելու։ Այս ընկերները
չատ լավ դիտելին մեքենայի կոնստրուկցիան և չատ
անդամ իմ սավառնակը ոլատրաստել եյին հեռուստոր
թուչքների։ Հեռագիր ստանալով, նրանք նույն որը
Մոսկվայից թռել են իրկուտսկ և այնտեղ նոտել ձեզ-
ընթաց գնացք։

Այդ ժամանակաշրջանում մենք ծանոթացանք Հեռավոր Արևելքի հետ, յեղանք Վլադիկոստոկում, Վորոշիլովում, դիտեցինք խաղաղովկիանոսյան նավատորմի նավերը, ափերի ամբողջունները, գորպեղային կատերներով ծով դռւրս յեկանք: Մեր աչքերով համոզվեցինք, վոր Խորհրդային սահմանները դանդում են ամենաամուլ կողպեքի տակ:

Վերադառնալով Սպասուկ, մենք ինսամքով զննե-

ցինք սավառնակը: Նա շատ լավ վիճակի մեջ եր: Վորոշեցինք թռչել Խարարովսկ: Այնտեղ թե՛ աերոդրոմն և մեծ և թե՛ սպասարկումն ավելի վրակայալ: Հուլիսի 4-ին «Մոսկվա»-ն իջավ Խարարովսկի աերոդրոմում: Մեզ դիմավորեցին շատ հանդիսավոր կերպով և հյուրասիրաբար: Մենք հանդես յեկանք միտինդում, լողացանք Ամուրում, խաղում եյինք շախմատ և բիլիարդ:

Տեղական կազմակերպությունները մեր տրամադրության տակ դրին վոչ միայն ավտոներ, այլև սավառնակներ: Ոգտվելու նրանց սիրավելությունից, թուանք Ամուրի Կոմսոմոլսկ: Սա նոր սքանչելի քաղաք է: Որ ու դիշեր կառուցումը չի դադարում: Աշխատանքը յեռում և ամենուրեք՝ տայգայում, չին-հրապարակներում, փողոցներում: Մենք յեղանք յերիտասարդ քաղաքի դորձարաններում, տներում, գնացինք պիոներների ճամբարը: Յել, իհարկե, հեռախոսվայրինքին ամբարը: Վորքա՞ն առաջ և սովորություններին առաջանական: Ընդամենը 24 ժամ դնացել խորհրդային տեխնիկան: Ընդամենը 24 ժամ եր պետք Մոսկվայից մինչև Վլադիվոստոկի շրջանը թռչելու համար: Մի քանի ժամ հետո մենք հեռախոսվայրի խոսում եյինք մայրաքաղաքի հետ: Մոսկվայի սովորությունների կոմսոմոլսկ, և յերիտասարդների ժողովում եյինք մայրաքաղաքի հանչում են հեռախոսի մոտ: ապարատի մոտ և Մոսկվան:

Դառնալով Խարարովսկ, մենք սկսեցինք պատրաստվել վերադարձի համար: Պետրովը, Սեմյոնովն ու Գրուդինցերը որեր ու դիշերներ եյին անցկացնում

սավառնակի մոտ: Մոսկվայից ամեն որ ամփոփագրել եյին ստացվում յեղանակի մասին: Մեզ տեղեկացնում եյին նաև տեղական սինոպտիկները: Ակավեց մի խառնաշփոթություն: Մոսկվան հաղորդում և, վոր վաղը թուիչքային որ չե, տեղական ողերեսությանների սովասել չի կարելի: Հետեւյալ որը պատմությունը կրկնվում է, բայց հակառակ կարգով. Մոսկվան հուսադրում է, իսկ ծերունի բնակիչները գայրացնում են: Հանուն արդարության պետք են նշել, վոր Մոսկվայից գլխավոր աերոմետեռկայանի պետք վ. Ի. Ալտովսկու ուղարկած պրոցողներն ավելի ճշգրիտ եյին և ամենից հաճախ եյին համընկնում իրական վիճակին:

Կերջապես, սպասելով ձանձրացանք: Յես թուիչքը նշանակեցի Հուլիսի 13-ին: Ալտովսկին հաղորդեց, վոր առաջին յերեք հազար կիլոմետրների ընթացքում թուիչքի պայմանները շատ ծանր կլինեն, իսկ հետո կսկսվի յեղանակի վորոշ բարելավում:

Հուլիսի 13-ի առավոտյան ժամի 1 և 33 րոպեյին «Մոսկվա» սավառնակը, կտրվելով Խարարովսկի աերոդրոմի կանաչ դաշտից, կուրս վերցրեց դեռև արեմուտք՝ Խորհրդային Միության մայրաքաղաքը: Տըրամադրություններս հիանալի յեր: Մենք նորից դանվում եյինք ողովում:

Մինք պետք են ճեղքեյինք-անցնեյինք մի քանի զգոր ցիկլոն: Երանցից առաջինը գտնվում եր Խարարովսկի մոտիկ: Ստիպված յեղանք ստարտից անմիջապես հետո բարձրություն վերցնել: Բարձրա-

ցանք վեց կիլոմետր, Հետո ավելացրինք նորից 1000 մետր, ելի 500: Առ այսուամենայնիվ ամպերը մեղնից բարձր ելին:

Կուտակված ամպերը մեզ ստիպեցին չեղլել ուղիղ ճանապարհից, գնալ դեպի աջ, դեպի Հյուսիս: Աստիճանաբար մենք հասանք համարյա մինչև Նեղամետնի հանքերը: Յերկիրը թաղնված եր ամպերի անվերջանալի քողով: Միայն յերկու խնդամ լուսանցքներից մեզ հաջողվեց տեսնել տայզան և հայիտենական ձյունով ծածկված լեռնադադաթները:

— Բավական ե պտտենք, բգնիր իրկուտսկի ռադիոֆարոսը, գնանք ուղիղ գծով — յերկտող ուղարկեցի Բրյանդինսկուն:

Ալեքսանդր Մատվեյեվիչը միքանի վայրկյան Հետո ինձ տվեց իրկուտսկի ուղղությունը և մենք մտանք ամպերի մեջ՝ թանձր պատով սահմանափակված հարավ-արևմուտքի ճանապարհով: Յեթերի մեջ վորոնելով իրկուտսկի փարոսի ալիքները, Բրյանդինսկին լարեց ասդիոկողմացույցը: Տրված ուղղությունն ու սարքի սլաքը խիստ համընկնում ելին: Սա դարձյալ մի վառ ապացույց եր մեր թուիչի շուրջմանի նավիդացիոն փայլուն արովեստի:

Թռչում ենք կուրորեն: Ամեն կողմից մեզ ե ու մշուշ: Միայն անշարժ քարացած ուղինկողմացույցի սլաքն ե ցույց տալիս ճշգրիտ ու անսխալ ուղղությունը: Հիանալի՛ մտածված ու հաճելի սարք:

Մենք շատ ելինք ուղղում տեսնել Բայկալը: Վերաբռնական եր. թռանք Հեռավոր Արևելք, այնտեղ և հետ ու Բայկալը չտեսնք: Մենք դիտելինք, վոր

Արբերի մեծ լիձը շրջապատող լեռների գաղաթները չասնում են մինչև 4000 մետրի: Իջնելով յերեք կիլոմետր, մինչև 4500 մետրը, յես զաղաքացրի վայրելու գիտես. մեկ ել տեսար դիպանք վորեկ սարի:

Վորքան մոտիկ և դանվում սավառնակը ուղղիությանը, այնքան ավելի զգայուն ե զամնում ուղարսին, այնքան ավելի զգայուն ե զամնում զիսկողմացույցի ուղաքը: Նա զգայնորեն արձագանքում և կուրսի նվազագույն չեղումը: Սլաքի զգայնությունից կարելի յէ վորոշ ճշությամբ դատել մինչև վերջնական կայանը մնացած տարածության մասին: Յերբ ուղաքն սկսեց շատ խիստ տատանվել, յես վորոշեցի, վոր մենք գտնվում ենք իրկուտսկից գոչ հեռու, Բայկալի վրա: Վորոշում ենք իջնել 4000 մետր: Ամեն ինչ կարգին ե: Գոչ սար և յերեսում, վոչ դետին, գնում ենք ամպերի միջով: 3500 մետր ե: Ամպերից դուրս յեկանք: Բայց մեր տակն ել են ամպեր: Չորս կողմներս սպիտակ ե:

Պատահաբար յես հետ նայեցի և զարմացա: Հետեւից յերեսում են լեռների գաղաթները, լճի հյուսային մասը շրջապատող լեռնաշղթայի գծադրությունը: Պարզվում ե, վոր ամբողջ Բայկալը փակված և համատարած ամպերով, վորոնք հատվում են լճի ափերին, իսկ ափերը բաց են: Նորից 1000 մետր կորցնելով, մենք, վերջապես, ջուրը տեսնք: Լիճը ամայի յէ. վոչ շոգենալ ե յերեսում, վոչ նավակներ: Ակսեց խիստ թափահարել: Սավառնակն առաջ կում ապառաժուտ ափերի միջև հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք:

Առավոտյան ժամը 10 և 20 ըստելին մոտ 3000
մետր բարձրության վրա մենք անցանք Երկուտակի
վրայով։ Վողջույն տվյալնք քաղաքի աշխատավորու-
թյանը։ Բակերում վառելանյութը գերծանալու վրա
յեր։ Մենք վորոշեցինք այնուամենայնիվ կուրս վերց-
նել դեպի Նովոսիբիրսկ բայց ճանապարհին խնամ-
քով հաշվել մնացորդները և, յեթե բենզինը քիչ լե-
նի, ինեւ Կրասնոյարսկում :

ինչպես և սինոպտիկները նախատեսում եյին,
իրկուտսկից այն կողմ յեղանակը լավացավ։ Մենք
զնում եյինք վոչ շատ բարձր՝ 3500—4000 մետրի վրա։
Անցանք կրասնոյարսկի տրավերդը։ Մտածում ենք,
վոր բնովինը կարծես թե պիտի բավարարի մինչեւ
Նովոսիբիրսկ։ Վորոշեցինք թուչել առաջ։ Յուրա-
քանչյուր հարյուր կիլոմետրին Բրյանտինոկին ինձ
հայտնում եր վառելանյութի մնացորդի մասին։ Յես
ջանում եյի մեքենան վարել իրեալական ճշու-
թյամբ, վորապեսզի ավելի չայրեմ և վոչ մի կերո-
ութամ։

Ապաբարովսկից թուչելուց առաջ մէնք հետախոսով խոսեցինք Մոսկվայի հետ։ Ե. Մ. Կազանովիչը հարցուց, թե յերբ կլինէնք նովովիլիսկում։ Խոր-Հըրդակցելով Բոյանդինսկու հետ, յես պատճախանեցի.

— Ուղիղ տասնըշոր ժամ՝ Հետո։
Ժամը 15 և 35 բոպելին «Մոռկվա» սալառնակը
յերեաց Նովոիրիբարսկի վրա։ Շրջան դործելով, գե-
մեցինք վայրեջքի։ Մենք սխալվել ենք միայն յեր-
կու բոպե։ Բակերում բենդին չեր մնացել։

Հետևյալ որը, առավոտյան ժամի 3 և 06 րոպե-
յին «Մոսկվա»-ն նորից ճախրեց ողի մեջ։ Պայման-
ները բարեհաստ եյին թուիչքի համար։ Ալտովսկին
նախադպուշացնում եր, վոր յերեկոյան յեղանակը
կփչնա, և շտապեցնում եր։ Փչում եր համընթաց
քամի։ Մեր արագությունը մի ժամում 400 կիլոմետ-
րից ավելի յեր։

Յերբ մենք գտնվում եյինք մոտավորապես ծա-
տարսկի ըլջանում, յես նկատեցի, վոր աջ մոտոռից
դուքս և գալիս կափարիչն ամբողջող շամփուրը;
Նովոսիրիսկի ու Կաղանի միջև յեղած բոլոր աերո-
դրոմները վղղողված եյին տեսական անձրևներով:
Իջնելու և վնասվածքը շտկելու տեղ չկար: Վորո-
հեցինք առաջ թռչել, խիստ հետևելով շամփուրին.
Թերեւ նա կանգ առնի և թռւվ տա հասնելու գեթ
մինչև Կաղան: Բայց շամփուրն ավելի ու ավելի յեր-
դուքս դալիս: Սա սպասնում եր լուրջ անախորդու-
դուքս դալիս: Սա սպասնում եր լուրջ անախորդու-
դուքս պատճուիլ, հենց վոր շամփուրն ընկալվ
թյուններ պատճառել, հենց վոր շամփուրն ընկալվ
կափարիչը կրացվէ: Նրանից հետո տեղի կունենա-
սպարիս:

բամականական է վերապառնալ Նովսութ-
ել հնար չկա, պետք եւ վերապառնալ Նովսութ-
բիրսկ: Տրամադրություններս անտաճնելի յեւ պարապ-
ժամանակ ենք կորցնում, կորցնում ենք լավ յեղա-
նակը, համընթաց քամին: Հետ դարձանք ծանոթ-
աերողբոմը: Իշանք: Փափուկ խոսքերով հիշատակե-
ցինք այն մոտուխտին, վոր մեքենան թուիչքի յեր-
գինք այն մոտուխտին, վոր մեքենան թուիչքի յեր-
գինք այն մոտուխտին: Պարզվեց, վոր նաև ամրացրել եւ շամ-
պատրաստել: Պարզվեց, վոր նաև ամրացրել եւ շամ-
պատրաստել: Պարզվեց, վոր նաև ամրացրել եւ շամ-
պատրաստել:

պտուտակն» եր: Նա ամենաաննշան դերն եր կատարում և... խարեց: Ահա թե ինչ նշանակություն ունեն «վերջին պտուտակներն» ալիսացիայում:

Իսկ նովոսիբիրսկը գոհ եր մեր անհաջողությունից: Տեղական կաղմանկերպություններն չտապ հրավիրեցին համաքաղաքային միտինդ: Խնդրեցին մեղ հանդես դալ, զեկուցել թոփչքի մասին, հանդիպել աշխատավորների հետ: Մեղ վրա ծաղիկներ երին չոլրտում, մեղ կերակրում մրգերով ու չոկոլադի կոնֆետներով:

Հետեւյալ որը յեղանակը փչացավ: Սինոպտիկ-ներն իրենց խոսքը կատարեցին: Ուրալի արևելյան փեշերին, Սվերդլովսկի շրջանում ծնվեց մի հզոր ցիլոն: Ուղիղ գծով թռչել կարելի յեր միայն մեծ բարձրության վրա, իսկ մեղ մոտ թթվածին չեր մը-նացել: Այնուամենայնիվ մենք վորոշեցինք ստարտել և ցիլոնը լրջանցել յուսիսից, 60-րդ զուգահեռականի մոտ վորեե տեղ:

Հուլիսի 15-ի առավոտյան ժամը 2 և 31 րոպեյին մենք նորից ող բարձրացանք, ուղղություն վերցնելով գեղի Տօրոլսկ: Զանի կայարանի շրջանում հանդիպեցինք ամպրոպային հզոր ֆրոնտի: Գնում երինք սամուերի միջով: Միջին արագությունը կաղմում եր մի ժամում մոտ 300 կիլոմետր: Սկսվեց շատ խիստ թափահարում: Սավառնակն այնպիսի ուժով եր այս ու այն կողմ նետում, վոր սարքերը սխալ ցուցում երին տալիս, և նրանցով անկարելի յեր կողմնորոշվել: Դրությունը բարդանում եր: Պետք եր անհապաղ վճռել, թե ինչ անել այսուհետեւ: Կույր թոփչքը շա-

րունակել սարքերի աննորմալ դրության ոլայմաններում չի կարելի: Առանց թթվածնի վեր բարձրանալու — ինքնասպանություն ե:

— Շա՞տ կա մինչև Ուրալ, — հարցը ի բյանելին սկսն:

— Միքանի քոպեյից կհասնենք լեռնաշղթային պատասխանեցին նա:

— Խաղիովովմնացուցով բոնիր Սվերդլովսկը:

Յես վորոշեցի ցածրանալ, ամպերի տակով գնալ մինչև Սվերդլովսկ և այստեղ փորձել թռչելու լեռնաշղթայի վրայով: Սկսում ենք ցած գնալ: Կաթնամշուշը տարածվում ե մինչև գետին: Այսպես կարելի ցականը տափանին նույնիսկ նրան չտեսնելով: Տառացի 20 մետրի բարձրության վրա միայն մենք դուրս յեկանք ամպերից: Բրյանդինսկին վորսաց Սվերդլովսկի ուղիով փարուի ալիքները: Նա մեզնից գեղի խիստ հարավ եր գտնվում: Այս գյուտը նույնպես անխորժ եր: Դեպի Ուրալի մարզի կենտրոնը մենք պետք ե թռչեյինք բուն լեռնաշղթայի յերկարությամբ, ամեն բոլե ոխովի յենթարկելով մեքենան:

Թռչում ենք 15-20 մետր բարձրության վրա: Ներքեն անտառ ե: Ամենասաստիկ հեղեղ ե: Այնպիս ե թափահարում, վոր մեքենան համարյա ընկնում ե թերի վրա: Յերեաց յերկաթուղին, մեծ բակեր, շենքեր: Հետո ամեն ինչ անհայտացավ: Յերեսում ե մի քեր: Պատուի ամեն ինչ անհայտացավ: Վայրի բնույթը մի քիչ փոխվեց: Սկսեցին բլրակներ յերեալ: Դրանց հանդիպումն առանձին հաճույք չեր պատճառում: 400 կիլոմետր

բագության ժամանակ բարձրության հանդիպելը մեղ չեր հրապուրում :

Տեսանելիությունն անտանելի յէ. անձրեն ամեն ինչ փակել ե : Հանկարծ սավառնակի ճիշտ քթի առաջ յերեաց ռադիոմաշտան : Յես հաղիլ կարողացա մի կողմ թեքել : Ռադիոկողմնացույցը մեղ բերել եր ճիշտ դեպի հաղորդիչը : Կնշանակի՝ մենք Սվերդլովսկումն ենք : Բայց ո՞ւր ե աերոդրոմը : Աշխատելով վորոշիկներ, մենք թուչում ենք տների ճիշտ կտուրների վրայով : Դուրս յեկանք աերոդրոմ : Փոքրիկ հրապարակ, մեծ լճակներ : Գործում եմ մի շրջան, յերկրորդը, յերրորդը : Պետք ե իջնել . այս յեղանակին լիոնաշղթան չես անցնի :

— Սպասի՞ր, Վոլոդյա, շատ զպիկի տեղ ե ես-տեղ : Գնանք մյուս աերոդրոմը : Նա հեռու չե, — առաջարկում ե Բրյանդինսկին :

— Ո՞ւր թռչենք :

Շտուրմանը կուրս տվեց : Մի քանի րոպե հետո մենք պտտվում եինք յերկրորդ աերոդրոմի վրա դեպակով նրան, յես ցած իջա : Վորովհետեւ սավառնակի ամորտիզացիան առաջվա նման շատ կոշտ եր, ապա վորոշեցի անձանոթ աերոդրոմում իջնելիս արդեակներից չողութել : Սավառնակը շատ յերկար վաշեց, և պարզ եր, վոր աերոդրոմի յերկարությունը չի բավարարի : Առջեն արդեն ինչ վոր չենքեր յեին յերեւմ : Պետք եր գործել յերկրորդ շրջանը : Գաղ եմ տալիս : Սավառնակը կորվում ե դետնից, և աշա վերջին բողեյին մի բան շիկաց : Նշանակում ե ինչ-վոր բանի կապանք :

Անհանդիստ հայում եմ սարքերին : Պառույտները չեն իջնում : Հետեւարար, մատուցներն անվնաս են : Երակի շասսին ե վիասված : Հրամայում եմ Բրյանդիսկումն պարզել, թե բանն ինչումն ե : Նա վորում ե, նայում և գնելուցում :

— Ամեն ինչ կարգին ե :

— Վոտքե՞րը նայիր :

— Ամեն ինչ անվնաս ե : Միայն ճմլված և աջ մոտուի կարճ խողովակը :

— Ե՛ւ նայիր :

Մեքենան միմյանց հետեւց շրջաններ ե զործում աերոդրոմի վրա : Բրյանդիսկումն սավառնակի ստորին մասը դժուելիս քիչ ե մնում, վոր ցած ընկնի կարինից : Վոչ մի վնասվածք չի նկատված, շտուրմանը վոչ մի անհանգստացուցիչ բան չհայտաբերեց : Այնուամենայնիվ յես վորոշեցի վայրեջքը կատարել ցատ դժուշ, յերկյուղ կրելով շասսիի նենությունից : Հարկ յեղավ բացել վականները և միանդամից միացնել արգելակները : Սավառնակը նորմալ կերպով միջավ, մի քանի հարյուր մետր վազեց ու կանդ առավ :

Մոտ են վաղում կաշվե վերաբերույով մարդիկ՝ մինչև վերջին թելը թրջված : Մենք դուրս յեկանք, բարեկցինք և նույնպես իսկույն թրջվեցինք : Խնամքով զննեցինք սավառնակը : Վոչ մի վնասվածք չկախվապես ճմլված ե միայն աջ մոտուի կարճ խողովակը : Բատ յերեւլյթին գետնից կտրվելիս դեպիել և ինչ-վոր բանի : Մեքենայից չհեռացած, յես խնդրեցի առաջ ինձ յեղանակի քարտեղք : Ինձ հայտնեցին, վոր

թուչել չի կարելի։ Ուրալը համատարած ամպերով ծածկված ե մինչև դետին։ Իսկ յես, Նովոիրիբրուկից հեռախոսով խոսելիս խոստացա Մոսկվային յերեկոյան իջնել մայրաքաղաքի աերողը ուժում:

Մեղ առաջարկեցին դնալ քաղաք, հանդստանալ։ Մենք հրաժարվեցինք։ Մեղ տարան աերողը ուժում շտարի սենյակներից մեկը։ Բրյանդինսկին պառկեց մահճակալի վրա, յես՝ բազմոցի։ Յերկուսս ել հողանել ելինք, ուժասպառ յեղել։ Բայց վոչ կարողանում էնք քնել, վոչ ել պառկել։ Ի՞նչ հանդիսատ, յերբ սկսաք ե թուչել Մոսկվա։ Վերջապես մեկո մյուսին համոզեցինք մի ժամ պառկել։ Միքանի ըոպե հետո Բրյանդինսկին նայեց լուսամուտից և թեթևակի նկատեց։

—Կարծես թե պարզվում ե։

Ցես անմիջապես վեր թուա բազմոցից։ Անձրեն սոսաջլա նման թափում ե տեղատարափ։ Վոչ մի տեղ վոչ մի լուսավոր անցք։ Նորից պառկեցինք։ Հետո ինձ թվաց, թե դուրսը լուսանում ե։ Այսպես յուրաքանչյուր տաս բոպեն մի անգամ մենք վեր հյինք ցատկում և մոտենում պատուհանին։ Հետո իրար յերես նայեցինք, ծիծաղեցինք և վորոշեցինք։

—Զի հաջողվի հանդստանալ, դնանք աերողը ուժում։

Տեխնիկներն ուղղեցին կարծ խողովակը, դրեցին իր տեղը։ Բայց թուչել չեր կարելի։ Ամպերը հոծ պարկերի նման կախվել ելին յերկնքից, անձրեւը չըսուում եր անդաղար։ Յեղ հանկարծ մի տեղ մենք տեսանք թեթև լուսացում։ Յես վորոշեցի, վոր այնտեղ, վերև, կամ մաքուր յերկինք ե, կամ մի



շերտ : Յատկեցինք սավառնակ և թռանք ողի մեջ : Եուրջներս գտնվող մարդիկ ժամանակ չկտան նույնական բողոքելու : Ամպաշերտերի միջով ձեզքելով, մի քանի կիլոմետր բարձրություն վերցրինք : Մեզ համար կարեորը վեր բարձրանալն եր : Լեռնու վայրում կուրորեն բարձրություն վերցնել չի հանձնարարվում :

Բարձրանալով 4500 մետր, կուրս վերցրինք դեպի
Արևմուտք: Ամպերի մեջ անցանք Ուրալը: Յեվրո-
պական հարթավայրի վրա յեղանակն ավելի բարե-
նպաստ էր: Փչում եր ուժգին, համընթաց քամի:
Ճեղքերի միջով տեսնում եյինք գետինը: Մի ինչ՝ զոր
փոքրիկ քաղաք յերևաց: Բըյանդինսկին անմիջապես
դիմի ընկալ: Եյդ Վյատոկիյն Պոլյանին եր: Ժամը 16
L. 10 բուեյին անցանք Կավճանը: Այնտեղից կուրս
վերցրինք դեպի Մուկլա: Արզամատից Ալքասանդր
Մատվեյեվիչը հեռագրեց.

— Հույս ունեմ ժամը 18 և 22 րոպեյին լինել
Մոսկվայում:

Վլաղիմիրի մոտ աջ մոտոռն անսպասելի կանգ
առավ: Մինչև Մուկվա մնում եր 180 կիլոմետր: Ա-
նախորժ բարդություն: Իհարկե, սավառնակը մի մո-
տոռով ել կհացնի վերջին կետին, բայց ուշացումով
տեղ կհասնի: Կատակներ ե անումնակ ձախ մոտո-
ռը: Հանկարծ, նույնպես անակնկալ, աջ մոտոռն
սկսեց աշխատել, իսկ ձախը համարյա ամբողջովին
կանգ առավ: Հետո աջ մոտոռը նորից դադարեց:

Սրա աշխատանքը դեռ դեպի Արևելք թուիչքի վերջում ինձ դուք չեր գալիս։ Խարարովսկում հարկ



յեղավ փոխելու շարժիչի մի մասնիկը, վոր վէացած եր: Նովոստիբիրսկում շարժիչի չուրջը յես հրավիրեցի տեխնիկական մասնագետների մի ամբողջ կոնսիլիում: Յեկ ահա այժմ նա, այնուամենայնիվ, խաբեց:

Հարի յեղավ նվազեցնելու պտույտները, պակասեցնելու արագությունը: Արագորեն հաշվելով ճանաւրահին ընկած աերոդրոմների դիլքը, յես սկսեցի տուաջանալ հրապարակից հրապարակ: Վերջին տասնյակ կիլոմետրներն մենք դնում եյինք զիգզագներով: Այսպես քարշ տվեցինք մինչև Շչելկովո: Մոսկվայից մենք բաժանված եյինք միքանի ըոսեյի թուիչքով: Այնուամենայնիվ, յես չվորոշեցի թուչել ուղիղ այնտեղ: Մենք գնացինք միջանկյալ աերոդրոմի վրայով: Եյնտեղ աջ մոտոռը յերրորդ անդամ ընդհատվեց: Բայց սրա փոխարեն այն ըոսեյին, յերբ սավառնակը մոտեցավ ֆրունզեյի անվան կենտրոնական աերոդրոմին, շարժիչը նորից աշխատեց:

Հուլիսի 15-ի ժամը 18 և 30 րոսեյին մենք վայրեցի կատարեցինք: Ճանապարհն ավարտված եր: Մայրաքաղաքի աերոդրոմում մեղ կաղմակերպել եմին հանդիսավոր դիմավորում: Հուլիսի 18-ին ի պատիվ մեղ ընդունելություն եր սարքած ընկեր Մոլոտովի ամառանոցում: Այնտեղ ներկա եյին ընկերներ Ստալինը, Կազանովիչը, Վորոշիլովը, Կալինինը, Ժողովրդական կոմիսարները, Խորհրդային Միության հերոսները, ավիացիոն կոնսոլիդումները:

Միքանի որ հանգստանալով, մենք դիմեցինք մեր սովորական աշխատանքին: Յես վրաղվեցի նոր սա-

վառնակների փորձարկումով: Բրյանդինսկին դործությունը դում գնաց: Իսկ յերկու ամիս մենք իմացանք, դում վարչությունը: Արագությունը մասնակին զոհվել վոր Ալեքսանդր Մատվեյեվիչը Բրյանդինսկին դում վել կատարելու պարտականությունները կատարելում:

Ծանր, շատ ծանր եր լուկ այս սարսափելի լուրը: Բնկավ մի սքանչելի մարդ՝ նվիրված կուսակցությանն ու իր ժողովրդին, կյանքից հեռացալ թոփչունիքին դործի հոյակապ վարպետը, հրաշալի մարդն ընկերը: Մահը նրան վրա հասավ ջահել հասառու ընկերը: Այս կյանքը չեր պատկերացնում երեն սուազիայից դուրս, սիրած դործից դուրս:

Վորբերդական մի գեղղ կորեց սքանչելի կյանքը: Եերեք այլևս Ալեքսանդր Մատվեյեվիչը կուրս չի տա խորհրդային սավառնակներին, խորհրդային մետաղները չի տանի ողային անափ ուղիներով: Բայց քենաները չի տանի ողային ավլիացիան, չն մարել խորենդանի յե խորհրդային ավլիացիան, չն մարել խորենդանի ողաչուների ու շուրջանների ուժերը: Հըրդային ողաչուների ու շուրջանների ուժերը: Մենք մեր հզոր յերկրի սավառնակները կվարենք նույնպիսի ծառությամբ, արվեստով ու անձնվեր նույնպիսի ծառությամբ, ինչպես վարում եր Խորհրդային ինքախությամբ, ինչպես բրիդադի հրամանատար Ալեքսանդր Միության շերու, բրիդադի հրամանատար Ալեքսանդր Մատվեյեվիչը Բրյանդինսկին:

Ավելացիան ՎԱՐԴԱ

Ինձ հաճախ հարցնում են ավլիացիայի դարձացման հեռանկարների մասին, խորհրդային սավառնակների հարավորությունների մասին: Խորհրդային աս-

զիացիոն արդյունաբերության և խորհրդային սահմանակազմության նվաճումները հսկայական են: Այն, ինչ յերեկ անկարելի յէր թվում, այսոր դառնում եւ կատարված փաստ:

Դեռ յերեկ վիթխարի արագություն եր թվում մի ժամում 250—300 կիլոմետր թռիչքը: Այժմ սահմանակները մարտական լրիվ բնոնավորումով թըռչում են մի ժամում 400—500 կիլոմետր: Ամենամուտապահյում մենք վկաներ կլինենք մի ժամում 600—700 կիլոմետր արագության:

Աճում են նաև թռիչքի բարձրությունը: 1937 թվին անգլիացի ողաչու Ագամսը թռիչքի բարձրության միջազգային ռեկորդ սահմանեց, թռչելով 16640 մետր: Խորհրդային ավիացիոն տեխնիկայի վիճակը հնարավորություն եւ տալիս գերարանցելու Աղամսի ռեկորդը, և այն ել շատ զգալի կերպով: Առաջիկա մեկ-յերկու տարում սահմանակները կհասնեն 18—20 կիլոմետր բարձրության: Ստրատոսֆերա կրաքարանն վոչ միայն յեղակի ռեկորդային սավառնակներ, նրան կնվաճեն նաև տրանսպորտային մեքենաները: Յսո գտնում եմ, վոր մոտ ժամանակներա տրանսպորտային սավառնակները կթռչեն մի քանի հարկերով: Ամենից բարձր (14—15 կիլոմետրից այն կողմ) կղնան փոստային մեքենաները, վորոնց սովորաբար սպասարկում ե մի ողաչու: Ողաչուին շատ ավելի հեշտ ե սովորեցնել ողաչուի թթվածնային սարքից, քան ճամբորդին: Նրանք նամակներ ու լրացրեր պիտի տեղ հասցնեն մի ժամում 600—700 կիլոմետր արագությամբ: Մի քիչ ավելի քածր կթռչեն հզոր բեռ-

նատար սավառնակները: Սարքավորված հատուկ բարձրաթիռ մոտոռներով, նրանք հսկայական արագությամբ զանազան բեռներ կփոխադրեն յերկրի մի ծայրից մյուսը, մի պետությունից մյուսը: Եւ ավեծայրից մյուսը (10—12 կիլոմետր) կթռչեն ճամբորդական մեքենաները հերմետիկ կարինով, վորը մարդկանց մեկուսացնում ե նոր մթնոլորտի աղդեցությունից: Սրանց արագությունը նույնակես կհասնի մի ժամում 600—700 կիլոմետրի: Վերջապես յերեք-չորս կիլո-մետր բարձրության վրա կթռչեն սովորական տիպի ճամբորդական մեքենաները: Բայց նույնիսկ այս բարձրության վրա ել ողային տրանսպորտի շահագործումը շատ ավելի ճեղստու կլինի, քան այժմ:

Միքանի տարի առաջ Մոսկվայից Հյուսիսային Ամերիկա անվայրելք թռիչքները թվում եյին տեխնիկապես անկարելի: Զերովի ու Գրոմովի փայլուն թռիչքները ցուցադրեցին անդրբենուային կապի կառուցները Խորհրդային շատ բեկուառարելապես ռեալ վիճակը: Խորհրդային շատ բեկուային ողաչուներ իրենց հոգվածներում նշել են, վոր հեռու չե այն ժամանակը, յերբ խորհրդային հերոսների բացած ճանապարհով կկարողանան գնալ ճամբորդական ու փոստային տանյակ սավառնակներ: Սառուցյալ ովկիանոսի կղզիներում կառաջանան միջանկալ աերոդրոմներ բենդինի բազաներով, նորոգման արհեստանոցներով ու ճամբորդների հյուրանոցներով:

Կանոնավոր ողային զիծը առեւրական ճեղստակություն ե: Անվայրելք թռիչքը պահանջում ե վառելանյութի հսկայական պաշտը: Այսպիսի թռիչքի

ժամանակ սավառոնակն ի վլիճակի չի լինի ճամբորդներ
վերցնելու կամ³ շատ բեռ : Ավելի շահավետ կլինի
ճանապարհը բաժանել մի քանի մասի, վրայինզի,
մեքենան ջնարաբեռնելով վառելանյութի մեծ պա-
շարով, փոխադրի առևտրական բեռ : Հետևաբար
հարկավոր են միջանկյալ բաղաներ :

Այս տեսակետից մոտենալով՝ անդրբնեռային ուղային կանոնավոր հաղորդակցության կազմակերպմանը, շատերը յևնթաղբում են, թե Մոսկվան Հյուսուսային Ամերիկայի հետ միացնող ճանապարհն էր: Ամենահարմար ճանապարհը յերկու ցամաքների միջև ըստու կամաց հարաբերականության էր: Ամենահարմար ճանապարհը յերկու ցամաքների միջև ըստու կամաց հարաբերականության էր:

Տեխնիկայի ներկայիս զարգացման պայմաններում
և ըեւով յուրացման ներկա փուլում մշտական բա-
ղայի կազմակերպումը Հյուսիսային բնեուում հնարա-
վոր ե: Խնդիրը կարող է լուծվել մի քանի յեղանա-
կով: Կարելի յե կազմակերպել Պապանինի եքսպեդի-

Բենոային ավազանի վրայով թաշելու ողերսու-
թարանական պայմանները միանդամայն գոհացուցիչ
են: Հարկադրական վայրեջքի գեպքում բենում կան
բավականաչափ հարթ ու համեմատաբար հարմար
սառցադաշտեր: Ինչպես հայտնի յե, Հյուսիսային
բևեռ կատարած ողային եքսպեդիցիայի ժամանակ
խորհրդային սալամակները 13 վայրեջք են կատա-
րել սառցի վրա: Բոլոր վայրեջքներն ել բարե-
հաջող են անցել:

! 1. «Անբովութիւն» կանոնավոր գծով։ Խարարովսկից մինչև Անաղիր յերբեմն թռչում են բեեոային ավեացիայի սավառնակները։ Այս ուղեմասը պետք է մեայն սարքավորել փարոսներով, աերոդրոմներով, չյուրանոցներով։ Մնում է յուրացնել Անաղիրից մինչև Նոմ Ալյասկայում համեմատաբար փոքրիկ ուղեմասը, վորը, ինչպես հայտնի յէ, ավելի կամ պակաս կանոնավոր գծով կապված է Խաղաղ ովկիանոսի հյուսիսմերձիւ ափերի մնացած կայանների հետ։

Յես անձամբ ալիքի նպատակահարմար եմ գըտ-
նում Մոսկվայի և Նյու-Յորքի միջև ճանապարհ
գցել Սկանդինավիայի, Իսլանդիայի, Գրենլանդիայի
և Ատլանտյան ովկիանոսի վրայով։ Ինչպես հայտնի
յէ, Յեվրոպայի և Ամերիկայի միջև սավառնակներով
սղային կանոնավոր հաղորդակցություն կաղմակեր-
պելու բոլոր փորձերը մինչև այժմ անհաջողություն
են կրել։ Ավեցիայի պատմությունը գիտե Ամերի-
կայից Յեվրոպա թռչելու շատ դեպքեր, բայց հա-
կառակ ուղղությամբ կատարված համարյա բոլոր
թռիչքներն անհաջող են յեղել։ Սրան խանգարում են
արևմուտքից դեպի արևելք փչող մշտական, շատ
ուժզին քամիները։ Այնուամենայնիվ ներկայումս յես
միանդամայն իրադոճելի յեմ համարում անվայրեցք
թռիչքը Ատլանտյան ովկիանոսի վրայով արևելքից
արևմուտք դեպի Հյուսիսային Ամերիկա, ընդլուրում
գոչ թե Արևմտյան Յեվրոպայից, այլ Խորհրդային
Միությունից՝ Մոսկվայից։

Մոնղոլայի և Հյուսիսային Ամերիկայի հեռավորությունը 7000 կիլոմետր է։ Հիշեցնենք, վոր

«Մոսկվա» սալվառդակը Հեռավոր Արևելք թուչելին անցավ ավելի քան 7600 կիլոմետր (չհաշված դեպի ուղիանոս թուչքը) և կարող էր թռչել 7—800 կիլո-մետր ել: Ավելի շատ վառելանյութ վերցնելով և բարձրացնելով, ամբողջ ճանապարհը կտևի մոտ մի որոշողիչը:

Այս թոփչքի, նրա նախապատրաստության ու
առաջարկման մասին մեր տպակորությունները մենք
ունեն կպատմենք հետո:

Խորհրդային ավելացիոն տեխնիկայի արդի վիճակը թույլ է տալիս ուղած բողեջին իրադրժելու կը թույլ է տալիս ուղած բողեջին իրադրժելու և այսպիսի վիթխարի անվայրեջք թուիչքներ, ինչ- ու այս, ասենք, Մոսկվայից Աֆրիկայի և Աստրանտյան աջես, ասենք, Մոսկվայից Աֆրիկայի և Աստրանտյան գվկիանոսուի վրայով Հարավային Ամերիկա կամ Մոսկ- վայից իրանի, Հնդկական ովկիանոսուի ու Ավստրալի- այի վրայով Թասմանիա թուիչքը: Այս թուիչքների յերկարությունը մոտ 10000 կիլոմետր է:

Դեռևս 1934 թվին Խորհրդային Միության Հերոս Գլուխը, ողաչուներ Սպիրինի ու Ֆելինի հետ միա-ումուվը, ողաչուներ ՏՅ ժամ մնաց ողում, ոին, NO-25» սակառնակով 75 ժամ մնաց ողում,

այս ժամանակամիջոցում անվայրեջք կտրելով՝ 12411
կելումետր։ Խորհրդային ժամանակակից ավելացիոն
արդյունաբերությունն ի վիճակի յե խորհրդային ու-
ղաչուների տրամադրության տակ գնելու այնպիսի
մեքենաներ, վորոնք ավելի բարձր հատկություններ
ունեն, քան «NO—25» սավառնակը։

Վերջին ժամանակներս մեծ ուշադրություն ե-
ւարձվում ողի մեջ վառելանյութը լրացնելով թոփչք-
ներ կատարելու վրա։ Առաջուց պայմանավորված
տեղում ույսային սավառնակին ընդառաջ բարձրա-
նում ե մի այլ մեքենա, վորն իրենից ներկայացնում է
թռչող ցիստերն։ Յերկու մեքենան ել գնում են մեկը
մյուսի վրայից մի ուղղությամբ ու միատեսակ արա-
գությամբ։ Ցիստերն սավառնակից իջեցվում և
կաշեփող, վորը բռնում ե ներքեից զնացող ույսային
սավառնակը։ Բենզինը լցնելուց հետո կաշեփողը քաշ-
վում ե, ցիստերն սավառնակը վերադառնում ե իր
բաղան, իսկ յերկրորդ մեքենան շարունակում ե իր
ճամբան։

Վառելանյութի պաշարը լրացնելու այս յեղանա-
կը վերին աստիճանի հրապուրիչ հեռանկարներ ե բա-
ցում, թեորիապես հնարավորություն ներկայացնե-
լով առանց վայրեջքի թուչելու տասնյակ և հարյու-
րավոր ժամեր։ Դեռևս 1936 թվին հայտնի բարձրա-
բիո ողաչու և պարաշյուտիստ Վիկտոր Յեկեյևը
«Պրավդա»-ի եջերում հանդես յեկավ, կոնկրետ առ-
ուաջարկելով կազմակերպել սավառնակի անվայրեջք
թոփչք ԽՍՀՄ արևմտյան սահմաններից մինչև Զու-
կոտկա և հետ՝ վառելանյութն ողում լրացնելով



Խորհրդային Շիուլյան հերոս, Երկրաբան, համամատառը, ԽՍՀՄ բնակչության մոլորդը կազմակերպել նախորդների կողմանը

առաջուց վարչութած մի քանի տեղում։ Այսպիսի առաջարկի իրազորդումը հնարավորություն կտար անվայրեցք թուչք կատարելու մինչև 20000 կրոմեալը տարածության վրա։

Ներկայումս միանդամայն ունալ ե յերկրագնդի շուրջն անվայրեցք թուչք կատարելու միտքը՝ վառելանյութը լրացնելով ողում։ Մոսկվայից դուրս յեկած ստվառնակը վառելանյութով կարող ե լրացվել, դիցուք՝ հարաբովակում, Ֆերենցիում Ալյասկայում, Նյու-Յորքում, անվայրեցք կորել անցնել Ալյանտյան սկիֆիանուր, Արևմայան Յեվրոպան և իջնել Մոսկվայում։ Շուրջերկրյա թոփչքն այսպես կազմակերպելով կտնտեսվի բավականաչափ ժամանակ, զոր սովորաբար ծախսվում ե ճանապարհին իջնելու և վառելանյութ վերցնելու համար։ Սավաննակին վառելանյութ տալը հնարավորություն ե ըստեղծում նմանապես իրականացնելու հետևյալ մարդուտով թոփչքը։ Մոսկվա—Լոնդոն—Փարիզ (Յերապա)՝ Կալչտադ (Աֆրիկա)՝ Սիդնեյ (Ավստրալիա)՝ Հոբն Հրավանդան (Հարավային Ամերիկա)՝ Ռիո-դե-Ժանեյրո—Նյու-Յորք—Չիկագո (Այլասիկա)՝ Պետրոպավլովսկ—Կամչատկայում (Ասիս)՝ Մոսկվա՝ այսինքն աշխարհականից վերաբերի վրայով։

Եւ ավելի հրապուրիչ ե յերկու բեկոների վրարով շուրջերկրյա անվայրեցք թոփչքը։ Այս մարդուտան, որինակ, հետևյալը կարող ե լինել։ Մավաննակը Մոսկվայից թուում ե Հյուսիս։ Ռուսութափանակութական կատարելու վերաբեր առաջին անդամ վառելանյութ ե ստակառու վերաբեր առաջին անդամ վառելանյութ։

նում թուչող ցիստերնից։ Հետո սավառնակը թուում է Հյուսիսային բեկոփ վրայով և կըկին լրացնում է վառելանյութի պաշարը Ալյասկայի գլուխին։ Եերվառելանյութի պատերը անդամ վառելանյութ ե ստանում Կալիֆորնիորդի կամ Մեքսիկայի գլուխին։ Գնալով գեղի հարավ, այլի կամ Մեքսիկայի գլուխին։ Գնալով գեղի հարավ, անդամ վառելանյութը կամ Սարսավային Ամերիկայում, վորտեղից ճանանում Հաբավային Ամերիկայում, վորտեղից ճանանում պարհը շարունակում ե Հաբավային բեկոփ վրայով պերհը շարունակում է Հաբավային բեկոփ վրայով կամ դեպի Նոր Զելանդիա, կամ դեպի Ավստրալիա։ Իսկ այստեղից մինչև Մոսկվա արդեն . . . ձեռքդ մեկնես կհամնի։

Սակայն ժամանակակից տեխնիկան հնարավորություն ե տալիս շուրջերկրյա անվայրեցք թոփչք կատարելու նաև առանց ողում վառելանյութը լրացնելու։ Մեր ժամանակի մեծ ողաչու Վալերիյ Պավելիքի Զկալավը յերազում եր արագության համաշխարհային ոեկորչություն թուում պաշելով «գնդիկի» շուրջը, ինչպես նաև կատակով անվանում եր մեր մոլոջը, ինչպես նաև կատակով անվայրեցք ճամբարութակը։ Այսպիսի արագընթաց անվայրեցք ճամբարութակը կարելի յե իրականացնել հատուկ կադությունը կարելի սականակով սարքավորված հերմետիկ շուրջված սավառնակով։ Թոփչքը պետք ե կատարվի մոտ 10000 կարինով։ Թոփչքը պետք ե կատարվի մոտ 10000 մետր բարձրության վրա, վորտեղ վաչ մի ողերեցութաբանական խոչընդուռ չի կարող խանգարել վորտեղաբանական խոչընդուռ չի կարող խանգարել անձնակազմին սավառնակը վարելու ճշգրիտ նշված ուղիով։

Անվիճելի յե, զոր մոտ տարիներս մենք վկայենք լինելու նոր տիպի ավելացնուն շարժիչի կիրառութափանական ինչընդուռ չի կարող խանգարել վորտեղաբանական խոչընդուռ չի կարող խանգարել անձնակազմին սավառնակը վարելու ճշգրիտ նշված ուղիով։

այս թվում նաև անչափ ակահությունը, դյուրա-
գառությունը և այլն; Երան փոխարինելու յեն գտնիս-
արդեն գիշելի չարժիշները, չպու և դաղի տուրբին-
ները; Սրանք մի չարժիշնոր առավելություններ ու-
նեն ներկայումս ընդունված տիպի չարժիշի համեմա-
տությամբ և, անկասկած, նրան դուրս կմղեն ար-
ագրությունից:

Խորհրդային Միությունն ունի աշխարհի լավա-
գույն սավառնակները, ավելացիոն կոնսորտիոնների,
ոլուչուների, շառուրմանների, մեխանիկների հիմնալի
կալբրեր; Ամբացնելով խորհրդային ավելացիայի կա-
րողությունն ու ուժը, սոցիալիստական պետության
ողաչուներն անդադրում պիտի աշխատեն՝ ողի մեջ
լացելով Ստալինյան նորանոր մարզուտներ:

«Մոսկվա» սավառնակի թուիչքը Մոսկվայից Հե-
ռավոր Արևելք ցույց ավեց, վոր խորհրդային սավառ-
նակներն ի վիճակի յեն առանց վայրեջքի կտրելու
մեծ տարածություններ, ամենակարճ ժամանակամի-
ջոցում իրար միացնելու Խորհրդային Միության հրո-
կայական տերիտորիայի ամեն մի վայր: «Մոսկվա»-
յի թուիչքների հաջողությունները, ինչպես և Զկալովի
ու Գրոմովի անձնակազմերի անդրբեկուային թուիչքնե-
րը վաս կերպով ցուցադրեցին խորհրդային ավելացիոն
արդյունաբերության հոկայական նվաճումները:
Նյութական մասը, մոտոռները, ամբողջ ավելացիոն
ապրավորումը, վոր պատրաստված և խորհրդային

գործարաններում, աշխատում են հասուեկ, ճշգրիտ,
հուսալի, անմերժ:

Խորհրդային ավելացիան ահեղ ուժ է: Ճապոնա-
կան զավթիչները, վորոնք կոփիվներ հրահրեցին Խա-
ռան լճի ըրջանում, սրանում համոզվեցին իրենց սե-
փական կաշվի վրա: Յեվ ամեն մի այլ թշնամի, ով
կփորձի ստուգել Խորհրդային Միության գործությու-
նի և վորքան ել հեռու գտնվի:

Մոսկվայում «Ռոդինա» սավառնակի անձնակազմի
հետ ունեցած հանդիպման ժամանակ ընկեր է. Մ.
Կազանովիչը ասել է:

«Մենք ըրջապատված ենք կապիտալիստական
յերկրներով, վորոնց մեջ կան ծայրահեղ աղբեսիկ
ֆաշիստական տարրեր, վորոնք պատերազմ են
հրահրում մեր դեմ: Հատկապես սրա համար ենք
մենք հոգ տանում, վոր մեր սավառնակները թրո-
չեն հեռու և բարձր: Մենք հավակնություն չունենք
ուրիշների հողերի նկատմամբ, բայց յեթե վորեկ
մեկը հանդինի հավակնել մեր հողի դեմ ամենա-
փոքրիկ կտորի նկատմամբ, առա մենք կկարողա-
նանք վրա հասնել նրան մեր սավառնակներով և
ամեն մի աղբեսորի հետ քեզ մեր խորհրդային ուր-
բազան հողից: Ահա թե ինչու յենք մենք ձգտում,
վոր մեր սավառնակները թուիչն հեռու և բարձր:
Մենք ուզում ենք, վոր մեր սավառնակները թուիչն
արագ, վորպեսզի թշնամին, վորը կհանդինի վոտք

կոխել մեր հողի վրա, վոչչացվի իր իսկ սեփական ուրիտորիայում»:

Այս խոսքերով սպառիչ լրիվությամբ տրված ե խորհրդային ավիացիայի խողեների զնահատականը և նշված են խորհրդային սավառնակաշինության զարգացման ուղիները։ Մենք պետք ե ամեն բողք պատրաստ լինենք պաշտպանելու սոցիալիստական հայրենիքի սրբազն սահմանները։

Խորհրդային ողաչուները, ինչպես և ամբողջ Խորհրդային յերկիրը, հիշում են ԽՍՀՄ պաշտպանության ժողովրդական կոմիսար, Խորհրդային Միության մարշալ Կ. Յ. Վե. Վորոշիլովի ճառը՝ արտասահմած 1938 թվի հոկտեմբերյան զորահանդեսին կարմիր հրապարակում։

«... Իսկ յեթե Խասան լճի ակնառու դասերը բավական չեն, յեթե թշնամին ի վեհակի յէ մոռանալու խորհրդային զենքի ջախջախիչ ուժն ու կարմիր մարտիկների և նրանց հրամանատարների հերուսությունը, մենք նրանց պետք ե ասենք. պարոնայք, այն, ինչ դուք ստացաք Խասանում— դա դեռևս «ծաղիկներն» են, իսկ «պատուղները», իսկական «ուշագույնները» դեռ առջելուն են։ Յուրաքանչյուր ահանգնիստ կամ լկոի թշնամի, միհնույն ե, թե վորակել և յերբ նա համարձակվի իր քիթը խոթել մեր հողը, հարկ կդառ ճաշակելու այս խորհրդային «ուշագույնները»։ Թող հիշեն նրանք, ով չպետք ե մոռանա, վոր մենք ամենեն սպարտավոր չենք մեր գորքերի գործողությունները սահմանափակել այն շըստանով, վորի վրա գողաբար ու լկուրեն հարձակ-

վում ե թշնամին։ Ընդհակառակը մեղ ավելի հարմար ու հեշտ ե թշնամուն ջախջախել իր սեփական տերիտորիայում։ Յեվ այսպես ել կլինի— յուրաքանչյուր հարձակման ու հարվածի մենք կպատասխանենք մեր փառապանծ կարմիր Բանակի ամբողջ ուրության յեռապատիկ հարվածներով»։

Խորհրդային ողաչուներն ու խորհրդային սպառնակները վրա կհասնեն թշնամուն յերկրագնդի սպին մի վայրում, լիուլի «պտուղներ» կհասցնեն այնակաղ, վորտեղ կհրամայեն կուսակցությունն ու կառավարությունը։



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|----------------------------|-----|
| Ավետիքիան այսոր | 3 |
| Ստալինյան ուղեգոռով | 17 |
| Թոփչըլ | 32 |
| Կուրս զետի Աբեկելը | 47 |
| Սերբիրի տունդրայի վրայով | 60 |
| Գիշերը տմուշը վրայով | 71 |
| Դեպի Խաղաղ ովկիանոսի ափերը | 80 |
| Վերապարձ | 100 |
| Ալիացիայի վազվա որը | 121 |

Թարգմ.՝ Մ. Զաքարյան

Պատմագիր

Հ. Դոնոյան

Տեխնմթագիր

Լ. Ռազարյան

Սրբազրիչներ

Հ. Մանուկյան

Ավագյան

Դաշվետի լիազոր, Զ-1089 Հրատ 5100

Գատվեր օ29. Տիրագ 3000

Հաճախաժան թյան 15|XII 1839 թ.

Ստորագրված և տպագրութ. 21|II 1840 թ.

Գետքատի 1 տպարան, Ցերեան, Անդին 65

230¹9

7

5

ՀՀ Ազգային գրադարան



NL0299293

24.474

200